

Գ. ՊԵՏՐՈՎԱ



# ՀԻՆ ԱՍՏԱՆ ՅԱՊՈՆԻԱ

ՅԵՎ



308

Դ - 50

ԽՍՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՄԱՆԱԿՑ. ՄՈՍԿՎԱ, 1931

JUL 2013

1 DEC 2009

Վ. ՊԵՏՐՈՎԻ



# ԶԻԿԱՍԱՆ

ՅԵՎ

# ՅԱՊՈՆԻԱ

ԹՐԱԿ III.

Գետ. գ' ու նորհրդի Մանկավարժական  
Սեկցիայի թույլտվությամբ — I աստ.  
ղպրոցների համար:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌԻՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1931

ԱՐԱՋԱՐԱՆ

Ներկա պլրակը, նախընթացների որինակով\*, կազմված ե  
յերկու տիպի հողվածներից. մի մասը, ավելի թեթևները,  
նշանակված են Ա աստիճանի դպրոցականների ինքնուրույն  
ընթերցանության համար, մյուսները, ավելի դժվարները  
(«Բանվոր դասակարգի դրությունը Յապոնիայում», «Յա-  
պոնական գյուղացիները», և այլն), պետք ե նյութ  
ծառայեն ուսուցչին — դասարանում պատմելու համար։  
Այդ գլուխներից ուսուցիչը կտա իր խմբակին միայն այն,  
ինչ վոր նա նրանց ուժերին մատչելի կգտնի։ Դասարա-  
նում մշակված հողվածները կարող են հետազում նյութ  
ծառայել աշակերտների ինքնուրույն աշխատանքների հա-  
մար, ըստ առանձին առաջադրանքների։

Այլ հեղինակներից վերցված գըական նյութերը կը ճատ-  
ված և պարզեցված ձևով են բերված:

47

Главлит № А-89.167 Заказ № 979 Тираж 4.000  
Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,  
Шлюзовая набережная, 10



\* Մեր հրատարակ. լույս են տեսել նույն հեղինակի — 1) «Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, 2) «Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ».

## ԶԻՆԱՍՏԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ԶԻՆԱՍՏԱՆԻՆ  
ՆՎԻՐՎԱԾ ՅԵՐԵԿՈՒՅՅԹ

Մինչև վոր Կոստյան և Կոլյան ճանապարհորդում եյին արեմտյան յերկրներում, նրանց դպրոցական ընկերները այդ միջոցին ժամանակը իզուր չեյին կորցնում։ Ոգոստ 15-ից վերմկսեց իր աշխատանքը 4-րդ խմբի «Հինական խմբակը»։ Այդ խմբակը կազմակերպված եղ 1927 թ. գարնանը, յերբ Մոսկվայում տեղեկություններ եյին ստացվել հեղափոխական շարժման ուժեղացման մասին։ այդ հեռավոր արևելյան յերկրում։ Տասնի չափ յերեխաներ, վորոնք շատ եյին սիրում կարդալ ոտար յերկրների ու ժողովուրդների մասին, ցանկություն հայտնեցին սարքելու իրենց դպրոցում «Հինական անկյուն»։ Ուսուցչուհին մեծ պատրաստակամությամբ ոգնեց նրանց։ Իմանալով, վոր Կոստյան ու Կոլյան շուտով վերադպնալու յեն արտասահմանից և իրենց հետ բերելու յեն շատ պատմություններ յերապական կյանքից, Հինական խմբակի նախագահունի Մաննիկը մտադրվեց սարքել մեծ յերեկույթ ամբողջ Լ աստիճանի համար և այդ յերեկույթի ժամանակ սարքել ցուցահանդես վոչ միայն յերապական յերկրներին և Ամերիկային վերաբերյալ, այլ և ասիական յերկրներին։ Ըսկերները խորհուրդ տվին նրան առա-

ջարկել աշկոմին, վորակեսզի այդ հանդիսավոր յերեկույթը սարքվի աշնան սկզբին և այդ յերեկույթին հրավիրվեն մյուս դպրոցների յերեխաների և ծնողների պատգամավորությունները։ Վերջի վերջո վորոշվեց հյուրեր հրավիրել նաև անխնամ յերեխաների հարկան ակումբից։

Ուրախ զվարթ աղմկում եյին տասը փոքրիկ «Հինաստաները» (այդպես եյին կոչում չինական խմբակի անդամներին նրանց խմբակիցները), զագվելով զպրոցի դեռևս դատարկ սենյակներով։ Նրանք պատրաստվում եյին յերեկույթին և ծավալում եյին իրենց ցուցահանդեսը։ Ամենից առաջ, իհարկե, կախ տվին պատից Զինաստանի մեծ, գունավոր քարտեզը։

Քարտեզի տակ փակցրին փոքրիկ բացատրություն, վորը գրված եր չուստրիկ, կապուտաչյա Հոփիսիկի մանր ձեռագրով։ Հոփիսիկը այնքան ել ջանասեր աշակերտունի չեր, բայց շատ եր սիրում խորագրել պակատներն ու դիագրամները և հպարտանում եր իր գեղեցիկ, պարզ ձեռագրով։ Այս անգամ նա վոչ միայն արտագրել եր մի քանի խոսք աշխարհագրության դասագրքից, այլ և իրանից ել ավելացրել եր յերկույթի ֆուզ, վոր կարդացել եր գրքերից։

---

«Զինաստանը յերկրադնդի ամենամեծ պետություններից մեկն եւ, նա ահազին տարածություն ե բունում Ասիայի հարավ-արևելյան մասում։ Ամենահին ժամանակներից նա բաժանվում ե Արտաքին Զինաստանի և Ներքին Զինաստանի։ Վերջինս բաժանվում է Հյուսիսային, Միջին և Հարավային Զինաստանի։

Ներքին Զինաստանը կոչվում ե յերեմն «18 նահանգներ», վորովհետեւ նա բաժանված ե 18 նա-

հանգների։ Շատ հին զարերում Զինաստանի այս  
մասը բաժանված եր մնացած ամբողջ աշխարհից մի  
զարմանալի կառուցվածքով — Զինական Մեծ պատով։  
Այդ կառուցվածքը տարածված եր հազարավոր կիլո-  
եյն ուղղմակետեր և յուրաքանչյուր 20 մետրի վրա  
բարձրանում ելին պահակային աշտարակներ։ Այդ  
ահագին պատը պետք ե պաշտպաներ։ Եթե տանը  
վայրենի քոչվորների գրոհներից։

— Ալեքսանդրա Պավլովնա, յես պատրաստել եմ զե-  
կուցում չինական գյուղացիների մասին — հայտարարեց  
Մաննիկը։ — Ուզում եք, կարդամ ձեզ,

— Ինարկե, կարդա: Իսկ հետո մենք քեզ կոգնենք  
նկարներ ջոկել այդ զեկուցման համար։

Աշխատանքից յետ մնացած լինելով ամառվա ընթաց-  
քում, յերեխաները այնքան ել ախորժակով չնստեցին  
Մաննիկի զեկուցումը լսելու։ Բայց և այնպես լսեցին  
նրան ուշադրությամբ մինչև վերջը, վորովհետեւ շատ  
ելին ուղում ցույց տալ կոստյային և կոլյային, վոր  
թեև իրանք արտասահման չեն գնացել, բայց և այնպես  
յետ չեն մնացել ոտար ժողովուրդներ ուսումնասիրելու  
գործում։

— Ալեքսանդրա Պավլովնա, ինդրեմ չկարծեք, վոր յես  
ինք եմ հորինել այս բոլորը, Յես միայն շարահյուսել  
եմ Սավելյեվի «Զինաստանի գյուղացիները» անունով  
շատ թեթև գրքույիլը, — ասաց Մաննիկը և սկսեց  
կարդալ։

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ  
(Հայ Սավելյեվի)

Գյուղացիների թիվը Զինաստանում հասնում է մոտ  
350 միլիոնի։ Աշխարհիս յերեսին՝ չկա մի այլ յերկիր, ուր այն-  
քան շատ և այնքան խիտ գյուղացիներ ապրեն, ինչպես Զի-  
նաստանում։ Զինաստանն ամենահին գյուղացիական յերկիրն  
է։ Այնտեղ մարդիկ սկսել են աշխատել հողի վրա մի քանի հա-  
զար տարի սրանից առաջ և մինչև այժմ աշխատում են հողից  
լավ բերք ստանալ։ Բայց վոչ մի տեղ աշխարհիս յերեսին  
չկան այնպիսի աղքատ գյուղացիներ, ինչպես Զինաստա-  
նում։ Հազարավոր տարիներ աշխատում են չինացիները  
միևնույն հողի վրա, միևնույն միջոցներով։ Դարերով  
գրեթե չեն փոխվել կարգերը չինական պետության մեջ։  
Իսկ հիմա Զինաստանում անհանգիստ ե, — քաղաքացիա-  
կան պատերազմ ե, մտցվում են նոր կարգեր։ Զինաս-  
տանի գյուղացիությունը կկարողանա հասնել լավ կյանքի,  
դուրս գալ աղքատությունից միայն այն ժամանակ, յերբ  
հեղափոխությունը Զինաստանում կհաղթե։ Այն ժամանակ  
բազմամիլիոն գյուղացիությունը ես կմասնակցի իր պե-  
տության շինարարությանը, կկարողանա բարելավել իր  
կյանքը, իր գյուղի կենցաղը և տնտեսությունը։

Գյուղը։ Զինական գյուղերը շատ հաճախ կրում են այն  
ընտանիքների անունները, վորոնք վաղուց ապրում են այդ  
գյուղում, բայց հաճախ ել այդ գյուղերը անվանում են կեն-  
դանիների կամ բույսերի անունով, որինակ — «Բաղի բույն»,  
«Խոսող ձի», «Մեծ սեխեր» և այլն։ Տները գյուղերում  
կառուցված են ծուռ ու մոռ։ Խըճիթները շինվում են  
այն նյութից, վորը կա ձեռքի տակ մոտ տեղում, իսկ մի  
քանի տեղերում գյուղացիները ապրում են ուղղակի քա-  
րայրերի մեջ, վոր նրանք վորում են պինդ լոսի-դեղին

հողի լեռնային ստորոտներում։ Այդպիսի քարայրի մեջ  
մութ և լինում, ողը ծանր, վորովհետև վոչ պատուհան-  
ներ կան և վոչ ել խողովակներ ողափոխության համար։  
Չինաստանի տարբեր շրջաններում զյուղացիական բնա-  
կարաններն ել տարբեր են. մի տեղ քարայրեր, մի այլ  
տեղ կավածեփ հյուղեր, բայց կան և գույտե խրճիթներ,  
և աղյուսե տներ։ Տները շինվում են շատ ցած, մուտքը  
բակիցն ե, իսկ փողոցի կողմը լինում ե խուլ պատ։ Այդ  
նրա համար ե արգում, վորպեսզի ավելի ապահովված լի-  
նեն գողերից։ Տանիքները մեծ մասամբ տափակ են,  
ինչպես սովորաբար արեւլյան և հարավային յերկրներում.  
տանիքների վրա դարսում են վառելիքը և հավաքված  
բերքը։

Գյուղացու բակաւմ ապրում են՝ շունը, կատուն,  
հավը իր ճտերով, իսոզը պահպանվում ե աղյուսներով  
շարված փոսի մեջ։ Այնտեղ նա ապրում ե ու չաղանում։  
Շունը կարճ թոկով կապվում ե ցցից։ Հենց այստեղ ել  
խնամում են անասուններին և խաղում են յերեխաները։  
Սողում են ու վազվզում լակտոները, կատվի ձագերը և  
խոզուկները։ Կեղտոտ ե, Բացի լավ չծածկվող դուներից  
կա նույնպես պատի մեջ մի ծակ — դա շների ու կատու-  
ների մուտքն ե։

Տան մեջ, հենց մուտքի դռան մոտ դտնվում ե վառա-  
րանը (պլիտան), վորի ծխնելույզը վոչ թե առաստաղն և  
դուրս գալիս (հեշտությամբ բռնկվող հարդե աշանիքի հըր-  
դենվելու յերկյուղից), այլ հատակի մեջ։ Ամառը խրճիթում  
շող ե և խեղովիչ, իսկ ձմեռը — ցուրտ։ Վառելիք հավաքում  
են յերեխաները, վորտեղ վոր գտնեն և ինչ վոր գտնեն,  
հավաքում են չոր տերեներ, տաշեղներ, ծառերի չորա-  
ցած ճյուղեր և այդ բոլորը պարկի մեջ լցնելով տա-  
նում են տուն։ Տան անկյուններում դրված են փարչեր,

զամբյուղներ, զանազան գործիքներ, հասարակ ջուլհակի  
դազգյան և մանելու անիվ, մի զույգ նստարան կամ քուրսի։  
Հատակը հող ե, առաստաղ չկա, ուղղակի զլիխիդ վրա  
տանիքն ե։ Խրճիթում խոնավ ե, կեղտոտ, մութ և ծխոտ։  
Ամառը զյուղացիները ամբողջ որը անցկացնում են  
բացողյա, աշխատելով կամ ուղղակի հանդստանալով։

Գյուղացու սնունդը բաղկացած է մեծ մասամբ բրն-  
ձից, բողկից, կաղամբից, մինի դրած կամ աղած ձկից և  
լորիյի կերակուրներից — լորիյի պանիր, լորիյի սալաթ  
կամ քաղցրավենիք։ Շատերի համար նույնիսկ բրինձը —  
այդ ժողովրդական սնունդը — չափազանց թանգ ուտելիք  
և հանդիսանում, նրանք բրինձը ծախում են, իսկ իրենց  
համար պատրաստում են կարտոֆիլ։ Կերակուրը ուտում  
են փայտիկներով կամ մատերով։

Գյուղացիների հագուստը կազմված է շապիկից և վար-  
տիքից — եժան կապույտ բամբակե կտորից։ Գլխներին  
դնում են լայնեղը զլիխարկ կամ գտակ, վոտքերը շատ  
հաճախ բորիկ են։

Չինական արտերի չափն ե մեկ ու կես — յերկու հեկ-  
տար, իսկ յերբեմն զրանից ել պակաս։ Նրանց տվել  
են այնպիսի զիրքեր, վորպեսզի ջուրը, հոսելով մեկ  
արտից, չդնա, ալլ վոռոգի հետեւյալ արտերը։ Բացի դրա-  
նից նրանք յերբափակված են հողե թումբերով, վոր-  
պեսզի ավելի յերկար պահեն ջուրը։ Արտերը շատ խիտ  
են կպած իրարու, ինչպես մեղրամոմի բճիճները։ Չինա-  
կան արտերը, ասես, բանջարանոցներ լինեն։ Չինական  
գյուղացին ինամք է տանում իր ցանած յուրաքանչյուր  
բույսի վրա։ Նրանցից ամեն մեկին նա հասցնում է ջուր և  
պարարտանյութ, մաքրում է մոլախոտերից։ Չինաստանում  
գեռես կան այնպիսի արտեր, վորպիսիները չկան ուրիշ  
վոչ մի յերկրում — արտեր ջրի վրա և արտեր քարերի

վրա։ Ահա զեաի վրա, ափի մոտ մի մեծ հյուսված լաստ։ Նա խարիսխներով ամրացած ե հատակին, փորպեսզի չլուղա-չգնա, և ծածկված ե պտղաբեր տիզմով։ Ահա հենց դա յե արտը ջրի (գեաի) վրա։ Իսկ ժայռերի ծերպերի վրա գյուղացու ընտանիքը կրում ե հողը հովիտից — պարկերով, պատգարակներով։ Յերբ գոյանա հողի բավականին հաստ շերտ, կարելի յե տնկել բույսը։ Դրա համար շատ հող ե հարկավոր կրել պարկերով ուսերի վրա։

Այն հողը, վոր ծածկում ե ընդարձակ տափաստանի մեծ մասը, ուր հատկապես խիտ են բնակված չինացիները, շատ պտղաբեր ե։ Հենց այդ հողն ե կոչվում լյոս։ Ամբողջ լեռներ, վորոնք գնում են աստիճաններով և կտրատված են ձորերով, բաղկացած են լյոսից։ Լյոսը շատ ծակու ե. նա, սպունգի նման, ծծում ե իր մեջ ջուրը, ողը, ե, նրա ծակոտիների մեջ հավաքվում ե այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ ե բույսերի արմատներին։ Իսկ յերբ ջուրը իսկա, նաև, ինչպես չոր, անպետք սպունգը, փշրվում ե, իսկ յերբ ձեռքդ ես վերցնում, փոշիանում ե։ Շանապարհնման նուրեմն, լյոսը շատ պտղաբեր ե, բայց միայն այն դեպքում, ինչպես չոր, անպետք սպունգը, փշրվում ե, ների վրա լյոսը կոխկրավում ե և դառնում ե պինդ, կապի դեպքում, յեթե նա ջուր ե ստանում։ Ինչպես վոր ամենալավ փայտը չի տա տաքություն, մինչև վոր չվառվի, նրան։

Տաք յերկրներում վոռոգումը — դա ինքը կյանքն ե։ Հենց վոր չորանա առուն, — կյանքը կորչում ե. այնտեղ, ուր արտեր ելին, մնում ե անապատ։ Զինացիները ջինում են ցած տեղերում ամբարտակներ, այնտեղ, ուր հոսելով կուտակվում ե անձրեի ջուրը։ Անց են կացնում ջուրը նաև լեռնային առվակներից, Յեզը պտտեցնում ե բամ-

բուկից շինած անիվը, ծայրերին ամրացրած դույլերով։ այդպիսի ջրամբար անիվը որական յերեք հարյուր տակառ ջուր ե տալիս  $7\frac{1}{2}$  մետր բարձրության վրա։ Յեթե ջուրը բարձրացնում են տափաստանում յեղած ջրամբարից, արտերը վոռոգելուց հետո նրան կրկին հավաքում են և բարձրացնում են ավելի վերել յեղած արտերը, այսպես ասած — հետեւյալ հարկը։ Իսկ յեթե ջուրը լեռնային առվակներից ե վերցվում, վերևի արտերը վոռոգելուց հետո, նրան հավաքում են և ցած իջեցնում, վորպեսզի վոչ մի կաթիլը զուր չկորչի։

Բայց չե վոր հողը վոչ միայն խմել ե ուզում, այլ և ուտել։ Պարարտացում — ահա այն սնունդը, վոր պահանջում ե և ստանում ե չինական գյուղացու հողը յուրաքանչյուր տարի։ Պարարտացումը միակ փրկարար միջոցն ե, վորը արդեն հազարավոր տարիներ պահպանում ե չինական արտերը հյուծվելուց։ Բայց վորտեղից վերցնել պարարտանյութը։ Կարիքը ստիպեց չին չքավորներին հնարագետ լինել։ Վորքան թափթփուկներ կան, վորոնց վրա մենք սովորաբար ուշադրություն չենք դարձնում։ Փողոցներում ընկած ե աղբը։ Վարսավերը խուզում ե մարդկանց — մազերը մնում են հատակին։ Սղոցում են փայտը, գերանը — թափվում ե թեփը։ Տոներին այրում են խոտի խրձեր — մոխիրը մնում ե։ Խոզի մազը, վոսկորներ, բանջարեղենի կորոտանքներ, խոհանոցային թափթփուկներ, մուրը, փթած ձուկը, ամեն մի սատկած անասուն, ել չխոսած աղբի մասին — այդ բոլորը գործի յե դրվում։ Դանդաղ այրում են բույսերի մնացորդները, գրանք ծածկելով ճիմով, և ստացվում ե յուղոտ սև փոշի, վորով ծածկում են սերմերը ցանի ժամանակ։ Վորովիետե Զինաստանում անասուն, տափար շատ քիչ կա, իրմական պարարտանյութ ե ծառայում այնտեղ վոչ թե գոմաղբը,

այլ մարդկային կղկղանքը։ Վաղուց ի վեր չինացիները հետևում են, վորպեսզի դրանք զուր չկորչեն։ ԶԵ վոր դրանից ե կախված հողի բերրիությունը, ապա ուրեմն Չինաստանի գյուղացիների ամբողջ կյանքը։ ՅԵ բկրագործական գործիքներ չինական գյուղացին շատ քիչ ունի, յեղածներն ել շատ հասարակ են և հնադարյան այդպիսի գործիքներով եր մշակվում հողը և հազար տարի սրանից առաջ։ Վորովինետև չինական գյուղացին քիչ գործիքներ ունի, ապա մարդկային աշխատանք և ուժ մի կտոր հողի վրա շատ ավելի յե գործադրվում, քան վորեւե այլ յերկրում։ Արտերը շինել աստիճաններով, ջուր անցկացնել, փիրացնել հողը բրիչներով, պահպանել կանոնավոր պտղափոխություն, ցեխը շաղ տալ վոտներով բրնձի տունկի ժամանակ, մաքրել արտը աղբաբույսերից, կանգնած մինչև ծնկները ճահճի մեջ — ահա ինչպես և սովորաբար աշխատում չինական գյուղացին։

Չինական գյուղացիների հողաբաժինները շատ փոքր են, 70 տոկոսից ավելին ունեն 2 հեկ. պակաս հող մեկ ընտանիքի համար. 15 տոկոսը ունեն 2—3 հեկ. և 15-ը՝ 3 հեկ. ավելի։ Միջն չինական գյուղացին ունի  $\frac{2}{3}$  հեկտար։ Դա շատ փոքրիկ հողաբաժին ե, վորով նա հաղիվ-հազ կարողանում ե ապրել և այս ել միայն շնորհիվ նրան, վոր նա իր հողը մշակում ե, ինչպես բանջարանոց, և հողի պաշարերության ու հարավային կլիմայի շնորհիվ տարին յերեք անգամ բերք ե հավաքում։ Գյուղացիներից շատերի հողամասը ավելի ևս փոքր ե. Շատ քչերը ունեն 6 և ավելի հեկտար հող — դրանց արգեն հարուստներ են հաշվում։ Ուրեմն, չինական գյուղը, ինչպես և արևմտայի վրոպական գյուղերը, ունի հարուստ և աղքատ խավեր։ Կան և այնպիսի գյուղացիներ, վորոնք իրենք հող չունեն կամ ունեն այնպիսի փոքրիկ կտոր, վորով չեն կարող ապրել. նրանք

ավելի հարուստ գյուղացիներից վերցնում են հողամաս կապալով և կամ վարձվում են, վորպես բատրակ։ Չինաստանում կան այնպիսի շրջաններ, ուր գյուղացիության մեկ յերրորդ մասը և նույնիսկ կեսը հողը ուրիշներից կապալով են վերցնում շատ ծանր պայմաններով։ սովորաբար նրանք վճարում են հողի համար բերքի մեկ յերրորդ մասը, իսկ յեթե հողի տերը տվել ե վարձակալին զործինքներ կամ պարարտանյութ, այդ դեպքում և յերկու յերրորդը։ Չինական գյուղացիների մոտ 15 տոկոսը բատրակներ են, վորոնք զուրկ են նույնիսկ այն փոքրիկ կտոր հողից, վորի վրա, ըստ չինական առածի, «կարելի յե գոնե մեխ գամել»։ Բատրակներին մի որվա աշխատանքի համար վճարում են 7 կոպեկ, իսկ բատրակուհիներին — 4 կոպեկ։ Ինչպես կարելի յե ապրել դրանով։

Այժմ տեսնենք, թե ինչպես են գյուղացիները ծայրը ծայրին հասցնում իրենց տնտեսության մեջ։ Գյուղացու ծախսերը մոտավորապես այսպես են դասավորվում —

Բնակչանին նորոգույթը . . . . .	բոլոր ծախսերի 16%
Ինձենտար ձեռք բերելը . . . . .	> 24%
Ինձենտարի նորոգումը . . . . .	> 5%
Տուրքեր . . . . .	> 32%
Պարտքերի վճարումը . . . . .	> 20%
Մնացած ծախսերը . . . . .	> 30%

Ինչպես տեսնում ենք, ամենախոշոր ծախսն ե տուրքերի վճարումը։ Ամենից վատը այն ե, վոր չկա տուրքերի համար վորով, հաստատված չափ. Հինունիկները վերցնում են, վորքան կարող են և մեծ մասը իրենց գրպանն են դնում։

Յեթե լավ տարիները գյուղացին այդքան վատ ե ապրում, ապա նրա տանջանքները սոսկալի յեն դառնում, յերբ վորեւե տարերային աղետ ե պատահում — ջրհեղեղ կամ յերաշտ. 1920 թ. այնպիսի ուժեղ ջրհեղեղ եր յեղել,

վոր ավելի քան 5 միլիոն մարդու բնակարան եր քանդվել, և մի քանի տասնյակ միլիոն մարդ չելին կարողացել հավաքել իրենց բերքը և ստիպված ելին յեղել սովոր մատնվելու։ Զրհեղեղներ և յերաշտ Զինաստանում հաճախ են պատահում շնորհիվ անտառների բացակայության, վորոնք անխնայրեն կտրվում են. ներկայումս այնքան քիչ անտառ ե մնացել, վոր ստիպված են յերկաթուղիների համար շպաներ Յապոնիայից բերել տալ, Զինաստանի որի պարզ ե, վոր անտառները պետք ե պահպանել և տնկել նոր անտառներ, վորպեսզի կլիման ավելի բարեխառնի, վորպեսզի ապահովինք մեզ ջրհեղեղներից ու յերաշտից, վորպեսզի շինությունների համար նյութ լինի և գործարանների համար — հումույթ։

Քանի վոր գյուղատնտեսությունը հաճախ անզոր ե կերակրելու ընտանիքը, գյուղացիները զբաղվում են նաև տնայնագործական արհեստներով՝ մանելով, գործելով, մետաքսից ու փայտից զանազան իրեր շինելով, բամբուկից խաղալիքներ պատրաստելով և այլն։

— Վերջին տարիներս չինական գյուղացիները դադարել են հլուհապատակ լինելուց, — շարունակեց Մաննիկը արդեն բերանացի։ — Նրանք պայքար են սկսել բոլոր իրենց ճնշողների դեմ. հարուստների դեմ, վորոնք տալիս են հողը կապալով անչափ բարձր գներով, կառավարիչների դեմ, վորոնք քայլայում են նրանց տուքերով ու հարկերով, բիրտ գեներալների դեմ, վորոնք վոտնակով են անում նրանց դաշտերը և կողոպտում են նրանց գույքը։

— Ի՞նչ գեներալներ, ի՞նչի՞ մասին ես խոսում — ընդհատեց Մաննիկին Հոփիսիկը։

Մաննիկը կարմրեց, շփոթվեց և խղճուկ նայեց ուսուցչուն։ Նա ինքն ել լավ չեր հասկանում, թե վորտեղից են Զինաստանում այդ կովասեր գեներալները։

Ուսուցչունին ոգնության հասավ.

— Ահա թե ինչ, յերեխաներ, — ասաց նա, — սրանից մի քանի տարի առաջ Զինաստանում իշխում եր թագավորը, բայց 1911 թ. հեղաշրջում տեղի ունեցավ, վորը վերջ դրեց միապետի հազարամյա իշխանությանը և այդ մեծ պետությունը դարձրեց հանրապետություն։ Բայց յետամնաց և բիրտ կառավարիչների ձեռքով քայլայված յերկիրը ստիպված եր յերկարատե պայքար մղելու ոտարյերկրյա պետությունների և սեփական գիշատիչ, ավազակարարո գեներալների դեմ։ Զինաստանում չկա միասնական ուժեղ կառավարություն։ առանձին շրջանների գլուխն են անցած մասր վարիչներ-գեներալներ, վորոնք անընդհատ պատերազմում են իրար դեմ։ Պատերազմը ձեռնոտու յե նրանց համար, վորովիետե հնարավորություն ե տալիս կողոպտելու հարևան շրջանների անպաշտպան ազգաբնակությունը և այդպիսով հարստանալու։ Նրանք այնքան ընտելացել են պատերազմելու, վոր չեն ել ուզում վերջ տալ այդ կոիմներին, վորոնցից նրանք մեծ յեկամուտներ են ստանում։

«Ծանոթացեք նշանավոր չինական գեներալների կենսագրությանը, — ասում ե մի գերմանացի գրող — և դուք կտեսնեք, վոր նրանք բոլորը նախկին ավազակներ են, իսկ նրանց բանակները — ավազակային վոհմակներ»։

Այդ գեներալները կոմունիստների վախերիմ թշնամիներն են։ Նրանք հասկանում են, վոր կոմունիստները, հաղթանակելով, պիտի խլեն իշխանությունը նրանց ձեռքից։ այդ պատճառով ել նրանք անխնայորեն վոչնչացնում են կոմունիստներին և նրանց համակրող բանվորներին, գյուղացիներին և ուսանողներին։ Գրեթե ամեն որ մենք կարգում ենք լրագրներում այս կամ այն ավազակ-գեներալի հրամանով գլխատված, կախված, սոսկալի տանջանք

ներով մահացված տասնյակ և հարյուրավոր կոմունիստների, հեղափոխական բանվորների, զյուղացիների, ուսանողների մասին։ Զկան այնպիսի գաղանություններ, վորչորդադրվեն հակա-հեղափոխական գեներալների, շինական բուրժուազիայի կողմից հեղափոխականների վերաբերմամբ. մասսայական մահապատճեներ, սոսկալի տաններ և այլն, Այդ պատճառով եր նրանց ատում են բանվորներն ու զյուղացիները։ Զինական գեներալը յերբեք համարձակվի փողոց դուրս գալ առանց բազմամարդ պահակի, Շատ հաճախ կարող եւ տեսնել այսպիսի պատկեր. շինական մեծ քաղաքի փողոցներով սրանում ե ավտոմոբիլը, վոտնաստիճանների վրա — աջ ու ձախ — կանդնած են յերեքական զինվոր, ամեն մեկի ձեռքին ատրճանակ կա. յերկուսը իրենց ատրճանակի բերանը յետ են ուղղած, յերկուսը — կողքի, յերկուսը — առաջ, իսկ ավտոմոբիլի մեջ նստած ե, ծածկվելով, վորեե գեներալ կամ իշխանափոր։

Այդ գեներալները մշտական ոռճիկ են ստանում վորեե ոտար իմպերիալիստական պետությունից — Անգլիայից, Ամերիկայից, Յապոնիայից կամ Ֆրանսիայից. Մեծ զորք և նավատորմիղ ունեցող խոշոր իմպերիալիստական պետությունների համար համեմատաբար հեշտ ե ամբողջ յերկրամասեր կորդել քայլացված, թուլացած պետությունից, տիրանալ նրա հարստություններին և նրա բնակչության աշխատանքին. Նրանք վոչ միայն ամբողջ յերկրամասեր են խել «ինքնուրույն» Զինաստանից (անգլիացիները, որին արդյունաբերական կենտրոն Խանկույին և այլն), այլ և իրենց թաթն են դրել յերկրի բոլոր փողային հաւատությունը վրա. Նրանք հետևում են տուրքերի գան

ձումին և պահանջում են իրենց տալ նրանց մեծ մասը ի հատուցում պարտքերի և այն վասների, վոր կրել են ոտարյերկրյա բոնագրավիչները քսան տարի առաջ աեղի ունեցած խոշոր չինական ապստամբության ժամանակ։ Քանի վոր պետական գանձարկող մտնող տուրքերի մեծագույն մաքը — յոթը տասերորդը — զյուղացիներն են վճարում, պարզ ե, վոր զյուղացիական տուրքերի ծանրությունը չի կարող թեթևանալ, մինչև վոր չի տապալվի ոտարյերկրյա իմպերիալիստների լուծը, մինչև վոր նրանք մասսայում են յերկրում այս կամ այն ավագակ գեներալի և նրա վարձկան վոհմակի անվան տակ, այլ և իրենց զորքերի և ռազմանավերի ոգնությամբ։

Հետևաբար, շինական զյուղացիներին հարկավոր ե ազատվել ոտարյերկրյա բոնագրավիչներից և սեփական ձնշղներից — ազահ հողատերերից և զիշատիչ գեներալներից։ Յերբ գեներալներից մեկի բանակը բռնազրավում ե մի այլ գեներալի շրջան, բանդիտ-զինվորները սկսում են կողոպտել դժբախտ զյուղացիներին և քաղաքացիներին։ Այն պատրվակով, թե նրանք պետական տուրքերն են հավաքում բնակչությունից, գեներալները բռնազրավում են պարտված շրջանի ամբողջ գույքը, հաճախ մինչև վերջին շորը, իսկ աղամարդկանց բռնությամբ զինվոր են վերցնում։ Առանձնապես ծանր ե լինում այդ ղեպքերում բեռնակիր բանվորների - կուլիների դրությունը. Նրանց ստիպում են ռազմական ահազին բեռները տանել ուսերի վրա, փոխարինելով ձիյերին։ Յեզ այդ ահազին ծանրությունը բեռնած ուսերին, նրանք անցնում են հաճախ 500—600 կիլոմետր։ Զինաստանի մայրաքաղաք Պեկինում (Բեյլին) մի որ անհետացել են բոլոր բեռնակիրները. անհայտ աղբյուրներից նրանք իմացել են, վոր քաղաքին մոտենում ե թշնամի գեներալը, և շտապել են պահվել։

Վերջին տարիներս Զինաստանի կյուղացիությունը  
 վճռական պայքար ե սկսել հողի գիշատիչ սեփականատե-  
 րերի դեմ, վորոնք խլում են չքավոր գյուղացուց գրեթե  
 նրա ամբողջ բերքը։ Սկսեցին կազմակերպվել գաղտնի հե-  
 ղափոխական ընկերություններ, վորոնք պայքարելով հո-  
 ղատերերի և տեղական վայխառուների դեմ, միևնույն ժա-  
 մանակ ոգնում եին Զինաստանի բանվոր դասակարգին  
 կովելու իրենց ընդհանուր թշնամու — չինական ու յեվ-  
 րոպական կապիտալիստների, իմակերիալիստների և չինա-  
 կան գեներալների դեմ։ Հեղափոխական շարժումը ծավալ-  
 վեց, ընդգրկեց զրեթե ամբողջ յերկիրը, առանձնապես  
 ուժեղ թափ ստանալով հարավային և կենտրոնական Զի-  
 նաստանում։ Շարժման գլուխն անցավ Զինաստանի հերո-  
 սական կոմունիստական կուսակցությունը, վորին, չնայած  
 սոսկալի հետալողութերին, հալածանքներին և հազարա-  
 վոր զոհերին, հաջողվեց առանձին գյուղացիական ապօ-  
 տամբ ջոկատներից կազմակերպել չինական կարմիր բա-  
 նակը, վորը ներկայումս մեծ հերոսությամբ պայքարում  
 է վոչ միայն հականեղափոխական Գոմինդանի և նրա ար-  
 յունուուշտ պարագլուխ — չին բանվորի ու գյուղացու դա-  
 հիճ Զան-Կայ-Շիյի և մյուս գեներալների դեմ, այլ և անգ-  
 իտական, ամերիկական, ֆրանսիական իմակերիալիստների  
 դեմ, վորոնք իրենց վոչ միայն նյութական ոժանդակու-  
 թյամբ, այլ և անմիջապես իրենց ուազմանավերով, աերո-  
 պլաններով, վորքերով ոգնում են Զան-Կայ-Շիյին խեղ-  
 դելու չինական մեծ հեղափոխությունը։ Ներկայումս Զի-  
 նաստանում արդեն կան տասնյակ շրջաններ ու գավառ-  
 ներ, հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, վորոնց վրա  
 ծածանվում ե հաղթական կարմիր դրոշը, ուր սահմանված  
 և Խորհրդային իշխանություն։

Զինաստանի բազմամիլիոն գյուղացիության հեղափո-  
 խական պայքարը նոր ե սկսվել. անցնելով շարժման  
 գլուխը, չինական բանվոր դասակարգը և նրա ավանդաբարդ —  
 կոմունիստական կուսակցությունը կտանի չին աշխատա-  
 վորությունը դեպի վերջնական հաղթանակ։



Նկ. 1. Թեյի պլանացիա։ Դյուղացին, չարի հեծած, զիտում և իր  
 արտը

\* \* \*

— Ալեքսանդրա Պավլովնա, — ասաց Մաննիկը, — գուք  
 ինձ խոստացել եյթ ողնել նկարներ ջոկելու իմ զեկուց-  
 ման համար։

Այս, յեղ քեզ բերել եմ նկարներ, վոր կտրել եւ գերմանական ժուռնալից. այդ պատկերները կարող եւ կախել պատին «Գյուղացիներ» խորագրով. — պատասխանեց ուսուցչուհին և հաճճնեց Մաննիկին 2-րդ և 3-րնկարները:

— Յես ել, Մաննիկ, նկար եմ բերել քեզ համար, — ուրախ դեմքով հայտարարեց Հոփիսիկը և մեկնեց Մաննիկին 4-րդ նկարը:

— Ալ. Պավլովնա, իսկ մեր խմբակի հետեւալ ժողովում յես պիտի կարդամ զեկուցում շինական քաղաքի մասին, — հայտարարեց Սաշան:

— Լավ. իսկ այսորվա համար բավական ե, յերեխաներ, գնացեք սույն:

\* \* \*

Հետեւալ ուրբաթ (շինական խմբակի զբաղմունքի որը, յերեխաները բերին իրենց հետ թուղթ, ներկեր, սոսինձ և մեծ ջանքավ զարդարեցին ցուցահանդեսը: Սաշայի զեկուցումը շինական քաղաքի մասին բոլորը լսում եյին մեծ ուշադրությամբ, վորովիետե Սաշան շատ լավ աշակերտ եր և այնպես լավ եր կարդում, վոր նրան լսելը ավելի դուրեկան եր, քան Ա աստիճանի յերեխաներից մի քանիսին:

— Դու քո զեկուցումը լինքդ ես զրել, Սաշա, — խորամանկ շեշտով հարցրեց Մաննիկը: — Քեզ վոչ վոք չի ոգնել:

— Վոչ, ինձ մի քիչ ոգնեց յեղբայրս. նա ինձ գրքել ավեց և սխալներս ուղղեց:

— Ինարկե, քեզ համար հեշտ ե զեկուցում գրելը: չե վոր ուսանող յեղբայր ունես:

— Բայց չե վոր քեզ ել յես ոգնեցի, — ժպտալով նկատեց ուսուցչուհին:

## ԶԻՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԸ

Հին շինական քաղաքների ճնշող մեծամասնությունը թե իրենց կյանքով և թե սարքով ու կարգով նման են մեծ գյուղի: Միակ տարբերությունը այն է, վոր քաղաքները շրջապատված են ահազին պարիսպներով: Յեվրոպական քաղաքներում կենտրոնացած են լինում մեծ ֆաքրիկներ ու գործարաններ, ընդարձակ խանութներ, հարուստ բանկեր, պետական հիմնարկներ, բաղմաթիվ դպրոցներ — Զինաստանում այդ բոլորի թիվը շատ փոքր է: Զինական քաղաքի փողոցները նման են գյուղական փողոցներին — նույն մերկ պատերը և նույն փոքրիկ խանութները:

Զինաստանի բոլոր քաղաքներում գյուղերում անպայման պետք ե լինեն բավականին խորը ջրհորներ, վորոնք դարսված են քարերով: Սակայ դեպքերում այդ ջրհորները ունենում են ծածկոց և սովորաբար յերկրի մակերեսույթից բարձր չեն լինում, ուստի և հաճախ մարդիկ ընկնում են նրանց մեջ: Բացի դրանից միշտ կեղտությունը են փողոցներից հոսող ջրերով: Միայն XX դարում Պեկինում և այլ խոշոր քաղաքներում սկսեցին շինել արտեզյան ջրհորներ:

Զինական քաղաքի յերկրորդ առանձնահատկությունն են մանրավաճառի դուքսնը, ուր վաճառվում են ամենից ավելի բանուկ՝ առարկաներ՝ բրինձ, կարմիր թերթիկներ հարսանիքի հրավերի համար և սպիտակ թերթիկներ — թաղման հրավերի համար, ֆեյերվերկներ, թղթե դրամներ զոհաբերությունների համար: Այդպիսի գուքանը հաճախ բացվում ե միայն այն ժամանակ, յերբ գալիս ե գնորդը, մուշտարին. քիչ-շատ լուրջ գնումներ կատարելու համար պետք ե գնալ տոնավաճառ: Զինական գյուղերի և քաղաքների փողոցները շատ հաղվագյուտ դեպքում սալա-

հատակված են լինում և ընդհանրապես հակասանիտարական վիճակի մեջ են գտնվում։ Բայց վերջին ապրիներս չինական քաղաքները աշխատում են բարեկարգվել, մոտենալով յեվրոպական տիպին։

Չինական քաքարքների փողոցները, ընդհանուր առմամբ, շատ միապաղաղ են. յեթե չինեյին բազմաթիվ խանութները, բազմազան ցուցանակներով զարդարված, այլ և գեղեցիկ աղոթատները, նրանք շատ տաղտկալի եյին լինելու։ Զետ զանազանություն շինությունների վոճի և բարձրության մեջ. գրեթե բոլոր, նույնիսկ ամենահարուստ, աները միհարկանի յեն. բոլոր նրբափողոցները այնքան նեղ են, վոր նրանցով հազիվ-հազ կարողանում ե մի սայլ անցնել։ Հարավային, մանավանդ ծովափնյա քաղաքներում յերկհարկանի տների թիվը շատ ավելի մեծ ե. արտասահմանում յեղած չինացիները սկսում են գերադասել բազմահարկ կառուցվածքների վոճը, սակայն պահպանելով չինական ճարտարապետության զանազան զարդարանքները։

Բնակելի տները մեծ ջանքով առանձնացված են փողոցից. Ընդհակառակը, այն շինությունների վրա, վորոնք նշանակված են հասարակական նպատակների համար, չինացիները շուայլում են իրենց ֆանտազիան, մանավանդ ցուցանակների նկատմամբ, և լայն կերպով բաց են անում այդ շենքերի ներսը։ Այդ իսկ պատճառով խանութներում հաճախ բացակայում ե նույնիսկ պատը — նրանք, կարծես, փողոցի շարունակությունն են կազմում, տալով նրան առանձին կենդանություն և աշխատություն։ Նույն փողոցներում, ամեն տեղ, ուր այդ իրենց հարմար թվա, տեղափորվում են մանրավաճառները, ծափելով իրենց ապրանքը սեղանների վրա կամ ժամանակակից ծածկույթների տակ։ Այդ մանրավաճառները մշտապես մեկ տեղից մյուսն են

անցնում։ Գնորդներ գրավելու համար նրանք զանազան հնչյուններ են արձակում կամ ձայնով, կամ հատուկ գործիքներով։ Յերեխաների ամենամեծ սերն ե վայելում քաղցրավենիքներ վաճառողը, վորը իր ապրանքը կրում յերկու արկղիկների մեջ, անցկացրած փայտի վրա։

Իր մոտենալու մասին այդ մանրավաճառը տեղեկացնում է, զնզնզացնելով այն մկրատը, վորով նա կտրում է քաղցրավենիները՝ շաքարած գետնընկույզը, կանփետները։ Հաճախ հանդիպում ենք նաև հանդիպում և թթու, այսինքն միրգ վաճառողին. սա իր ներկայության մասին հաղորդում ե զանգուլակով։ Սրա ապրանքներից ամենից ավելի հաջողություն ունեն բամբուկի բարակ ձողիկները, վորոնց վրա անցկացված են յելակենու մրգեր, փոքրիկ ինձորներ, սալոր և այլն։

Բայց վոչ միայն թափառական մանրավաճառներն են աշխատացնում չինական փողոցը։ Հաճախ հանդիպում ենք այնտեղ փողոցային պատմասացների, յերգիչների, յերաժիշտների, Փոկումնիկների և դերասանների։ Պատմասացը կանգ ե առնում վորեե բազմամարդ, կենդանի տեղում և սկսում ե պատմել հավաքված ամբոխին շատ պարզ, մատչելի լեզվով զանազան պատմական դեպքեր. զինվորների մասին, վորոնց գիշերային գրո՞ի լեն տանում բերանները լաթե խցանով փակած, վորպեսզի չկարողանան շարքերում խոսել արդարների հաղթանակի։ Մատնիչների ու դավաճանների կործանման մասին, կամ ահոելի դեերի, վհուկների և հսկաների մասին, վորոնց հավատում են սնոտիապաշտ չինացիները։ Ամբոխը լսում ե ուշադրությամբ, յերբեմն առաջին անդամ ծանոթանալով իր սեփական յերկրի պատմական անցքերին այդ թափառական պատմասացի շնորհիվ։

Տեղ-տեղ կարելի յե հանդիպել թափառական դերասանների խմբերին. այդպիսի խմբերի մեջ լինում են շատ

յերեխաներ, — Նրանք սովորում են թատերական արվեստը. Նրանց աշխատանքի համար վոչինչ չեն վճարում, տալով միայն շատ աղքատիկ սնունդ: Զինացիները շատ են սիրում թատրոնական ներկայացումներ, մանավանդ տոնակատարությունների ժամանակ. այդ հաճագամանքը ոգտագործելով, չինական հեղափոխականներից վոմանք գրում և ներկայացնում են այնպիսի պիյեսներ, վորոնք բաց են անում աշխատավոր ժողովրդի աշքերը, հասկացնում են նրանց, թե ովքեր են նրանց բարեկամներն ու թշնամիները:

Զինական փողոցներում չափազանց շատ են մուրացկանները: Նրանք այնքան շատ են և այնքան փողորմելի, վորքան վոչ մի այլ յերկրում: Յերբեմն այդ մուրացկանները միանում են հատուկ արտելների մեջ և վորոշություն են դնում խանութպանների վրա իրենց ոգտին:

Հաճախ կարելի յէ հանդիպել թափառական չինացիների՝ կապիկներով: Լսկում ե թմբուկի ձայնը և անմիջապես յերեխանների ամբոխ ե հավաքվում: Զինացին կանգնում ե փոքրիկ հանդիսատեսների կազմած շրջանի կենտրոնում և ստիպում ե իր կապիկին, վորը հեծած ե վոչիսարի վրա և զիմին կարմիր զիմարկ ունի, զանազան ոյիններ խաղալ:

Նկ. 2. Չինական մուրացիները

Անցնենք չինական հին քաղաքի փողոցներով: Տեսնք, թե ինչ կերպարանք ունի նա այժմ, ՀՀ դարի յերկրորդ քառորդում:

«Ուղարկի կարավանը մտնում ե քաղաքի դարբասով, — գրում ե ժամանակակից ճանապարհորդը: — Յեր-

կարաբուրդ կենդանիները ածուխով լի պարկեր են կրում լեռներից, Քաղքենիների և կուլիների գորշ, կապույտ ու սև ամբոխի մեջ, ոիկշաների և ավտոների անիմսերի միջև ջրկիրները քարշ են տալիս իրենց ճպացող միանիվ սայլակները: Անցնում են արագաշարժ ձիյեր լծած կառքեր, վորոնց վրա — յերկու վոստիկանի միջև — ինչ վոր թշվառականներ, ձեռները կռնակներին կապած: Անկյուններում շրջում են վոստիկանները — լայն սրերով, դեղին պատյանների մեջ: Փողոցով անցնում են շարքով զինվորները:

Արվարձաններում, տան շեմքերին նստած են կանայք, ծնկներին դրած փոքրիկ յերեխաններ ներկած դեմքերով: Յերեխաններից մի քանիսի վզերին շան վզնոցներ են կապած: Հար վոզիները, ըստ չինական ավանդության, վախենում են շներից և չեն կպչի փոքրիկ յերեխաններին: Խաչաձեզող փողոցներից մեկում փողոցային վարսավիրը սապնում ե մի ծերուկի գլուխը, ածիլում ե դեմքը ու գլխագաղթը, մաքրում ե մազերից քիթը, ականջները և նույնիսկ աչքերը:

Հարսանիքային շքերթը, առջևից ու յետելից յերաժիշտներով շրջափակված, անցնում ե ժխորի միջով, աշխույժ պրոսպեկտներով: Թաղման սգերթը, վորը իր փարթամությամբ գերազանցում եր այն բոլորը, ինչ վոր հաջողվեց ինձ տեսնել Զինաստանում, կանգ ե առնում փողոցի մեջտեղում, փողոցային շարժման, տրամվայների և կառքերի առաջ: Ամբոխը լեցնում ե տրոտուարները: 68 բեռնակիր տանում են ահազին գույնզգույն դագաղը (68 — համաձայն սրբազն որենքներին): Նրանք համառորեն հրում են անցորդներին, և դագաղը, ճոճվելով յերկար, ծանր ձողերի վրա, շրջում ե կողքի փողոցը: Պատահում ե յերեմին, վոր բեռնակիրները այդ ձողերով ամբողջ ուժով

Խփում են վորևե տան պատին, քանդում են պատը, քանդում են տունը. սակայն, բողոքել այս դեպքում չի կարելի — դա թաղման սգելիթ ե: Յերբեմն այսպիսով անձնական հաշիվներ են մաքրում».

Բայց հին արևելյան քաղաքի վրա ևս իր զրոշմն ե դրել յեվրոպական կուլտուրան — դա դեսպանական թաղամասն ե, շրջապատված պատով, վորի միջից նայում են գնդացիքների ամեն կողմ ուղղված բերանները: Յեվրոպացիներին — ազնվացիներին, ֆրանսիացիներին, բերդիացիներին և ուրիշներին այդ թաղամասը տրամադրելու համար հարկավոր յեղավ վոչնչացնել, քանդել, փորփրել մի շարք մեծ, աշխույժ չինական փողոցներ: Ոտարյերկրացիները ոգտվում են Զինաստանում միանդամայն քառորդ իրավունքներով: Նրանց թույլ ե տրված պահելու այստեղ իրենց զորքերը, ունենալու հրետանի, գնդացիքներ, տանկեր, զրահապատ գնացքներ: Բոնագրավողները յուրացըել են բոլոր այդ իրավունքները, վորպեսզի կարողանան պաշտպանվել իրենց շուրջը ապրող, իրենց կողմից կողոպտված ու կեղեքված 400 միլիոն չինական աշխատավորությունից; վորպեսզի կարողանան պահել նրան ստրկության մեջ, կեղեքել, շահագործել, կողոպտել նրան Միայն գերմանացիներն ու ավստրիացիները զրկված են այդ քացառիկ իրավունքներից, իրեւ պարտվածներ համաշխարհային պատերազմում: Խոկ Խորհրդային Միությունը ինքը հրաժարվեց այդ քացառիկ իրավունքներից ու արտօնություններից, վորոնք ստորացնում են չին ժողովուրդը. Խորհրդային Միությունը, վորպես բանվորա-գյուղացիական յերկիր, վոչ միայն չի կարող մասնակցել բազմամիլիոն չին աշխատավորության կեղեքմանը ու շահագործմանը, այլ, ըստ հակառակը, շահագրգռված ե նրա ազատազրման մեջ Բոտարյերկրյա իմպերիալիստաներից և թե սեփական միլիոն

ընստ-գեներալների, կապիտալիստների ու կարգածատերերի և հականեղափոխական Գոմինդանի ծանր, արյունուտ լծից. Շատ անգամ են վորձել չինացիները վերացնել այդ բացառիկ իրավունքները ոտարյերկրացիների համար, բայց նրանք անզոր են գտնվել այնպիսի հզոր իմպերիալիստական պետությունների հանդեպ, ինչպես Անգլիան, Հյուսիս-Ամերիկայի Միացյալ Նահանգները, Յապոնիան. Այդ իսկ պատճառով նրանց բոլոր վորձերը մատնվում ելին անհաջողության: Ոտարյերկրյա իմպերիալիստական պետությունների կողմից կաշառված, իրարու հետ անընդհատ պատերազմող, յերկիրը ավերի ու թալանի մատնած հականեղափոխական գեներալների Զինաստանը չի կարող, անշուշտ, ազատագրվել իմպերիալիստական ոտարյերկրյա լծից: Այդ կարող ե անել միայն բանվորա-գյուղացիական, խորհրդային Զինաստանը — կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

Սա յե հին չինական քաղաքի ափակել պատկերը: Բայց նա հետզհետե ավելի ու ավելի մեծանում, աղմկալից ե գառնում. արդյունաբերական քաղաքները աշխատում են նմանվել յեվրոպական ու ամերիկական խոշոր կենտրոններին: Այդպիսի ժամանակակից խոշոր չինական քաղաքի նմուշ կարող ե ծառայել Շանհայը:

## ՉԻՆԱԿԱՆ ԶԻԿԱԳՈՆ\*

Շանհայը իրենից ներկայացնում ե անգլիական, ֆրանսիական, ամերիկական փողոցների, հրապարակների, վիլաների և արվարձանների մի անվերջ ցանց: Վոչ միայն Շանհայի աշխույժ ու գործային ծովափը իր յերկնամբարձ

\* Զիկագոն մի ահագին արդյունաբերական քաղաք և Հյուսիսային-Ամերիկայի Միացյալ Նահանգներում,

շենքերով ու պալատներով, վորոնց մեջ տեղակորված են բանկերը, վարչությունները, հյուպատոսարանները և նախագին ընկերությունները, հիշեցնում եւ ամերիկական վարեւ նավահանգիստ, այլ և նրան կից փողոցները, նույն թվում և Նանկին-ռոդը, այդ գլխավոր արտերիան, անչափ նման են Չիկագոյի փողոցներին։ Նանկին-ռոդը ցերեկով կատարյալ մարդկային հեղեղ ե, կատարյալ խելահեղ մըջնոց, վորը ցնցվում ե խլացուցիչ շշակներից, զանգերից ու թմբկահարումներից, իսկ յերեկոյից մինչև ուշ գիշեր կուրանում լույսի անսպառ հեղեղից և անթիվ պլազացող կրակների շացուցիչ փայլից։ Յեվ վոչ միայն ցուցանակներն են շշմեցնում անցորդին, վոչ միայն ոեկլամներն ու զրոշակներն են նրան պաշարում և ճնշում, այլ և խանութների բաց պատոհաններին կանգնած զուռնաչիներն ու թմբկահարները, վորոնք աղմկում են փողոցով մեկ, փառաբանելով իրենց ցուցահանած գրավիչ ապրանքները։ Հսկայական տասնարկանի խանութները՝ թատրոններով, ակումբներով, կախ ընկած պարտեզներով տանիքներին՝ վառ լուսավորվում են մթնշաղը իջնելուն պես։ Փայլում են շացուցիչ փայլով տասնյակ հազարավոր եկեկտրական լապտերներով զրված շինական տառերը, իսկ նրանց կողքին վառվում են ու հանգչում անզիւժական բառերը։ Այդ հրավառ տառերն ու բառերը հրավիրում են յերպալացիներին ու չինացիներին խանութ մտնել և թողնել այնտեղ իրենց փողերը։

Նանկին-ռոդին զուգահեռ ընկած ե մի այլ փողոց—ավելի ևս խայտարղետ, ավելի ևս աղմկում և ուրախ։ Այստեղ շարպած են իրար կողքի, մեկը մյուսի յետեից, թեյարանները և ճաշարանները։ Ահազին ռեստորանների բազմաթիվ փոքրիկ սենյակները լիքն են այցելուներով։ Այստեղ ուտում են ամենանախավանական բաներ և սարսափելի քանակով։ Ամեն մի

լուելիքից հետո տալիս են տաք թաց անձեռնոցիկներ, լորոնցով վորկամոլները սրբում են ձեռքերը, զլուխն ու իզը։ Մանում են և դուրս են գալիս մանրավաճառները րենց արկղներով և կռնակ քորողները փղոսկրից շինած իրանավոր մատներով։ Հեռախոսում եք դեմի թեյարանը այնտեղից իսկույն գալիս ե փոքրիկ փայելչակազմ չփուհն պակաս գեղեցիկ ուղեկցուհու և ջութակահարի ետ։ Յերեքն ել նստում են փոքրիկ աթոռների վրա և



Նկ. 3. Շանհայի նավահանգիստը։ — Ռտարյերկրյա պետությունների ռազմանավերը,

իոքրիկ յերգչուհին յերգում ե անբնական ու սոսկալի արձր ձայնով։ Յուրաքանչյուր յերգը արժե դուլար։ Աղջկա դեմքը սպիտակ ներկած ե, հազին գույնզգույն թավշյա զգեստ ե և աղամանդյա մանյակ, անպես, ինչպես յեվրոպական թաղամասերի տիկինների մոտ։ Նա համել քսան տարեկան լինի։

Արևմուտքն ու Արևելքը խառնված են իրար չինական ծովափնյա քաղաքներում, Յեկ Արևելքը ավելի ու ավելի նահանջում է Արևմուտքի առաջ, Շանհայում հին չինական քաղաքից փառահեղ տաճարների և աղոթատների տեղը մնացել են մենակ ավերակներ, փոսեր, աղբ ու կեղառություն:

Հոնկոնգում վերջին 70 տարվա ընթացքում ահազին փոփոխություններ են տեղի ունեցել, Ահազին լեռը, վորի վրա ընկած է քաղաքը, բաժանված է դեպի վեր սողացող փողոցների, Ներքեռում, ծովափին—ահազին զորանոցներ, խանութներ, պահստաններ, շքեղ գրասենյակներ, յերկնամբարձ տներ — մեկ խոսքով — ժամանակակից յեզրոպական քաղաք: Վերեռում — հիվանդանոցներ, դպրոցներ, յեկեղեցիներ, ակումբներ, թեք բարձրացող ճանապարհ, վորը փառահեղ բուսաբանական այգու մոտով, զորեղ ջրամբարների մոտով տաճում ե դեպի ամուր կառուցված պալատները: Նավահանգստի — աշխարհիւ ամենալավ նավահանգստներից մեկի — շուրջը յերեռմ են ժայռերի ցցված դեղին կատարները: Ժայռերի կոտրված կտորների տեղը ստեղծված են նոր գործարաններ, սպասարկու շենքեր և բնակարաններ: Մերկացված գեղին կավը փայլում է կապույտ ջրի վրա: Ամեն կողմից յերկրի խորքն են գնում ավտոմոբիլի ճանապարհները:

Այդ բոլոր փոփոխությունները առաջացրել են այստեղ անգիտիցները, ծավալելով արտադրությունը և առևտութը: Բայց բավական եր, վոր ապստամբած ժողովուրդը արգելք դներ ոտարյերկրյա ապրանքների վրա, վորպեսզի անգիտական հոնկոնգը սկսեր հյուծվել ու մեռնել, չնայած բոլոր այդ նորակառույց շենքերին, ավտոմոբիլի ուղիներին և գործարաններին: Մի գերմանական ճանապարհորդ տեսել է 1926 թվականին, թե ինչպես ակումբներում,

պալատանման գրասենյակներում, ըանկերում, գեղեցիկ վիլաներում նստած ելին հոգսից ու անել սարսափից քարացած մարդիկ: Արդեն յերկար ամիսներ վոչ մի ապրանք չեր գնում հոնկոնգից Զինաստանի խորքերը:



Նկ. 4. Զինական հեղափոխության հայրը —  
Սուն-Ցաթ-Ռենը:

\* \* \*

Հետեւալ ուրբաթ ուսուցուհին խոստացել եր կարդալ պատմվածքներ չինացիների կյանքից, բայց ուշացավ պարագունքի, և չինուկները անցան իրենց ցուցահանդեսի աշխատանքներին:

— ՅԵԿԵՔ, Նախ և առաջ կախ տանք չինական հեղափոխականների մեծ առաջնորդ Սուն-Յաթ-Սենի պատկերը՝ իսկ հետո կլսենք Ալեքսանդրա Պավլովնայի խոստացած պատմվածքը — ասաց Սաշան:

— Բայց չի կարելի միայն կախ տալ պատկերը, առանց վորև բացատրության, — առարկեց Միքայելը: — Մենք, ինարկե, բոլորս ել գիտենք, թե ով եր Սուն-Յաթ-Սենը, բայց մեր հյուրերը գուցե չգիտեն այդ: ՅԵԿԵՔ կազմենք պատկերի տակ մակագրություն:

Մինչև ուսուցչուհու գալը «չինուկները» կազմեցին, արտագրեցին և կախ տվին հետեւյալ մակագրությունը՝

«Սուն-Յաթ-Սենը չինական հեղափոխության մեծ առաջնորդն եւ Նրան կոչել են «չինական հեղափոխության հայրը»: Նա 40 տարի շարունակ պայքարում եր յերկրի լավագույն ապագայի համար: Նա ստեղծեց առաջին զորեղ հեղափոխական կազմակերպությունը — Միութենական Լիգան, վորը 1911 թ. ապստամբություն բարձրացրեց: ապստամբությունը վերջացավ թագավորի տապալումով և հանրապետության հայտարարությամբ: Սուն-Յաթ-Սենը Զինական հանրապետության առաջին պրեզիդենտն եր և Միության լիգայից վերակազմված ազգային կուսակցության — Գոմինդանի ղեկավարը: Նա հազվագյուտ կրթության ու տաղանդի տեր՝ մարդ եր: Մի քանի անգամ յեղել եր ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ և Ամերիկայում, աշխատելով զրավել այդ յերկրների համակրանքը զեպի իր ազատագրման համար մարտնչող չին ժողովուրդը: Նրա ղեկավարությամբ ստեղծվեց Զինաստանի Հարավում առաջին հեղափոխական իշխանությունը: Նա

շատ գրում եր և նրա աշխատությունները թարգմանված են յեվրոպական բոլոր լեզուներով: Նա մեռավ 1925 թվականին, թողնելով ազատության մարտիկի մեծ հոչակ: Ժողովրդական մասսաները վառ են պահում իրենց մեծ առաջնորդի հիշատակը և հարգում են նրա անունը յուրաքանչյուր ժողովրդական ժողովում: Նրա մահը մեծ կորուստ եր չին ժողովրդի համար: Նրա մահվանից հետո նրա ստեղծած Գոմինդան կուսակցությունը դավաճանեց հեղափոխությանը, դավաճանեց Սուն-Յաթ-Սենի պատգամներին, կաշառվեց իմպերիալիստական պետությունների և չինական բուրժուազիայի կողմից և դարձավ չինական բանվորների և գյուղացիների արյունուուչտ դահիճը:

Զին բանվորների և աշխատավոր գյուղացիության առաջնորդն ու ղեկավարն ե այժմ Զինաստանի Կոմունիստական կուսակցությունը, վորը Կոմինտերնի ղեկավարությամբ հերոսական պայքար ե մղում Խորհրդային Զինաստանի համար:

Նոր եյին վերջացրել յերեխաները այդ աշխատանքը, ըբ յեկավ ուսուցչուհին: Նա կարգաց յերեխաների գրածը ապա սկսեց կարդալ խոստացած պատմվածքը:

## ԿՈՒԼԻ № 204

(Ըստ Գոլիչերի)

Ամբողջ որը, առավոտից մինչև ուշ յերեկո, նստած և ահագին ոթելի ղեմը, ուր ապրում են ոտարյերկրաները: Իր բուղկայի փոքրիկ, աղոտ ապակիների միջով հետեւում ե ոթելի դռներին: Հազիվ վոտքս դուրս եմ ում հյուրանոցի դռներից, յերբ նա արդեն մի վոստյու-

Նով իր № 204 ոփկայի մոտ եւ Յես նստում եմ, բացա-  
տրելով նրան մի քանի խոսքով. թե ինչ եմ մտադիր դի-  
տելու այդ որը: Յերբեմն նա ինձ տանում ե դիվանագի-  
տական թաղը, դեսպանատներից մեկը — գերմանական  
կամ խորհրդայինը: Այդ դեսպանատները ոթելից միայն  
մի քանի քայլ հեռավորության վրա յեն գտնվում, բայց  
և այնպես նստում եմ № 204 ոփկայի վրա, վորովհետեւ  
իմ և կուլիյի միջև լուր պայմանագիր ե կնքված, վոր  
իմ Պելինում լինելու ամբողջ ընթացքում նա գոյու  
թյուն ե ունենալու միայն ինձ համար, իսկ յես — նրա  
համար:

Առանձին բավականություն ե պատճառում նրան մեր  
խորհրդային դեսպանատուն գնալը, Յերբ մենք անցնում  
ենք խորհրդային դրոշակի մոտով, նա յետ ե նայում  
առանց վազքը ընդհատելու, աչքով նշան ե անում ինձ և  
մի քանի ժամանակ հիացած նայում ե վեր — ծածանվող  
կարմիր կտորին։ Դեպի գերմանական դեսպանատունը նա  
միանգամայն անտարբեր ե։ Յապոնական դեսպանատան  
մոտով նա ուղղակի թռչելով ե անցնում — նա յապոնա-  
ցիներին չի սիրում։ Անգլիական դեսպանատան տուած նա  
աշկարա թքում ե, իսկ ամեն անգամ, յերբ անցնում ենք  
ֆրանսիական դեսպանատան առաջով, նա կանչում ե՝ —  
„François-cochons“, (ֆրանսիացիները խոզեր են). դա նրա  
իմացած միակ ֆրանսերեն խոսքերն են։ Բայց նա լավ  
ե խոսում անգլիերեն։ Նա ընդհանրապես ինտելիգենտ  
տղա յե, այդ և 204 կուին։ Անգլիերեն նա սովորել ե  
յերկար տարիներ ոթելի առաջ աշխատանքի սպասելով,  
նա վոչ միայն շատ լավ գիտի Պեկինը, այլ և յերբեմն,  
վորեե տաճարի, թատրոնի կամ հիմնարկի մոտով անցնելիս,  
նա զարմանալի խելոք մտքեր ե արտահայտում։ Վորտե-  
ղից գիտե նա կարմիր դրոշակի նշանակությունը, ինչ-

պես ե նա զգացել-հասկացել, վոր այդ կարմիր դրոշը  
կուլիյի համար շատ ավելի մեծ նշանակություն ունի, քան  
ամերիկականը. Անշուշտ, խորհրդային դեսպանատնից գումա-  
յեկող ոռւս ճանապարհորդը ավելի լավ ե վարձատրում  
նրա աշխատանքը, քան ամերիկյան, այլ և վարվում ե  
նրա հետ վոչ այնպես, ինչպես վարվում են սովորաբար  
կուլիների հետ, գուցե նույնիսկ «ընկեր» ե ասում նրան,  
յեթե քիչ-շատ տիրապիտում ե չինական լեզվին. Վոչ, իմ  
կուլին բնությունից հասկացող եակ ե. դա մի առողջ,  
ուժեղ, մաքուր, կարգին տղա յե.

Մենք մեծ բարեկամներ ենք: Յես իմանում եմ նրանից զանազան մանրամասնություններ իր և իր ընկերների կյանքից: Նրա տերը նախկին վոստիկան է, վորը ոտարյերկրացիներին զանազան մութ ծառայություններ մատուցանելու միջոցով կապիտալ և դիզել և ձեռքել 47 ոիկշա: Ինչ որ ել վոր լինի — լավ թե վատ, հաջող թե անհաջող — յուրաքանչյուր կուլի պարտական և տալ նրան 40 ցենտ (80 կոպեկ): Շանհայում կուլիները վճարում են իրենց տերերին որական մի ամբողջ դոլլար: Այդ իսկ պատճառով Շանհայում գործադուլ ե յեղել, վորին մասնակցել են 15 հազար կուլի: Պեկինում կուլիների կազմակերպությունը դեռ նոր և ստեղծվում: Շանհայի և Տյանչինի կուլիները, ուս աշխատանքի բանվորները, նավային, յերկաթուղային և քաղաքային բեռնակիրները շատ լավ են կազմակերպված: Դրանք — զգաստ, վոչ պահանջանք, առողջ ժողովուրդ են, սովոր բացողյա աշխատանքի: Նրանք ունեն իրենց գաղտնի միությունները: Յես հարցնում եմ իմ կուլիյին, արդյոք չեն բողոքում նրա ընկերները այն առթիվ, վոր յես մշտական նրա ճամբորդն եմ, այն ինչ նրանք հաճախ կես որ առանց աշխատանքի յեն նստած:

— Ի՞արկե, — պատասխանում ե նա, — յես իմ վաստակի մի մասը նրանց եմ տալիս. մենք միշտ ոգնում ենք իրար:

Մոտենում ե նոր տարին. նախորյակին, խանութները փակվելուց առաջ յես նվերներ եմ գնում իմ կուլիյի համար, նրա յերեխայի համար (վոր իր պարծանքի առարկան եր) և ընդհանրապես նրա տոնի համար, վոր կատարելու յե նա վաղը իր տանը Բեռնավորված մեծ ծրաբով, վորի պարունակությունը յես գաղտնի յեմ պահում, բայց վորին ուղղված ե նրա շեղ հայացքը, յես առաջարկում եմ կուլիյին տանել ինձ իր բնակարանը: Նա ապրում ե շատ հեռու, ամենաաղքատ մարդկանց բնակած փողոցում, ցածր, բավականին խղճուկ տնակներով, նրա տան դարպասին հասնելու համար պետք ե բարձրանալ փոքրիկ ավազոտ բլրակը, Բայց նա չի ուզում ինձ իր մոտ տանել: Կարծես ճնշվում ե:

— Մի մտնեք ինձ մոտ, — ասում ե նա, — ինձ մոտ շատ կեղտուա ե: Տվեք ինձ փաթեթը, յես կկանչեմ այստեղ կնոջս և փոքրիկիս: Ի՞նչ կարիք ունեք այդ ցեխի մեջ մտնելու:

Բայց յես արդեն փաթեթը կոնատակիս դրի և առաջ անցա: Նա ծիծաղում ե և քարշ ե տալիս ոիկան բըլրակի վրա:

— Ահա իմ տունը:

Չորս ծայրահեղ չքափոր ընտանիքներ են ապրում այդ փոքրիկ նեղ բակում, վորի կողքի բնակարանումն ե և նրա տունը: Տների միջև ընկած քառանկյունի տարածության վրա անյերեակայելի ցեխ ե, մի կույտ աղբ, զանազան թափթփուկներ և աղտոտություններ: Բնակարանի դռներին յերեսում ե կուլիյի կինը: Նա, ինչպես և իր ամուսինը, 25 տարեկան ե, մաքուր, լավ ու կոկիկ հազն-

ված մի կին ե — կարմրաքիթ, հաստաթուշ յերեխան գրբկում: Մանուկի գլխին բրդե գլխարկ ե դրած:

Յես դժգոհ եմ, վորովհետեւ հենց այդպիսի գլխարկ եմ գնել փոքրիկի համար: Ճիշտ ե, յես միացրել եմ նրան նաև բրդե մի վերնաշապիկ, վորը, անշուշտ, հարկավոր կգա նրան այս ցուրտ ձմռանը: Ինձ դիմավորում ե նաև պառավ սկեսուրը: Նրանք բարեկում են, ժպտալով: Ըստ յերեսույթին, նրանք արդեն լսել են իմ մասին: Ապա սենյակում բաց են անում իմ բերած նվերները՝ շորերը, գինին, կոնսերվերը և անուշեղենները: Ապա հավաքվում են բակի բոլոր բնակիչները — պառավեր, մի քոսոտ յերեխա, մի կաղ տղա: Կուլին և իր փոքրիկ ընտանիքը դեմ չեն, վոր հարեանները զննում են, հոտոտում, շշափում ե մեկը մյուսին ե տալիս գինին, գլխարկը, շապիկը և այլն: Մանոթանալով հարեանի ստացած նվերներին, նրանք խմբովին հեռանում են և յես իմ կուլիյի ու իր ընտանիքի հետ նստում եմ ցինովկաների վրա: Այդ ցինովկան, վոր շրջակալված ե կապույտ կանտով, շատ գեղեցիկ ե ու մաքուր, նա թե իբրև նստարան ե ծառայում և թե իբրև անկողին: Յես նկատում եմ անկյունում ծալած, մաշած վերմակը: Այդտեղ եր նաև, քարե վոտերի վրա, դըրված վառարանը: Զամբյուղի վրա դրված են մի քանի գլուխ կաղամբ և մի լամպ կոտրած ապակիյով: Մի անկյունում ընկած ե հին փուքս: Պատից կախ են տրված յերեք նկար՝ մեկը ծովային կոփկ ե պատկերացնում, յերկրորդը՝ խրամատներ, իսկ յերրորդը՝ մի ինչվոր տեսարան հին առասպեկներից: Ծնտանիքը իր շնորհակալությունն ե հայտնում ինձ: Ապա հայրը վերցնում ե յերեխայի հին գլխարկը և նրա յերկար մետաքսյա սև մազերի վրա գնում ե նորը, ավելի գունեղը: Կինը մինչ այդ կանաչ թեյ ե յեփում և տալիս ե ինձ փոքրը բաժակով:

Հյուրասեր տանտերերը զգուշությամբ բաց են անում բիսկվիտների արկղիկը և առաջարկում են ինձ։ Նրանք ուրախությամբ բաց կանելին իմ բոլոր նվերները և կառաջարկելին ինձ։ Բայց արդեն մութն ընկնում ե. յերկու բաժակ թեյ խմելուց հետո յես հայտնում եմ, վորում եմ տուն գնալ։ Փողոց եմ դուրս գալիս մոր, յերեխայի, սկեսուրի և բոլոր հարևանների ուղեկցությամբ։ Տան դարպասին փակցրած են կարմիր և վուկեգույն մեծ պլակատներ, վորոնց վրա՝ նկարված են չաղ, սրտոտ-բարեհողի աստվածները — դարպասների պաշտպանները։ Բակում, աղբակույափի վրա կախված է լապտեր, իմ յեկած ժամանակը նա դեռ չկար, իսկ այժմ նա հայտնում ե, վոր այս տան մեջ ևս սկսվել ե նոր տարվա տոնը։

— Բայց այս պատմվածքը, յերեխաներ, յերիտասարդ և առողջ կուլիյի մասին ե խոսում։ Միլիոնավոր չին բան-վորներ շատ ավելի վատ են ապրում։ Անա թե ինչ ե գրում այդ մասին հետազոտող Շերվուդ Եղդին։

«Աշխատանքի պայմանների, աշխատավարձի և բանվորական որվա ուսումնասիրությունը Զինաստանում հայտնաբերեց ամենից ավելի ցնցող պատկեր, վորպիսին միայն հարավոր ե յերեակայել աշխատանքի ամբողջ աշխարհում։ Գրեթե բոլոր նորագույն գործարաններում գերակռում ե 12 ժամյա բանվորական որը։ Յետամաց չինական ձեռնարկություններում բանվորական որը շարունակվում է 12-ից մինչև 16 ժամ, իսկ յերեմն հասնում է 18 ժամի ամբողջ շաբաթ անընդհատ։ Հյուսիսի մի քանի քարահանքերում յուրաքանչյուր սմենայի ստորյերկրյա աշխատանքարունակվում է 24 ժամ անընդհատ։ Մետաքսագործատում են բամբակամանածային շատ գործարաններում աշխատում են 6-ից մինչև 12 տարեկան յերեխաներ։ Նրանց աշխատավարձը տատանվում է 6-ից մինչև 24 կոպեկ

մրական։ Հարյուր հազարավոր աշակերտներ վոչինչ չեն ստանում բացի սննդից, վորը արժե որական մոտ 12 կոպեկ։

Զինաստանի և Յապոնիայի համար դեռ ևս միանգամայն ժամանակակից ե Յելիզավետ Բոպունինդի բանաստեղծությունը՝ —

### ՅԵՒԽԱԱՆԵՐԻ ՎՈՂԲԸ

Զահել գառնուկն ե ցատկոտում անհոգ լայնարձակ դաշտով, Զահել թոչնիկը յերգում ե հնչեղ յերկնքում հստակ, Զահել այծյամը ճյուղերի ստվերն ե մտնում անվրդով, Զահել ծաղկիկն ե ուրախ թպրտում արեգակի տակ։ Լոկ մանուկներին վիճակված ե բիբր լուծը ստրկության հեղծուկ շենքերում, խուլ նկուղների խավարի գրկում։ Լոկ մանուկների կյանքն ե կրծատում ժանգոտած շղթան Այն յերկրում, վորտեղ իբր թե ազատ մարդն ե բնակում։

Հեկեկում են մանուկները թշվառ —

«Մենք հոգնած ենք, տանջված ու անկյանք,

Հազիվ-հազ ենք կանգնել — ուժասպառ,

Ել ինչպես վազված ենք ու խաղանք։

Մալվում են ծնկներս թուլցած,

Յեվ փակվում են աչքերս քնեած։

Ամբողջ որերով ծանր բեռան տակ խուլ նկուղներում անուժ կուացիք, Կամ լուսաբացից մինչև ուշ գիշեր մեքենաների անփը շրջիր։

Այ, անիվերն են անվերջ աղմկում,

Ողի հոսանքով դեմքերս շիում։

Նրանց պտույտից կակա շուտով

Ամեն ինչ շրջել — արագ պտույտով —

Յեվ մեր ուղեղը, և սիրտն, և ողը, և պատուհանի

լույսերը աղոտ,

Յերկինքը մռայլ, կամարները սև, ճանձերը — նստած  
պատերին կեղտուուց  
Պատում ե ամեն ինչ, պատում  
վաղ առավոտից մինչ զիշերը ուշ,  
Յեվ աղմկում ե այնպես չարագուժ —  
Տեսնել — լսելու ել ուժ չի մնում:  
Յեվ մենք պատրաստ ենք, ասես մեղապարտ  
Ծնկաչոք ընկնել մեքենայի քով  
Յեվ դիմել նրան խուլ աղերսանքով —  
«Կանդ առ, դադարիր թեկուզ ակնթարթ»:  
Իզուր են, սակայն, խնդիր, աղերսանք —  
Ամեն ինչ իրա կարգով ե զնում  
Յեվ անփներն են անվերջ պատում,  
Ասես՝ սև բախտի անողոք գուժկան...»

Դժբախտ դեպքերի, աշխատունակության կորստի և  
մահվան դեպքերում վոչ մի վարձատրություն չի տրվում,  
թեև չինական գործարաններում կան բազմաթիվ վտան-  
գափոր մեքենաներ առանց վորեե զգուշացման միջոցների  
և այդ իսկ պատճառով դժբախտ դեպքեր շատ հաճախ են  
պատահում: Ամբողջ ընտանիքներ աշխատում են գործա-  
րաններում զիշերվա և ցերեկվա սմենաներում, և ընտա-  
նեկան հին կարգերը քայլայվում են ժամանակակից ար-  
դյունաբերության գրոհի տակ:

Չինական բանվորների կեսից ավելին աշխատում են  
շարաթվա բոլոր յոթը որը և այդ աշխատանքի համար  
ստանում են այնքան, վոր կատարյալ մուրացիկի կյանք  
են վարում: Միութով, աշխատանքի պայմանները Չի-  
նաստանում այժմ նույն են, ինչ վոր եյին յեվրոպական

յերկրներում հարյուր տարի որանից առաջ: Մի անգլուհի,  
վորը դիտել ե գործարանները մի շարք չինական քաղաք-  
ներում, զրում ե, վոր այդ գործարաններում բացակա-  
յում են վորեւ սանիտարական կանոններ:

«Կանայք և յերեխանները շատ հեշտությամբ ընդուն-  
վում են գործարանները, վորովհետև նրանք համաձայնում  
են շատ չնչին աշխատավարձի: Մի քանի գործարաննե-  
րում մենք տեսանք կանանց, վորոնք աշխատում եյին՝  
յերեխաններին մեջքերին կապած: Յերեխանները մանուկ  
հասակից ընկնում են գործարան և կատարում են զանա-  
գան աշխատանքներ. վեց, յոթը, ութը տարեկան հառա-  
կից նրանք անցնում են կանոնավոր աշխատանքի: Ուշա-  
դրություն դարձնելով ահագին քանակությամբ փողու վրա,  
գործարաններից մեկում, մենք հարցըինք կառավարչից,  
թե ընդունվում են, արդյոք, վորեւ միջոցներ հիվանդու-  
թյունների տարածման դեմ: Ահա բառացի նրա պատաս-  
խանը՝ «Վահ, այստեղ մշտապես նոր մարդիկ են: Այս-  
տեղից գնում են կամ ուրիշ գործարան, ուր ավելի յեն  
վճարում, կամ գերեզմանոց»: Այդպիսով, ժամանակակից  
չինական գործարանային սիստեմը լափում ե միլիոնավոր  
աշխատավորներ: Սովամահ լինելու յերկյուղից դրդված,  
մարդիկ անխնայորեն մաշում են իրենց կյանք: չնչին աշ-  
խատավարձի համար: Աշխատանքի մի շարք ճյուղերում  
բանվորներին բառիս բուն իմաստով սպանում են իրանց  
ուժից վեր աշխատանքով: Կուլինները, վորոնք Արևմտյան  
գետի վրա գտնվող ջրաղացներում անփներն են շարժում  
վոտքերով, սովորաբար մեռնում են վաղաժամ: Մղոցող-  
ները, կառապանները և բեռնակիրները 4—8 տարի աշ-  
խատելուց հետո դառնում են կատարյալ ինվալիդներ»:

Շանհայում կարելի յեւ դիտել այսպիսի պատկերներ  
բանվորական կյանքից:

Առավոտյան ժամը հինգ և կեսն եր. զիշերային սմենան հեղեղով դուրս եր թափվում գործարանից. Մարդկային խայտաբղետ ամբոխի մեջ կարելի յէ գտնել բոլոր հասակները, սկսած 60-ամյա պառավերից և վերջացրած ծծկեր մանուկներով մայրերի ձեռքերին։ Յերկար զիշերվա ընթացքում 28 կոպեկ աշխատած կինը բոնած ե իր 12 տարեկան յերեխայի ձեռքից. այդ յերեխան ստացել ե իր աշխատանքի համար 14 կոպեկ։ Ապա մի կաղ կին, կապոտած վոտքով, տանում ե ձեռքից բոնած իր յերեխային։ Այդ յերեխան իր կյանքի կեսը անցկացնում ե գորդացող գործարանում, նա խաղում ե մեքենաների արանքում, մինչև վոր ինքն ել անցնի աշխատանքի։ Այսուեղ են և փոքրիկ սայլակները, վորոնցով կուլիները տուն են տանում ութական կին վնասված կամ թույլ վոտքերով։ \* Դրա համար նրանց չնշին աշխատավարձից կը բառատվում ե ամիսը 1 ոռութիւ 4 կոպեկ։ Զմեռվա մութ առավոտյան ծխնելույզները ու քուլաներով են թքում արթնացող քաղաքի զվին, իսկ փողոցներից ու նրբափողոցներից մարդկային կյանքերի նոր հեղեղներ են հոսում ահագին անընդհատ դղրդացող գործարանները։

Մենք այցելեցինք բանվորների բնակարանները։ Մի հյուսն շատ սիրալիք հրավիրեց մեզ իր «Բնակարան»։ Նրա վիզը ծածկված եր վերքերով, վորոնք փոխաղրում եին տուբերկուլյոզի վարակը այդ փոքրիկ տնակում պատսպարված բաղմանդամ ընտանիքին։ Նա աշխատում ե որական 70 կոպեկ կամ մոտ 20 ոռութիւ ամիսը և կերակրում ե յերեք հոգուց բաղկացած ընտանիքը։ Յերկինար-

\* Զինաստանում յերկար ժամանակ սովորություն կար փոքրիկ աղջիկների վոտքերը պինդ պարուրել, վորպեսզի նրանք շատ փոքրիկ լինեն։ Այդ այլանդակությունը պատահում է մինչև այժմ ել, ուստի և շատ բանվորուհիներ ի վիճակի չեն քայլելու։

կանի տան մեջ, փոքրիկ սենյակներում, վոր նման են մկան ծակերի, ապրում են չորս ընտանիք, բաղկացած 40 մարդուց։ Մենք այցելեցինք այդ սենյակներից մեկը, մոտ 1 քառակուսի մետր տարածությամբ, ուր ապրում են 10 մարդ։ Նրանց կեսը քնում ե զիշերային սմենայի



Նկ. 5. Հին չինական միանիվ սայլակ, վորով տանում են յերեխաներով կանանց։

ժամանակ, իսկ մյուս կեսը — յերեկը։ Մենյակում վոչ վառարան կա, վոչ ել ողանցք։ Կրակը վառվում ե ուղղակի հատակի վրա, յերկաթե կաթսայի տակ, վորի մեջ զակի հատակի վրա, յերկաթե կաթսայի տակ, վորի մեջ ճաշն եր պատրաստվում բոլորի համար։ Տան մեջ վոչ ճաշն եր պատրաստվում բոլորի համար։

Ջրմուղ կա, վոչ արտաքնոց։ Դրանց փոխարինում ե սենյակում դրված դույլը։ Այդ սենյակում գիշեր ու ցերեկ 10 մարդ — տղամարդիկ, կանայք ու յերեխաներ — ճաշեն պատրաստում, քնում ու ապրում, Տան դուռը դուրս ե գալիս մի կեղտոտ նրբափողոց, մոտ 2 մետր լայնությամբ, վորը ավելի շուտ աղբանոցի յե նման։ Յերեխաների մեծամասնությունը տառապում ե աչքերի հիվանդություններով։ Նրանց գրեթե բոլորի զլուխներն ու դեմքերը ծածկված են քոսով և այլ վերքերով, վորոնք արդյունք են այդ կեղտոտ նրբափողոցի, անմաքրության, իննամքի բացակայության և կիսասոված վիճակի։ Իսկ քաջաքի բեռնակիրները — կուլիները մեծ մասամբ ապրում են հենց փողոցում և քնում են, փայտի կտոր դնելով գլխատակերին։


Յեթե բանվորը մնասվում ե վտանգավոր մեքենաներից, վորոնք գործարանատերերի անփութության շնորհիվ չեն շրջակալված, նա վոչ մի կերպ չի ապահովվում։ Ինվալիդ բանվորի միակ ճանապարհն ե — մուրացիկ դառնալ, յեթե չի ուզում սովամահ լինել։

Նույնիսկ դժբախտ դեպքերի ժամանակ սպանված բանվորների համար գործարանների տերերը տալիս են նրանց ընտանիքներին յերկու և նույնիսկ չորս անգամ պակաս նալաստ, քան թե սպանված եղի համար։ Այդ իսկ պատճառով արդարացի յեն ասում, վոր մարդկացին կյանքը Զինաստանում ամենասեժան ապրանքն ե։

Ահա թե ինչպիսի պայմաններում են ապրում և աշխատում չին բանվորները և քաղաքի աշխատավորությունը։ Ոտարյերկրյա կապիտալիստների և սեփական բուրժուազիայի անորինակ շահագործության լծի տակ տնքում ե չին բանվորությունը։ Զարմանալի չե, վոր նույնիսկ աշխարհի մեջ ամենից ավելի համբերատար այդ

բանվորները սկսել են, վերջապես, վրդովվել և պահանջել իրենց դրության բարելավումը։ Վերջին տարիներս գործադուլների գրեթե անընդհատ ալիքը վողողում ե Զինաստանի քաղաքները և նշանակալից ե այն, վոր չինական բանվորները արտաքերում են բարձր դիմացկունություն և համերաշխություն։ Դեպքեր են յեղել, յերբ յերկույթյունը բանվորի հեռացման պատճառով գործադուլ են հայտարարել հաղարակոր բանվորներ և նրանց մեջ չեն գտնվել դավաճաններ։ Գործադուլ սարքող բանվորները պահանջում են բարձրացնել աշխատավարձը, վերջ տալ կանանց ու յերեխաների անողոք շահագործությանը, բարելավել աշխատանքի ընդհանուր անտանելի պայմանները։ Խոշոր գործադուլ տեղի ունեցավ 1925 թ. փետրվարին, յերբ գործադուլ հայտարարեցին յապոնական տեկստիլ գործարանների 33 հազար բանվորները։ Նրանք պահանջում եին կրծատել բանվորական ժամերը, սահմանել հանգստի որեր, ավելացնել աշխատավարձը և քաղաքավարի վարչել իրենց հետ։ Յապոնական գործարանատերերը տվին իրենց համաձայնությունը, բայց հետո դրժեցին իրենց խոսքը։ Մայիսին վերսկսվեց գործադուլը։ այս անգամ յապոնական գործարանատերերը զենք բանեցրին իրենց անհնազանդ բանվորների դեմ, իսկ յեվրոպական վոստիկանությունը գործարանատերերին ոգնության հասավ։ յերկու բանվոր սպանվեցին, յոթը — ծանր վիրավորվեցին։ Այդ դեպքը սիական հուզմունք և զայրույթ առաջացրեց մյուս բանահաղին հուզմունք և զայրույթ առաջացրեց մյուս բանվորների մեջ։ Ընդհանուր գործադուլ սկսվեց ամբողջ յերկուում ոտարյերկրյա կեղեքիների դեմ։ Շանհայում գործադուլավոր բանվորներին միացան ուսանողները։ Նրանք բանվորների հետ միասին ցույցեր կազմակերպեցին ոտարյերկոյա դահիճների դեմ։ Բանվորների դասակարգին պայմանները կազմակերպեց ժողովրդական-հեղափոխական

պայքարի հետ և ջինաստանի լայն մասսաները մասնակցեցին այդ պայքարին։ Իսկ յերբ 1925 թ. մայիսի 30-ին ոտարյերկրյա վուտիկանությունը Շանհայում նորից գնդակահարեց բանվորական ցույցը և գետին ընկան տառնյակ սպանվածներ և հարյուրավոր վիրավորներ, վոտքի յելավամբողջ յերկիրը։ Խոշորագույն արդյունաբերական քաղաքները — Պեկին, Կանտոն, Խանկոու — իրենց վրդով մունքն ու ցասումն եին արտահայտում գործադուլներով, ժողովներով, նվիրատվություններով։ Շարժումը ընդհանուր



Նկ. 6. Խանկոռու քաղցրքը, վորտելից սկսվեց պայքարը Զինասուանի  
ազատագրման համար՝ ոտարյելորդյա կենցելիչներից և սեփական  
հականեղափոխականներից:

Ժողովրդական ցասումի բնույթ ստացավ Զինաստանի  
ուսարյերկրյա կեղեքիչների, առանձնապես Անգլիայի և  
Յապոնիայի դեմ: Սակայն գեներալները և կապիտալիստ-  
ները, այլև չինական բուժուազիան հանձինս Գոմինդանի՝  
դավաճանեցին ապստամբած աշխատավորությանը, կաշառ-  
վելով իմպերիալիստական պետություններից: Այժմ չին  
աշխատավորությունը կոմունիստական կուսակցության ղե-

կավարությամբ հերոսական պայքար ե մղում թէ ոտար-  
յերկրյա լմպերիալիստական պետությունների և թէ սե-  
փական կապիտալիստների ու կալվածատերեցի դեմ, պայ-  
քար ե մղում Խորհրդային Չինաստանի համար:

Անզլիան, Ֆրանսիան, Ամերիկան, Յապոնիան թէ ցամաքային և թէ ծովային մեծ ուժեր են պահում Զինառտանում, վորպեսզի պաշտպանեն իրենց գրաված վայրերն ու հարստությունները, ցրված ամբողջ յերկրում, այլև ողնեն չին գեներալներին, գործարանատերերին և այլ ողնեն չին գեներալներին, գործարանատերերին և կալվածատերերին ապստամբած բանվորների և զյուղացիների դեմ: Ժամանակավորապես դա նրանց հաջողվեց. գոմինդանը, վորպես բուրժուական կուսակցություն, պատրաստ եր պայքարելու ոտարյերկրացիների դեմ մինչեւ այն մոմենտը, յերբ նա հույս ուներ, վտարելով նրանց իր յերկրից, իր ձեռքը վերցնել հարուստ յերկրի արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները և առանց մրցակցի շահագործել չին բանվորությանը և աշխատավորությանը: Չահագործել չին բանվորությանը և աշխատավորությանը: Իսկ յերբ նա տեսավ, վոր Զինառտանի բանվոր դասակարգը և աշխատավոր զյուղացիությունը վոտքի յե կանգնում և կռվի անցնում իր դասակարգային շահերի համար, վոր չին աշխատավորությունը պահանջում ե բարեկավել կյանքի ու աշխատանքի պայմանները, վոր նա համաձայն չե այլևս որական 18 ժամ աշխատելու չնչին աշխատավարձով, վոր չին զյուղացին համաձայն չե այլևս իր բերքի կեսը կամ յերեք քառորդը տրամադրելու կալվածատերերին և կապիտալիստներին, — Գոմինդանը գերադասեց համաձայնության գալ ոտարյերկրյա իմպերիալիստ-ների հետ, դաշնք կապել սեփական կապիտալիստների հետ և նրանց հետ ու հականեղափոխական գեներալների հետ և նրանց հետ

միասին պայքարել ապստամբ բանվորների և գյուղացիների դեմ: Սկսվեցին հեղափոխական պրոֆմիությունների, առաջավոր ուսանողության և մանավանդ կոմունիստական կուսակցության ներկայացուցիչների ձերբակալումները, գնդակահարումները, զիսատումները: Թշնամիկան քայլեր սկսվեցին Խորհրդային Միության ներկայացուցչության դեմ Պեկինում, Շանհայում, Կանտոնում: Մեր ներկայացուցչությունները շրջապատվում եյին գորամասերով, թե՛ չինական, թե՛ յեվրոպական, սույնիսկ սպիտակ եմիգրանտներ



Նկ. 7. Ամերիկական կապիտալիստների վարձկանները դուրս  
են գալիս չեն բանվորների և զյուղացիների գեմ:

ըից կազմված վոհմակներով. մեր հյուպատոսարանները  
մտնողներն ու այնտեղից դուրս յեկողները յենթարկվում  
եյին խուզարկության, խորհրդային շատ քաղաքացիներ  
ձերբակալվում եյին և դատի մատնվում այն շինծու մե-  
ղադրանքով, թե նրանք իբր թե դրդում են չինական  
մասսաներին ապստամբելու գեներալական կառավարու-  
թյան դեմ:

Գոմինդանի դահիճները գաղանորեն չարչարում եյին  
իրենց ձեռքը ընկած կոմունիստներին ու հեղափոխական-  
ներին։ Թվում եր, թե հեղափոխությունը բոլորովին ջափ-  
ջախված ե։ Բայց այնքան ել հեշտ չեր համբերությունը  
կորցրած բազմամիլիոն բանվոր ու գյուղացի մասսանեւ։  
շարժումը ընկճել։ Վոչ միայն հարավում, Զինա ուանի  
ավելի առաջավոր շրջաններում, այլև հյուսիսում — հա՛մ-  
հեղափոխական գեներալների թիկունքում — սկսեցին կազ-  
մակերպվել զինված գյուղացիական ջոկատներ «Պողպատե



Նկ. 8. Սովալլուկ չին կուրիների Քալաքացիական պատերազմի հետևանքով զրկված են աշխատավարձից և ստիպված են մուրացիանություն անելու:

սուր», «կարմիր նիզակներ» և այլ անուններով։ Այդ ջուկատները անսպասելիորեն վոտքի ելին բարձրացնում այս կամ այն շրջանի գյուղացիությունը կալվածատերերի և տեղական իշխանության դեմ և հսկայական ապստամբություններ ելին առաջացնում, վորոնց հանդեպ շատ անզոր ելին գտնվում կառավարական կանոնավոր զորքերը։ Քաղաքի բանվորները ևս, չնայած Գոմինդանի և սպիտակ գեներալների բոլոր գաղանություններին, չեն ընդուակ գեներալների բոլոր գաղանություններին, չեն ընդուակ գեներալների — ընդհատակյա, և թե՛ բացահայտ — գործադուլային պայքարը նրանց դեմ։

Զինաստանի անծայրածիր դաշտերում և բանվորական փողոցներում թափված արյան ծովերի համար պատասխանատու յեն վոչ միայն չինական հականեղափոխական-ները, այլև ամբողջ քաղաքակիրթ աշխարհի բուրժուական պետությունները, վորոնք ամեն կերպ ոգնում են և աջակցում չինական բանվորների և գյուղացիների դահիճներին։ Միակ իռջոր յեփրապական պետությունը, վորը չի ուղարկել և չի ուղարկի իր զորքերը Զինաստանի կենդանի մարմինը հոշոտելու համար, վորը չի մասնակցել և չի մասնակցում այդ դժբախտ յերկրի աշխատավորության կեղեքմանն ու ճնշմանը, — դա ԽՍՀՄ-յունն է, ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների բարեկամունքը։

Սակայն, չին հականեղափոխականները չբավականացան հեղափոխական կազմակերպությունները քարուքանդ անելով և հեղափոխական բանվորների և գյուղացիների արյունով ներկելով յերկրի գետերը, գաշտելն ու փողոցները։ Իմաստերիալիստներից դրդված, նրանցից կաշառված, նրանք վորոշեցին զինված ընդհարում առաջացնել ԽՍՀՄ հետ։ Հյուսիսային Մանջուրիայով անցնում ե Զին-Արեգելյան յերկաթուղին, վորը միացնում ե Անդրբայկալը Վլադիկոստոկի հետ։ Մինչև հեղափոխությունը այդ յերկաթուղու տերն եր ցարական Ռուսաստանը, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այդ յերկաթուղին կառավարում ելին վորոշ պայմանագրի հիման վրա ԽՍՀՄ և Զինաստանը միասին։ 1929 թ. ամառը չին գեներալները հարձակվեցին Մանջուրիայում գտնվող բոլոր խորհրդային հիմնարկների վրա, հեռացրին բոլոր խորհրդային ծառայողներին, նրանցից վոմանց աքսորեցին Զինաստանի սահմաններից, իսկ շատերին ել ձերբակալեցին և բանտարկեցին։ Մեր Միության սահմանները շարժվեցին չինական զորքերը և սպիտակ-դվարդիական բանդաները

Խորհրդային իշխանությունը մի քանի անգամ նախա-  
գգուշացրեց այդ կողոպտիչներին, վոր, չնայած իր խա-  
ղաղասիրությանը, նա կկարողանա պաշտպանել իր սահ-  
մանները չին և սպիտակ վոհմակների հարձակումներից և  
իր քաղաքացիներին — հետապնդումներից։ Սակայն, չին  
գեներալները, իմպերիալիստներից զրդված, շարունա-  
կում եյին թշնամական գործողությունները։ Այն ժա-  
մանակ մեր հերոսական Հատուկ Հեռավոր-արևելյան Կար-  
միր բանակը, պաշտպանելով բանվորա-գյուղացիական յեր-  
կը սահմանները, ջախջախիչ հարված հասցըրեց չինական  
և սպիտակ-գվարդիական գորքերին։ Չինական գեներալ-  
ները ի վիճակի չեյին այլևս կովելու և ստիպված յեղան  
հաշտություն կնքելու մեր Միության հետ։

Համաշխարհային բուրժուազիայի փորձը — հարված հասցել ԽՍՀ Միությանը և պատերազմի մեջ քաշել մեզ — չհաջողվեց։ Իսկ Զինաստանում, բանվորների և գյուղացիների սոսկալի ջարդից հետո 1927 թվին, նորից ծայրառավ հեղափոխական շարժումը։ Գյուղացիական հեղափոխական ջոկատները կոմունիստների ղեկավարությամբ պատերազմ են մղում Գոմինդանի գեներալական վոհմականի գեմ, որեցոր նոր գավառներ ու շրջաններ միացնենք Խորհրդային Զինաստանին։ Կանոնում, ուր կոմունայի ընկճաման որերին բանվորական արյան գետեր ելին հոսել, 1929 թվի Հոկտեմբերյան տարեդարձին կայացավ բանվորական հակայական ցույց — կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

Զին աշխատավորությունը շատ լավ է հասկանում, զոր  
խորհուրդների կարմիր բանակը չինական սահմանագլխին  
պաշտպանում է վոչ միայն ԽՍՀՄ-յան գործը, այլև Զինաս-  
տանի հեղափոխական բանվորների և գյուղացիների գործը:

Փ ԶԱՅՄ ՈՐԸ  
(Հայ Զւլիկ-Ռոդինցի)

Հարուստ անզվիացի միստըր Խեյքը շատ և ձանձրանում այս կիրակի մենակ՝ Շանհայում։ Ընտանիքը ամառանոց ե գնացել, ինքը գնալու տեղ չունի—սոսկալի տոթի պատճառով բոլոր թատրոններն ու կինոները փակ են։ Նա վորոշեց անցնել քաղաքի փողոցներով։ Վերցրեց իր հետ և շանը — Գրիգին։ Նրա յետեից, վորոշ տարածության վրա գնում եր նրա անձնական քարտուղարը և թարգմանը։

Արագ շարժումները, թեթև քամին վերջ դրին վատ տրամադրությանը, փարատեցին անհաշիվ թախիծը։ Միստըր Խեյքը ուրախ է։ Նա մտքում հաշվում է այն յեկամուտը, վոր ստանալու յե եժանազին անզլիական կտորեղենը այս բարեարոս չինացիներին ծախելուց։ Եթ մի 2-3 այսպիսի հաջող գործ, և հնարավոր կլինի թողնել վայրենիների այս յերկիրը ու լիքը գրպանով անցնել հայրենի Անդվան։ Յանկություն զգաց խոսելու քարտուղարի հետ։

— Ալո, միստըր Ռիչարդ, ինչպես եք ապրում։

Քարտուղարը, վոր սովոր չել այդորինակ ուշադրության, զարմացած բարձրացրեց հոնքերը։ Բայց պատասխանեց հարգանքով ու շնորհակալությամբ։

— Շնորհակալ եմ, սեռ, լավ եմ, իսկ դուք, սեռ, ինչպես եք զգում ձեզ։

— Ո՛, շատ լավ։

Հանդարտ նրափողը անսպասելորեն դուրս բերեց նրանց արիստոկրատական նանվինուողը, Շանհայի գլխաների, մարդկային քրտնքի և կիզիչ արեի տակ հաշող ասֆայլտի ծանր հոտը։ Փողոցը տրամվայների, ավտոների, ոիկշաների անընդհատ հեղեղ եր ներկայացնում։

Խեյքը կանգնեց անկյունում։ Շանհայը միշտ հիվանդություն եր առաջացնում նրա մեջ։ Զննում եր ուշագրքությամբ, ասես ուսումնասիրելով, աղմկող ամբոխը, վորը բաղկացած եր զլիսակորապես չինացիներից—իրենց հատուկ աղմկով, իրենց հատուկ հոտերով։ Հայացքը ուղղեց Գոնկոնդ-Շանհայի բանկի մարմարյամասիվ սյուներին, գիշատիչ աբծվին, վոր հոշոտում եր յերկրագունդը ամերիկական ինտերնացիոնալ բանկի դռան վերև, և ապա դարձյալ խայտաբղետ ամբոխին։

Այո, սա Շանհայն է, համաշխարհային կահավորված սենյակները, բոլոր ազգությունների, ցեղերի, կուլտուրաների, կրոնների այդ միջանցիկ բակը։ Սա Շանհայն է, վոսկի հատակ, ավետյալ յերկիր ամբողջ աշխարհի խարեւաների, խաչագոյնների ու բախտախնդիրների համար, վորոնք գալիս են այստեղ՝ նավերի կեղտոտ հատակում կծկված, իսկ հեռանում են այստեղից «կապույտ եկապրեսի» մետաքսածածկ վագոններում։ Սա Շանհայն է, գրեթե միակ քաղաքը աշխարհիս յերեսին, ուր ընդհարվում են միակ քաղաքը աշխարհիս յերեսին, յատոնացին և անդդեմ առ դեմ չինացին և ֆրանսիացին, յատոնացին և անդդեմ առ դեմ չինացին, ինդուստրիալ գերմանացին, մալայացին և ուսուր, աննամիտը և չվեղացին։

Մեկի արմունկը ուժգին թափով կպավ միստըր Խեյքի կողերին և սթափեցրեց նրան իր մատճկոտությունից։ Նա կուրծքը ցցեց և բոկսյորի զիրք ընդունեց, ասես հարկածի սպասելով։ Չինացին, վոր նրան հրել եր, բարձրացրեց բնորոշ ուսանողական զլիսարկը և մրթմթաց շատ չոր ներողություն։ Միայն այդքան, Խեյքը չտեսավ նրա աչքերի մեջ չինացիների սովորական հպատակունրա աչքերի մեջ չինացիների սովորական հպատակունրա աչքերի մեջ կանոնադությունը։ Բնդհակառակը, թյունը և շան հնազանդությունը։ Վերականգնում է այդ Միստըր Խեյքը պատրաստ եր յերգվելու, վոր այդ Միստըր Խեյքը պատրաստ եր յերգվելու, վոր այդ Միստըր Խեյքը պատրաստ եր յերգվելու, վոր այդ Վառավոռուն նեղ աչքերի մեջ կար արհամարհական թշնամավոռուն նեղ աչքերի մեջ կար արհամարհական թշնա

մանք։ Շփելով ցաված կողքը, միստը Խեյզը հիշեց այդ  
առավոտ կարդացած հողվածը պետությունների հաստա-  
տուն քաղաքականության մասին Զինաստանում։ Մտածեց  
չարանենք խնդրությամբ, նայելով հեռացող ուսանողի կունա-  
կին—«Սպասեցնք, մենք ձեզ ցույց կտանք։ Մենք ձեզ խելքի  
կը բերենք»։ Սթափված այդ հարվածից, նա նայեց փողո-  
ցին ուշադրությամբ։ Նրան զարմացրեց անսովոր աշխա-  
ժությունը, վոչ սովորական ամենորյա կենդանությունը։  
Մարդկանց գեմքերին չելին նկատվում ջղային շտապողա-  
կանություն և առորյա հոգսեր։ Այն բոլոր գործայինը,  
կոպիտը, տղահը, վոր ստիպում եր ամեն որ կույր շտա-  
պողականությամբ հեղեղել քաղաքի փողոցները, կորել եր  
անհետ, փոխարինվելով խոժոռ ինքնամփոփումով և դադանի,  
ամոթած տրամությամբ։ Զարմացած դարձավ քարտու-  
ղարին։

- Ի՞նչ կա. այսոր տո՞ն և դրանց։
- Վ՞հ, սեո, ընդհակառակը։
- Այսինքն ի՞նչ։
- Սպի որ և, սեո։ Մահվան տարեդարձը...
- Ո՞ւմ մահվան։

Դրանք, սեո, ի հարկե հիմարություններ են, — վա-  
խեցած կմկմում եր քարտուղարը, շեղելով մեղապարտ հա-  
յացը մի ինչ-վոր ցուցանակի։  
— Դե — և միստը Խեյզը դժգոհությամբ կիտեց հոն-  
քերը։

Խուսափելով իր պետի հայացքին հանդիպելուց, քար-  
տուղարը մըթմըթաց՝

— Այսոր դոկտոր Սուն-Յաթ. Սենի մահվան տարե-  
գաբն ե։ Դրան զուգընթաց, նրանք ցույց են կազմա-  
կերպում... յեվրոպացիների դեմ... Դուք հասկանում եք,  
սեո, ինչումն ե բանը...»

Խեյզը հասկացավ։ Նա թթվեցրեց դեմքը, ասես մի  
գոյալ քացախ զոռով լեցրած լինելին նրա բերանը։ Ցեղ  
խկույն կորավ հաճելի տրամադրությունը, Զգաց միան-  
գամից, թե ինչ վատ սեղմում են կոշիկները, խեղդում ե  
ոձիքը, իսկ հանգած ծխամորճը այրում ե բերանը նիկո-  
տինի կծու դառնությամբ։ Հեռվից ծանրորեն լողաց խուլ  
աղմուկը։ Նա մոտենում եր, վորոտով դղրդացող ալիք-  
ներով, կորչում եր և ալա նորից վերադառնում հնչուն-  
ների փոթորիկով։ Բայց ահա դղրդյունը լեցրեց փողոցը։  
Անկյունից դուրս սողաց մարդկանց առաջին շարքը։ Գորշ  
պատերի ֆոնի վրա ցնծագին ծածանվեցին դրոշակները։  
Խեյզը նայում եր տառերի կայտառ վոլորներին, աշխա-  
նելով լուծել այդ անծանոթ բառերի գաղտնիքը։ Նա  
տեղով անծանոթ բառերը ասում են ինչ վոր հատկապես  
զգում եր, վոր այդ բառերը ասում են ինչ վոր հատկապես  
կարևոր, ցամանալից և զայրագին բան։ Հարցրեց քարտու-  
ղարին։

- Ի՞նչ և գրված դրանց վրա։
- Քարտուղարը թարգմանեց ընդհատվող ձայնով՝  
— «Մաքրվենք ազգային խայտառակությունից»։
- Ելի։
- «Կորչեն բռնագրավիչ յեվրոպացիները»։
- Ուսերը թափ տվեց և շուռ յեկավ։ Դղրդում ելին փո-  
նվագախմբերը, Պղնձյա հնչյունները նեղվում ելին տների պատե-  
ղոցի ճեղքերում։ Նրանք զարնվում ելին տների պատե-  
ղոցի, ցրվելով անհամար արձագանքների և, վոստնելով  
տանիքների վրայով, թոշում ելին դեպի ազատ արձակը։  
Նրափողոցներից Նանկին-ռոդն ելին թափվում մարդկանց  
նոր ու նոր շարքեր։ Փողոցը տնքում եր նրանց քայլերի  
մասնը թյան տակ։ Այստեղ կային ուսանողներ, թոքախ-  
անը հունգար ու իտալիացիներ, անհայտ բանակների զինվորներ,  
նավահանգստային կուլիներ, յերկաթուղային բանվորներ,

ջուլհակագործներ, նավավարներ, դարբիններ և ուստու-  
րանների ծառայողներ: Բայց ամենից ավելի շատ ելին  
բանվորները՝ ձախ, գործարանային ափից: Խեյքը առաջ  
ել տեսել եր այդ ծակոտած շասլիկները, բայց վոչ այդ-  
պիսի քանակով: Տեսել եր նրանց գետի ձախ ափին, բան-  
վորական թաղերում: Այստեղ եր նրանց տեղը: Բայց  
թողնել նրանց յեվրոպական Նանկին-ուող փողոցը: Զի-  
նշանակում, արդյոք, դա, բաց թողնել վայրի գաղաննե-  
րին իրենց վանդակներից:

Վոտաբորիկ ոփկանների և կեղտոտ, ճարպակալած շա-  
պիկներով կուլիների շարքերի միջև տեսալ հանկարծ աշա-  
կերտուհիների փոքրիկ խուժը՝ սև զգեստներով և մաքուր  
գոզնոցներով:

— «Նրանք ել մասնակցում են ցույցին» — զարմացավ  
Խեյքը:

— Այո, սեռ, նրանք ևս, — հնազանդ ու տրտում նկա-  
տեց քարտուղարը:

Միստը Խեյքից յերկու քայլ տարածության վրա ընդ-  
հարվեցին յերկու տղամարդ: Մեկը, ըստ յերկույթին,  
բանվոր եր: — Նրա ամբողջ հագուստն եր լայնեղը հարդյա-  
վամարկը և ճարպոտած վարտիքը: Մյուսը հազնված եր  
միանգամայն յեվրոպական տարագով — չեսուչայե շրջա-  
զգեստ և գունավոր կոշիկներ: Յերկուսը միաժամանակ  
ներողություն խնդրեցին: Յեվ հանկարծ, ի մեծ զարմանս  
Խեյքի, սկսեցին յերկար իրարու ձեռք թոթվել, ինչպես  
անում են յեվրոպացիները (չինացիները ձեռք չեն սեղ-  
մում): Նկատելով Խեյքի զարմանքը, նրանցից մեկը, նա,  
վոր բանվորի յեր նման, սկսեց բացահայտ թշնամությամբ  
վիտել յեվրոպացիներին: Խեյքը խստորեն սեղմեց շրթունք-  
ները և շուրջ յեկավ այնպիսի շարժումով, վոր, տասես, մի

ծես պաշտպանելով աիրողը, առաջ շարժվեց և կասկա-  
ծանքով հոտոտեց ճարպոտած վարտիքը: Բարձրացրեց  
Դողովով շրթունքները, սրեց ժամանիները և... անսպա-  
սելիորեն բարձր փոշատց: Զինացին հանկարծ բարձր ծի-  
ծաղեց, մի ինչ-վոր հանդուգն բան կանչեց ուղիղ Խեյքի  
յերեսին և, սուր սուլոց արձակելով, խառնվեց ամբոխի  
մեջ: Խեյքը անզուսպ ցանկություն զգաց ուղղելու նրա  
վրա Գրիգին, բայց ժամանակին զսպեց իրեն, հիշելով,  
վոր այդպիսի հաճույք կարելի յե ստանալ միայն յեվրո-  
պական անձեռնմխելի թաղամասում: Մարմինների պատը  
հանկարծ անսպասելիորեն նրան կպավ, տեղից պոկեց,  
պտտեցրեց և տարագ: Մի ինչ-վոր տան դարպասի սյու-  
նակին կառչելով, նա դժվարությամբ կարողացավ մնալ  
իր տեղում:

Վախենալով ամբոխի նոր գրոհից, Խեյքը բարձրացավ  
թումբի վրա և կանգնեց մեկ վոտքի, բռնելով լապտերա-  
սյունից: Շարժելով ազատ ձեռքը, մի կերպ հավասարա-  
կուություն եր պահպանում, զգալով իրեն անվստահ ու  
իմար վիճակում: Զար, ջղային մըթմըթոցով դիմավորեց  
ամբոխի միջից դեպի նա անցած քարտուղարին: Մոլորված  
ջրիգը վոռնում եր հեռվում, հազիվ լսելի ձայնով: Կան-  
չել նրան չհամարձակվեց: Վախեցավ իր վրա դարձնել այդ  
ոտար, անհասկանալի մարդկանց ուշադրությունը: Իր առաջ  
կոռնված ամբոխի վրայով միստը Խեյքը տեսնում եր ամ-  
բողջ փողոցը: Հանկարծ նա ցնցվեց: Ոտար, անհասկա-  
նալի բառերի անհեթեթ աղմուկը ձեղքեց ծանոթ, հարա-  
զատ լեզուն: Անհանգստությամբ շարժեց գլուխը և տե-  
սավ նրանց: Դրանք նավաստիներ եյին: Ձեռք-ձեռքի,  
յերկար շարքերով լողում եյին նրանք ընդհանուր հեղեղի  
մեջ: Նրանք յերգում եյին մարտերի յերգը, բարրիկադ-  
երի յերգը, վորը կանչում եր բոլոր ստրուկներին և սո-  
ուրի յերգը, վորը կանչում եր բոլոր ստրուկներին և սո-

վածներին քանդել, քայքայել հին, փոտած, ատելի աշխարհը: Նրանց քայլերը ամուր են ու հաստատ—լուրջ ու խիստ:

Մոռացած իր դիրքի անհեթեթությունը, Խեյզը գոռաց ամբողջ ուժով՝

— Կանգ առեք, կանգ առեք:

Նավաստիների շարքը, ասես հրամանով, շուռ յեկավ դեպի գոռացողը և չորս տասնյակ աչքեր զարմանքով հառեցին այդ պարոնին, վորը մեկ վոտքով պար եր գալիս թումբի վրա. Միատեղ Խեյզը վազեց դեպի նավաստիները:

— Յես ձեզ հրամայում եմ, կանգ առեք:

Շարքը կանգ առավ: Նավաստիները շրջապատեցին Խեյզին, կատաղորեն թափահարելով սեղմած բռունցքները, Խեյզը գոռում եր —

— Ինչպես եք հանդգնում: Դուք, նորին մեծության հպատակներդ, դուք յերգնում եք ըմբոստ յերգեր և մասնակցում եք այս ասիական վայրենիների ցույցերին: Իսկույն գնացեք ձեր նավերը: Այդ հրամայում եմ յես — Վիլյամս Խեյզս: Դե, մարշ, շնուր:

Ծուռ վոտքերով մի կարմրահեր նավաստի առաջ անցավ և ընդհուպ մոտեցավ միստը Խեյզին: Նա յերկար ժամանակ համառորեն նայում եր խոսողին: Յեվ հանկարծ, բռնելով նրա ոճիքից, լոելայն թափ տվեց:

— Լսիր, բարեկամ,—ասաց նա հանգիստ, — յեթե դուք այստեղ, մեր հայրենիքում թույլ չեք տալիս մեզ վոչ միայն գործելու, այլև մտածելու մեր ուզածի պես, ապա այստեղ դուք այդ չեք արգելի: Վոչ, սեռ: Ապա ուրեմն, կորիր այստեղից: Դու այստեղ ավելորդ ես:

Մազոտ ձեռքի մի արագ, կայծականման հարված, և Խեյզը զարմանքով գոաց, վոր թուչում ե մի ինչ-վոր տեղ:

Ընկավ յետևում կանգնած մարդկանց գիրկը. բայց մարդկի մի կողմ քաշվեցին, և նա կպավ տան պատին, ցավեցնելով գլուխը սուր անկյունին... Բարձրացրեց ընկած գլխարկը և մթագնած հայացքով շուրջը դիտեց: Տեսավ միայն փողոցը, վորը նորից գլուխների և դրոշակների անընդհատ հեղեղով հոսում եր նրա առաջից: Քայլերի դուփյունը և յերգերի հնչյունները բութ ցավով արձագանքում եյին գլխում: Նրան թվում եր, թե բավկահան ե, վոր ընդհատվի այդ համաչափորեն յերերվող գլուխների անվերջ շարանը, վորպեսզի թեթևանա ինքը, անցնի խեղդող, մահացու թախծի զգացմունքը և հանգստանան լարված ջերը: Բայց նրբափողոցները փողոց եյին նետում նոր ու նոր շարքեր: Յեվ նրանց վերջ չկար: Արդեն լապտերները վառվել եյին, յերբ նա, վերջապես, դուրս յեկավ ծանոթ լուռ փողոցը:

Անկյունում, յերկու քայլ չհասած իր տանը, կանգ առավ: Վերհիշեց այդ որվա բոլոր ապրումները և պարզութեավ միայն գործելու, այլև մտածելու մեր ուզածի պես, ապա այստեղ դուք այդ չեք արգելի: Վոչ, սեռ: Ապա ուրեմն, կորիր այստեղից: Դու այստեղ ավելորդ ես:

ՅԱՊՈՆԻԱ

«ԶԻՆՈՒԿՆԵՐԸ» ԸՆԴԱՅՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԱՀՅՈՒՅՑՆԵՐՆԵՐԸ

— Ալեքսանդրա Պավլովնա, Միմիկի յեղբայրը ուզում  
ետալ մեղ իր զեկուցումները և նկարները Յապոնիայի  
մասին մեր ցուցահանդեսի համար,—հայտարարեց Հոփփոփիկը,  
յերբ «չինուկները» նորից համարմեռին, և ।

— Ե, ինչ կա վոր, վերցըք, Բայց այնքան ել լավ չե, վոր մենք ունենք մեր ցուցահանդեսում յերկորդ աստիճանի աշակերտի աշխատություններու:

— Վոչինչ, Ալեքսանդրա Պավլովնա, —կանչեցին յերե-  
խաները, —չե՞ վոր նա մեր նե — Սիմիկի յեղբայրն ե և մեր  
դպրոցի աշակերտը։ Թող նա մեր շեքը լինի։

Յապոնիային վերաբերյալ նյութերը բերին և շտապ  
կարգով տեղափորեցին արևելյան ցուցահանդեսի համար  
հատկացված դասարանի ազատ անկյունում։ Սիմիկի յեղ-  
բայրը — Գրիգորը, վոր վեցերորդ խմբակի աշակերտ եր,  
ոգնում եր փոքրիկներին կարգի բերելու իր բերած պատ-  
կերներն ու հողվածները։

— Յեկեք, յերեխաներ, — ասում եր նա, — ամեն ինչ  
ըստ կարգի տեղավորենք, Նախ և առաջ կախ տանք Յա-  
պոնիայի քարտեզը:

Քարտեզին յերեխաները կցեցին հետեւյալ բացարա-  
կան հոդվածը.

«Յապոնիան խոշոր ասիական պետություն եւ Նազնիում եւ, ինչպես յերկում եւ քարտեզից, կղզիների վրա՝ Վեց հարյուրից ավելի կղզիներ մտնում են այդ պետության կազմի մեջ, նրանցից ամենակարևորներն են Էետեյալ չորսը՝ 1) Խոնսյու — Տոկիո և Յոկահամա գլխավոր քաղաքներով, 2) Կյուույու, վորի վրա գտնվում եւ ամենակարևոր նավահանգիստ Նագասակին, 3) Միկոկու և 4) Խոկկայդո։ Ամբողջ յերկրը շատ լեռնոտ եւ և ունի մեծ քանակությամբ գործող հրաբուխներ։ Այստեղ շատ հաճախ յերկրաշարժ եւ լինում։ Միջին հաշվով տարեկան լինում ե 1.461 յերկրաշարժ, այսինքն որական և յերկրաշարժ։ Մեծ, քայլքայիչ աղետներ լինում են յուրաքանչյուր 5—6 տարին մի անգամ։ 1923 թ. սեպտեմբերին Յապոնիայում տեղի ունեցավ սոսկալի յերկրաշարժ, վորը կոչվեց «մեծ յերկրաշարժ»։ Նա քանդեց Տոկիոն — յերկրի մայրաքաղաքը բազմաթիվ ֆարբեկներով ու գործարաններով, Յոկահաման — այդ խոշոր ծովափնյա քաղաքը, վորով ահազին քանակությամբ ապրանք և տարվում արտասահման, այլ և շատ ուրիշ քաղաքներ ու գյուղեր։

Բնական հարստությունները ու գյուղական գաղտնիայում  
շատ քարածուխ կա, թեև նրա վորակը բավական ցած եւ:  
Կան պղնձահանքեր և ծծումբ, բայց համարյա չկա ար-  
ծաթ և վոսկի, այլ և, վոր ավելի վատ ե, շատ քիչ յեր-  
կաթ կա ու նավթ, յապոնացիք ստիպված են այդ նյու-  
թերը ներմուծել ուրիշ յերկրներից։ Նավթը անհրաժեշտ  
և Յապոնիային բազմաթիվ ֆարբիկների և գործարանների  
համար, այլ և նավերի։ Նրա բացակայությունը մեծ հոգա-  
ւ պատճառում արդյունաբերողներին ու զինվորականնե-  
րին։ այդ պատճառով նրանք ամեն կերպ ձգտում են պա-  
հել իրենց ձեռքին նավթով հարուստ Սախալին կղզին,  
վորը մինչև 1905 թ. պատկանում եր ամբողջովին Ռու-

սաստանին, իսկ ոռւս՝ յապոնական պատերազմից հետո ցարական կառավարությունը, պարտություն կրելով, ստիպված յեղավ նրա հարավային մասը գիշելու Յապոնիային:

Յապոնական ծովերում կան ահազին քանակությամբ բազմազան ձկներ: Անտառների թիվը նույնպես շատ մեծ է և հնարավորություն ե տալիս զարգացնելու լուցկու, թղթի և փայտի մշակության արդյունաբերությունը: Կամֆարայի ծառը, վորը բանում ե առավելապես ֆորմոզակղզու վրա, մեծ յեկամուտ ե տալիս յերկրին. ամբողջ աշխարհը գնում է կամֆարա կամ Յապոնիայում և կամ Չինաստանում: Շատ կան Յապոնիայում նաև թթի ծառեր, վորի վրա բազմանում են մետաքսի վորդերը. այդ պատճառով ել յերկրը վոչ միայն կարիք չի զգում մետաքս ներմուծելու, այլ և ինքը արտահանում ե Ամերիկա մետաքս — հումույթ և մետաքսյա կտորեղենի ցած տեսակները:

Բույսերից Յապոնիայում շատ տարածված են բրինձը, գարին, ցորենը և բակլան: Կան նաև թեյի պլանտացիաներ, բայց այստեղ նրանք այնպիսի մեծ նշանակություն չունեն, ինչպես Չինաստանում: Բամբակ քիչ կա:

Յապոնիայի բնական հարստությունները հնարավորություն տվին նրան զարգացնելու արդյունաբերության ամենաբազմազան ճյուղերը: Յապոնական արդյունաբերությունը սկսեց աճել և ծաղկել վերջին 50—60 տարիների ընթացքում, յերբ այդ ասիական յերկրը սկսեց վճռականորեն յուրացնել և արմատացնել իր մեջ յերկրոպական տեխնիկան և կուլտուրան: Այսպես, 1926 թ. արտադրված է 31,400 հազար տոննա քարածուխ (59 անգամ ավելի, քան կես դար առաջ) և 822 հազար տոննա չուզուն (հարյուր անգամ ավելի, քան կես դար առաջ): Պողպատ Յապոնիայում առաջ բոլորովին չեր արտադրվում, իսկ 1926 թ.

արտադրված է 1,131 տոննա: Նույնքան գորեղ թափով գարգացել ե և տեկստիլ արդյունաբերությունը, վորվերամշակում ե մետաքսը և բամբակը: 50 տարվա ընթացքում տեքստիլ արդյունաբերության արտադրանքը ավելացել է գրեթե 500 անգամ: Մոտավորապես նույն անգամ տեսնում քիմիական, թղթի, փայտագործական և արդյունաբերական այլ ճյուղերի մեջ: Զեռնարկությունների առանձնապես արագ աճումը տեղի յե ունեցել համաշխարհային պատերազմի ըրջանում: Գործարաններին զուգընթաց հաճել ե նավաշինարարությունը և ստեղծվել ե գորեղ ու հաճուս ու ուղղական և առևտրական նավատորմիղ»:

### ՅԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՅԱՊՈՆԻԱՅՈՒՄ

— Ահա, յերեխաներ, յերկու նկար, վորոնք պատկերացնում են, թե ինչ է կատարվել Յապոնիայում վերջին յերեաշարժի ժամանակ, — շարունակեց Գրիգորը: — Մ եկ յերկրաշարժի ժամանակ, — վարունակեց Գրիգորը:

— Ա՛ս, ինչ հետաքրական ե — բացականչեց Հոփիսիկը: — Պատմիր մեզ վորեե բան յերկրաշարժի մասին:

— Վոչ, յես ժամանակ չունեմ, — պատասխանեց Գրիգորը, — յես տղաների հետ կոռպերատիվ եմ գնալու գնումներ անելու:

Ոգնության հասավ ուսուցչունին:

— Ցեթե ուզում եք, յես ձեզ կկարդամ մեծ յերկրաշարժի մասին, վորը տեղի ունեցավ Յապոնիայում մի քանի տարի սրանից առաջ, — ասաց նա:

— Խնդրում ենք, Ալեքսանդրա Պավլովնա, խնդրում ենք, — վրա բերեց Հոփիսիկը: — Ցես այնքան սիրում եմ լսել պատմվածքներ կենդանիների մասին և սարսափելի բաների մասին — փոթորիկների, ժայթքումների, յերկրաշարժերի:

Վոչ մենակ չորիփսիկը — մյուս աղջիկները ևս սկսեցին խնդրել ուսուցչուն կարդալ վորենե հետաքրքրական բան: Ուսուցչունին հանեց պահարանից անգլիական զրող Պերիփ գրքույկը և սկսեց ընթերցումը.

«Եաբաթոր, որվա կեսին, լսվեց առաջին ուժեղ ստորշերկրյա ցնցումը: Յերկրի մակերեսույթը յերերաց ծովի պես, իսկ տները վեր ու վայր ցատկեցին, ինչպես փոքրիկ նավակները մեծ նավի առաջացրած ալիքների վրա: Ապա շենքերը վայր ընկան, կոտրվելով բևեռների, ասես մի մեծ մուրճի հարվածներից: Շենքերից մի քանիսը դանդաղ նստում ելին իրենց կտուրների ծանրության տակ, իսկ մյուսները միանգամից տապալվում ելին: Մի մեծ հյուրանոց Ցոկահամա քաղաքում վիլվեց միանգամից, ասես թղթատնակ, իսկ նրա բնակիչները վերին հարկից ուղղակի գետնի վրա թափվեցին, զարմացած, սակայն անվնաս: Մի կին մնաց ամենավերել — պատի մի բեկորի վրա, վաննայում, ուր վրա յեր հասել յերկրաշրժը: Նրան ազատեցին:

Ահագին ճեղքվածքներ կտրում ելին փողոցները, իսկ յերկրի ներսը տնքում եր ու դղրդում, ասես բյուր-բյութմբուկի մեջ: Շուտով առաջին հարվածին հետևեց յերկրորդը, վոր պլորվում են ինչ վոր հսկայական կրորդը, վոր ավարտեց սկսված ավերումը: Յերբ փայլեց կեսորվա արել, խտաբնակ քաղաքների, քանդված շենքերի վրա բարձրացավ դեղին մառախուզ: Իսկ փայտաշեն տների վրա, վորոնք իսկույն հրկիղվել ելին, բարձրանում ելին սկ ու գորշ ամպեր, Ուժեղ քամի յեր փչում, և կես ժամից Տոկիոն վառվեց 50 տարբեր տեղերում:

Հրդեհը ծավալվում եր, իսկ դեռ չնանգստացած գետոցը շարունակում եր ցնցվել, Տարերքի վոռնոցն ու դղրդոցը սարսափեցնում ելին մարդկանց, սպառնալով նորանոր աղետներ: Ամբոխները շարժվում ելին մեկ առաջ,

մեկ յետ, քարշ տալով իրենց հետ վոչ միայն յերեխաներին, ծերերին և հիվանդներին, այլ և ամբողջ իրենց գույքը՝ շորերը, անկողինները, արկղները՝ ու կողովները, վիզած սայլակների վրա կամ տղամարդկանց ու կանանց ուսերին: Սկզբում նրանք դանդաղ ելին շարժվում, վորովհետեւ Տոկիոյի բնակչությունը սովոր ե յերկրաշարժերի ու հրդեհների, բայց հետո նրանց հանկարծ յերկուող պատեց, նրանք հասկացան, վոր կատաղել ե ահեղ տարերքը:

Ցեվ ամբոխները վազեցին: Ընտանիքները կորցնում ելին իրարու և մարդկային մարմինների այդ քառսի մեջ կոսկըտում ելին յերեխաններին, Վայրենի աղաղակներ ելին կովում, ամբոխները վազում ելին մեկ այս, մեկ այն կողմը:

— Կրակը մեզ վրա յե գալիս. յետ, դեպի յետ:

— Այնտեղ անվտանգ ե, գնանք այնտեղ:

— Ոգնության հասեք, ոգնության:

— Մենք չենք կարող ոգնել. մերոնք վտանդի մեջ են:

— Դեպի գետը, դեպի գետը. գետի մյուս ափին և փրկությունը:

Խուճապի մատնված ամբոխները վազում ելին դեպի գետը, գունատ յերեսները յերկինք բարձրացրած և վայրի հայացք ձգելով ծիփ սև ամպերին: Տների ավերակների հուսահատորեն յերկարած ձեռքերը բռնում ելին տակից հուսահատորեն յերկարած ձեռքերը բռնում ելին տակից հուսահատորեն յերկարած մարդուանց վոտներից ու շորերից, և կենդանի թաղված մարդուանց աղիողորմ ձայները փրկություն ելին աղերսում: Կանց աղիողորմ ձայները փրկություն ելին աղերսում: Լսվում ելին աղերսանքի և հուսալքության սրտակտուր նում բոցերի այրող շունչը: Նրանք զոհ են մնալու կրակին: Նում բոցերի այրող շունչը:

— Դեպի գետը, դեպի գետը:

— Բայց ուր են կամուրջները:

Նրանք բոլորը փլել-ընկել են, բացի մեկից, վորի յերկաթե մի ձողը մնացել ե: Տոկիոյի միջով հոսող գետը լայն

եռ լորը, և շատ չեյին այն համարձակները, վորոնք սիրտ արին սողալու այդ միակ նեղ շավով դեպի մյուս ափը, դեպի անվտանգությունը: Մյուս բոլորը կանգնած եյին ափին, սպասում եյին ու վոռնում: Խոկ յետեկց կրակը մոտենում եր, Արդեն կայծերը թռչկոտում եյին մարդկանց զլուխների վրա, ընկնում եյին նրանց վրա և կծում, ինչպես չար միջատներ, կրակը, անընդհատ ճարճատալով, անհագուրդ ագահությամբ լիզում եր չքավորների խրճիթների չոր տախտակները և այդ անդուսպ ճարճատյունը հնչում եր, ասես մի այլ, սոսկալի ամբոխի հեռավոր ձայներ...»

Գետի ափին մահվան սպասողների թիվը ավելանում եր հարյուրավոր ու հազարավոր անդամ, և փախստականների ամեն մի նոր ալիք մոտեցնում եր ամբողջ մասսան մի քայլ ևս առաջ դեպի գետը և ապա նորից յետ եր նահանջում հուսաթափ, Դատապարտվածների մասսայի այդ տանջալից տարուբերումները սոսկալի եյին:

Յեկ ապա բռնկեց վերջին տնակը ամբոխի մոտ, Վերջին անգամ առաջ խուժեց ամբողջ զանգվածը, Պոռնոցը վերածվեց վայրենի ճիշերի, վորը հանկարծ լուց միանգամից, Շարքերը շարքերի յետեկց ջուրն եյին թափվում, ասես մարդկային հակեր, վոր հնձում եր վերեկց անտեսանելի գերանդին: Վրա հասավ գիշերը, բայց չմթնեց: Գիշերը լուսավոր եր ցերեկվա նման, բայց վողջ պարուրած կարմիր կրակով, վորը վոռնում եր ինչպես մրրիկը: Վառվում եր քաղաքի յերկու յերրորդը: Կուղան ըլրի վրանց դեպի հարավ նայելիս, այնպես եր թվում, թե բացվել ե յերկրագունդը և յերկում ե նրա հրահալ միջուկը: Քամին անգամ հրային եր թվում, խոկ քաղաքը կրակի ծով եր մեջ ծամածովող հրեշներով: Յերբեմն նրանք բարձրացնում եյին զլուխները, հրե պսակով շրջակալված, և ապա նորից կորչում վարդագույն ծխի ամպերի մեջ,

Սոսկալի պատմություններ եյին անցնում բերնից բերան այն փախտականների մոտ, վոր ապաստան եյին դաել հասարակական պուրակներում: ամբողջ ընտանիքների մասին, վորոնք յեփվել եյին ջրանցքներում, բոցերի սյունով ողը բարձրացած և այլևս գետին չիջած մարդկանց մասին, Խոնձում այրված փախստականների մի ամբողջ բանակի մասին, ուր 34 հազար մարդ կործանվել են մի քանի բուպեյում:

Մի կերպ մահվանից փրկված մարդիկ հավաքվեցին պուրակներում: Շատերը նրանցից կորցրել եյին թանկագին հարազատներ անասելի վողերգական պարագաներում: Նրանց զգեստները պատառուտած եյին, մաղերը խանձված, խոկ աչքերը կարմրել եյին ու գրեթե կուրացել ծխից և տապից: Բայց նրանք համբերատար եյին և նույնիսկ աշխատում եյին մի կերպ ոգնել յերեխաններին, ծերերին և թույլերին, վորոնց վերաբերմամբ յապոնացիները միշտ հոգատար են ու բարի:

### ՅԱՐՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԸ

— Այս ինչ բան ե, Գրիգոր, — հարցրեց ուսուցչուին, թերթելով բերած տետրակները: — Զեկուցնեմ յապուսական քաղաքի մասին:

— Այս, աշխարհագրության ուսուցչի առաջադրանքով ևս վերցրի Հառուցների Հասեսնված Յապոնիան գիրքը և մասմբ արտազրեցի, մասմբ ել իմ խոսքերով շարահյուսիցի այդ գրքից յերկու զլուխ:

— Այդ պետք է զետեղել մեր ցուցահանդեսում: Հետեյալ որը յերեխանները կարդացին Գրիգորի զեկուցումը:

Յերբ ահազին կայարանից դուրս եք գալիս Տոկիո,  
դուք մի ըստե մոռանում եք, վոր գտնվում եք Յապոնիա-  
յում։ Չեր առաջ յեվրոպական մայրաքաղաք ե բացվում։  
Ահազին շենքեր, ասֆայլտով լեցված և չուգունի վոլորուն  
լապտերներով զարդարված հրապարակներ։ Անկյուններից  
հանդիսավոր կերպով դուրս են սահում բարձր կանաչ  
տրամվայները, տակսիները լույսի պայծառ ճառագայթ-  
ներ են գցում իրենց առաջից։ Այդ փարթամության մի-  
ջով ե տանում ձեզ տրամվայը մոտ հինգ ըստե։ Հետո  
շենքերը հանկարծ իջնում են տասը հարկից մինչեւ յեր-  
կուսը։ Այժմ ձեր առաջ են մի շարք ցեմենտե տնակներ  
նոր յապոնական վոճով, իսկ մի տասը ըստեյից դուք տես-  
նում եք բազմաթիվ հին յապոնական տնակներ թղթե  
շրջանակների մեջ։ Մի քիչ ել անց դուք ավելի ու ավելի  
հաճախակի կհանդիպեք դարձուր ըուղղայական տաճար-  
ների\*։ Դուք յեկել եք անցյալ դարի վայրը։ Այսեղ տրամ-  
վայը փոխում ե կոնդուկտորին և վերադառնում ե դեպի  
ժամանակակիցը։

Լիովին յեվրոպական և ժամանակակից եւ հանդիսանում Տոկիոյում միայն կենտրոնական առևտրական թաղամասը՝ Այստեղ շարված են հսկայական շինություններ, վորոնք զբաղված են բազմաթիվ առևտրական ֆիրմաների անթիվ գրասենյակներով:

Այդ շենքերը ապրում են առավոտյան ութից մինչև  
յերեկոյան հինգը։ Մյուս ժամերին նրանք անմարդաբնակ  
են։ Նրանց միջանցքները խաղաղ են ու ամայի նույնիսկ  
աշխատանքի ժամերին։ Յերեք ընդարձակ լիփտ բարձրա-  
ցնում են այցելուներին, զորոնք իսկույն անհետանում են  
կիսալակյա դռների յետեր։ Ժամանակ առ ժամանակ սպա-

սուճիները կապույտ կիմոնոյով \* և սեահեր բոյերը \*\* լիա-  
դում-անցնում են փայտե մատուցարաններով, վորոնց վրա  
շարված են յապոնական թեյով բաժակները: Գրասենյակ-  
ներից մեկի գուռը բացվում է: Ներսում ամեն ինչ սո-  
վորական ե բուրժուական քաղաքի համար՝ — սեղան, բարձր  
զրասեղան շարժական խփով, մեջնագրուհու փոքրիկ  
սեղան, վրան դրած պուդրայի տուփը: Մեքենագրուհին,  
վոր կիմոնոյի վրա կապույտ խալաթ ե հագած, դիտում ե  
սեագիրը և հոփհարով զովանում: Բոյը սենյակն ե ավում  
բամբուկե փայտին ամրացրած ավելով: Գրագիրները, թերը  
քշտած, առանց պիղժակի, լեցնում են մատյանները:

Ֆիբրմաների դարպասներին շարքերով կանգնած են որկ-  
շաները։ Նրանց գլխին դրված են հին-յալոնական, անիվ-  
ների չափ աճազին, գլխարկները, վոր, ասես, սավառնում  
են գլխի վրա։ Նրանք գլխին չեն հացցրած, այլ ամրա-  
ցված են գանգը ըրջակալած յերկաթե թիթեղի վրա։ Գլխարկի  
յեղին սպիտակ թվերով նշանակված ե որկշայի համարը—  
2782. Դրանք, իսկապես, գլխարկ ել չեն, այլ հովանոց,  
վորոնց նպատակն ե պաշտպանել անձրեց և արեից։ Յապո-  
նիայում ամեն ինչ պատվանդանի վրա յե։ Կոշիկները պատ-  
վանդանի վրա յեն, վոր 10 սանտիմետրով բարձր ե գետ-  
նից։ աներն ել պատվանդանի վրա յեն, Յապոնիան ան-  
ձրեկ յերկիր ե։ Ոիկշաները շատ կարճ վարտիկներով են,  
յերկարաւունք ձիու վոտներով և սմբակներով։ Բանը  
նրանում ե, վոր յապոնական գուլպաները, դուրս ցցված  
ըթամատով, զարմանալիորեն նման են սմբակների։ Իսկ  
ոիկշաները հագնում են նրանց առանց կոշկի, վորպեսզի  
ավելի թեթև վազեն։

\* Ազգային լապոնական գրեստ:

\*\*  $\beta_{nI} = \delta_{m,n} \omega_I$   $m$

\* Տաճարներ, նվիրված ասիական հին արտօնություն — Բուդդային:

Արկանի ըլ վազում են փողոցներով, ճարպիկորեն շարժվելով տրամվայների և ավտոմոբիլների միջև։ Միկաների միջև սլանում են հեծանիվները։ Տոկիոյի հեծանիվավորները աշխարհի ութերորդ հրաշքն են։ Նրանք կատաղի արագությամբ թռչում են ուղղակի ձեր վրա և վերջին մոմենտներին, մի սանտիմետր տարածության վրա, յերբ դուք արդեն մտածում եք այն մասին, թե վորքան պիտի ծախս պահանջի կոտրած վոաքիդ բուժումը, վայրկենապես կանգնում եք յետեր անիվի վրա և անփութորեն անցնում եք ձեր մոտով, միաժամանակ շտկելով գլխարկը և վառելով ծխախոտը։ Յես պատահել եմ մի հեծանիվալորի, վորը թռչելով գլխավոր փողոցով, ավտոների և տրամվայների քառով միջով, վարում եր ձախ ձեռքով, իսկ աջ ձեռքում բռնած ուներ մի մատուցարան, վեր ուտելեղեններով, դարսված յերեք հարկի վրա։ Ի՞նչ անես — ուստորանի տերը չի պահի այն բոյին, վորը չկարողանա ճաշը տեղ հասցնել տաք վիճակում։

Կենտրոնական փողոցները շատ աշխույժ են։ Մայթերը մեն են շտապող, զբունող կամ գարպասներում անհետաշող ամբոխներով։ Բայց ամբոխը այսուհետ միապաղաղ եւ, Այստեղ չկա համաշխարհային մայրաքաղաքների — Պարիզի, Լոնդոնի, Մոսկվայի ֆանտաստիկ բազմազանությունը։

Ահա անցնում ե փողոցի մեջ կողմից մյուսը մի պարոն մոխրագույն շորերով։ Նա զրամենյակից շտապում ե ուստորան՝ ճաշելու։ Այսոր նա ճաշում ե յեվրոպավարի, դա նշանակում ե, վոր  $1\frac{1}{2}$  յենայով ( $1\frac{1}{2}$  ոուրլի) նրան տավս են հինգ տեսակ կերակուր — վարդագույն, կանաչ, կապույտ, մսից ու կանաչեղենից պատրաստած, և զարմանալի սպիտակ հաց, վորի վրա կարելի յէ զրել և վորի մեջ կարելի յե փաթաթել ուտելեղենը։ Նա արագ ուտում ե, վառում ե ծխախոտը և շտապ վերադառնում

գրասենյակ։ Նա այնպես շտապում ե, վոր ընդհարվում է կիմոնոյով ծերուկի հետ, վորը դանդաղ զբունում ե։

— Ներեցեք, — և պարոնը շարունակում ե իր ճանապարհը։

Ծերուկը դժգոհությամբ գիտում ե կիսայեվրոպական ամբոխը։ Նա նորություններին դեմ ե, նա կողմնակից ե ին Յապոնիային։ Նրան վրդովում են յեվրոպական ուսուորանների վայրուն ցուցանակները, վորոնց յետեւում նստած են մսակերները։ Հին ժամանակները յապոնացիները մսեղեն չեյին գործածում։ Ծերուկը թոթվում ե զլուխը և շակում ե սև կտորը, վորով ծածկված են նրա բերանն ու քիթը. զա պաշտպանում ե փոշուց։ Այդպիսի փաթթոցներով մարդիկ շատ են Տոկոյի փողոցներում։ Նրանք ուղում են իրենց պաշտպանել ամեն տեսակ հիվանդություններից, փողոցային փոշու մեջ վիստացող բացիւներից։

Լրագրավաճառները փողոցների անկյուններում թափեն տափս պղնձե զանգուլակների կապոցը։ Վոստիկանը, ու մունդիրով և սպիտակ ձեռնոցներով, փոշուց պաշտպանող փաթթոցով, բարձրացնում ե ձեռքը և միանգամից կանգ ե առնում ամբողջ փողոցային շարժումը։ Փոշոցով անցնում ե գիմնազիստների (միջնակարգ դպրոցի աշակերտների) շարքը, թափահարելով բեզբոլի կաշվե ձեռաշակերտների շարքը, թափահարելով իրթական մոլությունն ե։

Քաղաքի ծայրամասն ե։ Տնակների շարան, վորը ձեղում ե փողոցը և բազմաթիվ նրբափողոցները։ Մոսկվայի անթիվ խառնիխուռն, ծուռ ու մուռ նրբափողոցները ահազին փողոցներ են, համեմատած Տոկոյի նրբափողոցների հետ։ Սրանք այնքան նեղ են, վոր իրար գեմ առ դեմ դանված տնակների շեմքերից կարելի յե իրարու ձեռք

սեղմել, այնքան խճողված են, վոր նրանց մեջ մոլորդում  
ե նույնիսկ բնիկ տոկիոցին, հարևան վողոցի բնակիչը:

Այդ նրբափողոցները լի յեն մինարէանի և յերկնար-  
կանի տնտեսութիւն, Տնակները պատուհան չունեն, իսկ նրանց  
առջիկ պատերը միշտ ներս են քաշված, Յերբ անցնում  
ես այդպիսի նրբափողոցով, տեսնում ես միայն պատերի  
շարանը, տախտակե շրջապատն՝ բը և նրանցից դուրս ցցված  
ժամերը: Ահա մի այդպիսի յերկնարկանի տունն նրանում  
ապրում ե միջին կարողության տեր բուրժուական ընտա-  
նիք: Տեսնենք, թե ինչպես ե ապրում նա:



Նկ. 1. Յապոնացի կանայք զբաղվում են սպորտով:

Առավոտ ե, ժամը ութը: Աղախինը արդեն լվացել է  
խոհանոցը և պատրաստել ե բրինձ: Տանուտերը հագնում  
ե կիմոնոն և դուրս և սողում մոսկիտներից պաշտպանող  
ցանցի տակից, վորը թափանցիկ կանաչ քողով վարագու-  
րում ե ննջարանը: Յեզրոպական սենյակից նույն ձեռվ  
դուրս են սողում ցանցի տակից նրա վորդիները — վարտիկ-  
ներով, մերկ մարմնով, վերի սենյակից դուրս ե սողում, բար-  
ձրացնելով ցանցի ծայրը, աղջիկը — առավոտյան կիմոնոյով:

Լվացվելուց հետո, բոլորը նախաճաշում են: Նախա-  
ճաշից հետո վորդիքը հագնում են վորոշ ձեփ բաճկոնները  
պղնձե կոճակներով, հավաքում են գրքերը և գնում գիմ-  
նազիա: Տանտերը դանդաղ ծխում ե: Տատիկը ձեռքերն  
ե տաքացնում վառարանի մոտ: Մադիոն խոպոտ ձայնով  
նորություններ ե հաղորդում:

Ապա զարթնում ե և ինքը տունը:


Նա ճառցով զեն ե ձգում իր վրայից զիշերվա փայտե  
վերաբկուն: Յապոնական տունը ցերեկը թղթե յե, իսկ  
կիշերը — փայտե: Նա շրջապատված ե նեղ պատշգամբնե-  
րով, վորոնց անկյուններում լայն, մեջը դատարկ պատեր  
են: Այդ պատերի մեջ դրված են ծալված փայտե շիրմա-  
ները: Գիշերը նրանք դուրս են քաշվում և այդպիսով կազ-  
մվում ե յերկրորդ փայտե պատը: Ուռավույան տանտի-  
րուհին և աղախինը նորից ծալում են նրանց և պահում:  
Նրանք քաշում են նա և թղթե պատերը և ներս և խու-  
ժում պարտեզը: Ապա նրանք հավաքում են ցանցերը և  
անկողինները, վերմակները և բարձերը և դարսում են  
պատի մեջ շինած պահարաններում: Սենյակները դատար-  
կվում են: Յապոնական տունը նման ե կրկնակի հատակ  
ունեցող չեմոդանի:

Նախասենյակում հատակը մի քիչ բարձրացած ե: Նրա  
տակը, քարերի վրա, դրված են կոշիկները և յապոնական  
փայտե վոտնամանները — զետան: տուն մտնելիս, նրանց  
հանում են — սենյակներում ման գալ կարելի յե միայն  
կուլպաններով:

Նկարագրված տան առաջին հարկում յերեք սենյակ  
կա: Նրանցից յերկուսը միաժամանակ թե սեղանատներ  
են և թե ննջարաններ: Սեղանատուն են դառնում նրանք  
միայն ճաշի ժամանակ, իսկ ննջարան — ընելու ժամանակ:  
Դուրսաբար նրանք բոլորովին դատարկ են — բացի հատա-

կից ու պատերից վոչինչ չկա: Պատերը նույնպես քաշ-  
վում են և այն ժամանակ մարդիկ նստում են բարձր հա-  
տակի վրա, ինչպես ըեմի վրա, պարտեզի կենդանի դեկո-  
րացիայի մեջ, ուր տնկված են մի քանի ծառ, յերկու թուփ  
և շինված ե փոքրիկ ալազան վոսկե ձկնիկներով:

Հատակը ծածկված ե փափուկ հարդյա ծածկոցներով,  
վորոնց վրայով յապոնացիները քայլում են, վորոնց վրա  
նստում են, աշխատում և քնում: Սենյակներում վոչ աթու-  
ներ կան, վոչ նստարաններ: Նստում են մարդիկ բարձերի



Նկ. 2. Յապոնական հարուստ տան ներսը:

վրա, վոտքերը հենելով հատակին, ճաշում են փոքրիկ,  
ցածրիկ սեղանների վրա, վորոնք հետո պահում են պատի  
պահարաններում: Սենյակները զարդարում են միայն ծա-  
ղիկներով՝ ծաղկամանների մեջ, շիրմաններով և նաշխած  
նկարներով:

— Քիտեք, յերեխաներ, — ընթհատեց ընթերցումը  
ուսուցուհին, — պարտիղպահությունը և ծաղկաբուծու-  
թյունը շատ են տարածված Յապոնիայում: Այդ յերկումը  
յեղած մարդիկ պատմում են, վոր յապոնական պարտեզ-

ները ներկայացնում են իրենցից ինկական արվեստի ստեղ-  
ծագործություն, իսկ ինքը ծաղկաբուծությունը — մեծ ու  
բարդ գիտություն: Սակավահողության պատճառով ինչպես  
քաղաքներում, նույնպես և զյուղերում պարտեզների հա-  
մար հատկացվում են շատ փոքրիկ հողամասեր: Այդ պար-  
տեզներում բացվում են թզուկային բույսեր, վորոնք հա-  
մաշխարհային հոչակ ունեն: Ծառերը այնպիսի վարպետու-  
թյամբ են խուզվում, վոր ստանում են թռչունի, կատվի,  
նաևի կամ տաճարի ձև:

Հոչակալիոր ֆրանսիական գրող Ֆարերը նկարագրու-  
ե յապոնական այդ պարտեզներից մեկը:

«Դա մի փոքրիկ հրապարակ էր, յերկարությամբ 10 մետր,  
շրջապատված յերեք պատերով: Սակայն այդ փոքրիկ հրա-  
պարակի վրա պատկերացված էին լեռներ ու հովտներ,  
անտառ ու ջրվեժ, քարայր ու լիճ, — այդ բոլորը, իհարկե,  
ամենափոքրիկ չափերով: Ծառերը թզուկային ելին, ամե-  
նամեծը — վոչ բարձր հացաբույսի հասկից: Միայն Յապո-  
նիայում պիտեն այդպիսի բույսեր բացներ: Այսոեղ բանում  
իին փոքրիկ բաղնիներ, ծածկված անուշաբույր վարդա-  
ելին փոքրիկ բաղնիներ, լեռներ ելին ներկայացնում մեծ վար-  
դույն ծաղկիներով: Լեռներ ելին ներկայացնում մեծ վար-  
դույն պետությամբ շինված փոքրիկ հողակույտերը, իսկ լիճը —  
վետությամբ շինված փոքրիկ հողակույտերը, իսկ ծովը —  
վապոնիայում բանվորները: Դուք չունեք հողված  
բույսությամբ բանվորները: Դուք չունեք հողված  
բանվոր դասակարգի զբության մասին այդ յերկում, ուստի  
յես ինքս գրեցի այդպիսի մի հողված ձեզ համար: Յեկեք,  
կարդանք միամին:

— Բայց, յերեխաներ, չկարծեք, վոր այդպես են ապ-  
րում Յապոնիայում բանվորները: Դուք չունեք հողված  
բանվոր դասակարգի զբության մասին այդ յերկում, ուստի  
յես ինքս գրեցի այդպիսի մի հողված ձեզ համար: Յեկեք,  
կարդանք միամին:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍՎԱՐԳԻ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ ՅԱՊՈՆԻԱՅՈՒՄ  
(Ուսուցչուհու նոդվածք)

Յապոնիայի քարտեզին կցած ծանոթության մեջ դուք  
ինքներդ ևս գրեցիք, վոր այդ յերկրի արդյունաբերու-  
թյունը վերջին կես դարի ընթացքում չափազանց աճել է:  
Ֆարբիկների և գործարանների թվին զուգընթաց աճում ե,  
իհարկե, և բանվորների թիվը: Ներկայումս նրանց թիվը  
հասնում է 10 միլիոնի: Յապոնական պրոլետարների թվում  
բավականին խոշոր տեղ են զրավում կանայք և յերեխա-  
ները: Շատ ձեռնարկություններում բանվորական որը շա-  
րունակվում է 12 ժամ և ավելի: Բայց կան նաև ֆարբիկ-  
ներ ու գործարաններ, ուր աշխատանքը տևում է 10, 9  
և նույնիսկ 8 ժամ, սակայն

«Ամեն մեկը, ով առիթ ե ունեցել գիտելու բանփոր  
դասակարգի կյանքը Յապոնիայում, — գրում են այդ հարցը  
ուսումնասիրած մարդիկ, — չի կարող չհամաձայնել, վոր  
նա չափազանց ծանր եւ Նազարակիյում, Կորեյում, Յո-  
կահամայում և այլ նախահանգստաներում կարելի յե միշտ  
դիտել նավերի քարածուխով բեռնափորելու պլոցեսը, վո-  
րին մասնակցում են ամենափոքրիկ յերեխաներ, կանայք  
և զառամյալ ծերունիներ։ Նրանք կանգնում են տախտա-  
կամածների վրա և ձեռքից-ձեռք են հանձնում քարածու-  
խով լիքը Կողովները։ Ներքեում կանգնում են ամենից  
թույլերը, իսկ ավելի վեր — ամենից ուժեղները։ Յերե-  
խաները վերցնում են դատարկ կողովները և տանում են  
լիցնելու։ Աշխատանքը կատարվում է սաստիկ արագ մի  
քանի ժամ շարունակ առանց վորեե ընդմիջումի, և դուք  
տեսնում եք, թե վորքան ծանր եւ հյուծիչ քարածուխի  
փոշիով թափանցված այդ ողում աշխատելը։ Մոտավորա-  
պես նույն պայմաններում տարվում է աշխատանքը հին

Փաբրիկներում և գործարաններում. այդ իսկ պատճառով  
յապոնական բանվորների խոշոր տոկոսը հիվանդանում ե  
թոքախտով:

Միջ յապոնական գրող էր «Տոկիոյի հատակում» գրքի  
մեջ ասում եւ — «Մայրաքաղաք Տոկիոյի բանվորական թաղի  
փողոցներից մեկը ներկայացնում եւ իրենից կեղտի և քայ-  
քայման աննկարազրելի՝ աստիճան։ Նրբափողոցները նման  
են կեղտոտ ջրի ձահճուտների, սատկած մկները նեխվում  
են արեկ տակ, արտաքնոցները չեն մաքրվում։ Հնամաշ  
փայտե վոտնամանների, փտած բրնձի և ձկան ամբողջ  
լեռներ թափված են չորսդին, կտուրները կարկատված են  
հին խմբների կտորներով, այդ բոլորը միասին վերցրած,  
նման ե անապատում ընկած բերդի, վոր ծակոտվել ե  
ուռմբերով ու փամփուշտներով։

Բանվորների ցեցերն են մանր վաշխառուները և զբավ գնողները, վորոնք գրավ են վերցնում բանվորներից նրանց շորերը, անկողինները, տակառները, յերկաթե կաթսաները, հովանոցները, ճաշի ցածլիկ սեղանները, դուլերը, սան-դալները, նույնիսկ նրանց բաց շապիկները, վոր տալիս ե գործատերը (դա յուրատեսակ սպեցզաբատ է, վորի մեջքի կամ կրծքի վրա խոշոր սև տառերով գրված և ֆիրմայի անունը): Այդ բոլոր իրերի համար չքավոր բանվորը ստիպ-ված է լինում հետո կրկնակի վճարելու, վորպեսզի յետ ստանա: Վաշխառուները, բացի դրանից, տալիս են նրանց վարձով այն իրերը, վորոնց կարիքն և զգում բանվորը, վարժով անել չի կարող, և դրանով ևս ահազին փող են վաս-տակում:

Մեծ թվով բանվորներ զբաղված են տեկստիլ արդյունաբերության մեջ, ապա՝ յերկաթավողատային և նավաշինարարական, արտադրության մի քանի ճյուղերում կանաչնաց թիվը շատ ավելի մեծ է, քան աղամարդկանց, որին

նակ, տեկստի արդյունաբերության մեջ 1 տղամարդ բան-վորին ընկնում ե 5 կին-բանվորուհի, 8 նայնազործական արհեստների մեջ կանանց թիվը  $2^{1/2}$  անգամ ավելի յե, քան տղամարդկանց, բանվորուհիների գրությունը զգալի չափերով ավելի վատ ե, քան բանվորների: Նրանք շատ ավելի քիչ աշխատավարձ են ստանում և հաճախ ավելի յերկար են աշխատում, քան իրանց ամուսինները և յեղբայրները: Բազմաթիվ բանվորուհիներ ապրում են ֆաբրիկային հանրակացարաններում, կերակրվում են նրանք գլխավորապես յեփած բրնձով, իսկ յերբեմն ավելի ևս վատ — բրնձին խառնում են ավելի եժան գարին, կորեկը կամ քաղցր կարտոֆելը: Շաբաթը մեկ-յերկու անգամ դրան ավելա-նում են բանջարեղենները, միաը կամ ձուկը, բայց կան և այնպիսի ֆաբրիկներ, ուր ամբողջ տարիվա ընթացքում վոչ մի անգամ չեն տալիս վահ միս և վահ ձուկ: Փոքրիկ ֆաբրիկները չունեն նույնիսկ հատուկ հանրակացարան-ներ բանվորների համար և նրանք ստիպված են լինում ապրելու նախասենյակներում կամ ֆաբրիկային արհես-տանոցներում: Այդ սենյակները չեն յենթարկվում ողա-փոխության, նրանք մութն են և այնքան նեղ, վոր շնչելն անգամ դժվար է: Յեթե բանվորը այստեղ հիվանդանում ե, նա պետք է կամ մնա այդ ընդհանուր սենյակում, կամ գնա, ուր վոր ուզի, վորովհետեւ այդ ֆաբրիկներին կից չկան վահ հիվանդանոցներ և մու եւ ամ:

Դ է լ շ ա բ ք ա ս ց ս բ և կ ո չ ե լ ա մ բ ու լ ա տ ո ր ի ա ն ե ր ։  
Դ ե ռ ա հ ա ս ն ե ր ն ու յ ե ր ե խ ա ն ե ր ը ն ո ւ յ ն պ ե ս ա շ խ ա տ ո ւ մ  
ե ն ձ ե ռ ն ա ր կ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ո ւ մ, թ ե և ո ր ե ն ք ը ս ա հ մ ա ն ա փ ա կ ո ւ մ  
ե մ ա ն կ ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ը ։ Յ ե ր ե խ ա ն ե ր ը ա շ խ ա տ ո ւ մ ե ն  
զ լ ի ս ա վ ո ր ա պ ե ս բ ա մ բ ա կ ա -թ ղ թ ա յ ի ն, մ ա ն վ ա ծ ա յ ի ն, դ ե ր ձ ա ն ի,  
ա պ ա կ ու, կ ա զ մ ա ր ա ր ա կ ա ն և լ ո ւ ց կ ու գ ո ր ծ ա ր ա ն ն ե ր ո ւ մ։  
Ա ղ ջ կ ն ե ր ի ն ծ ն ո ղ ն ե ր ը շ ա տ ա վ ե լի հ ա ճ ա խ ե ն ու ղ ա ր կ ո ւ մ  
գ ո ր ծ ա ր ա ն, ք ա ն տ ղ ա ն ե ր ի ն, փ ո ր ո ն ց ձ գ տ ո ւ մ ե ն դ պ ր ո ց

ուղարկել։ Յերբեմն ձեռնարկության մեջ աշխատող յերեսաների ընդհանուր թվի 80% աղջկներն են կազմում և միայն 20% — տղաները։

Յապոնիայի բանվոր դասակարգի բոլոր առողջ ու զի-  
տակից տարրերը վաղուց ի վեր ձգտում եյին կազմակերպ-  
վելու միությունների մեջ — իրենց դասակարգային շա-  
հերի և իրավունքների պաշտպանության համար։ Ստեղծ-  
վեցին մեծ քանակությամբ բանվորական միություններ,  
բայց յերբ ամբողջ Յապոնիայում ծափալվեց բանվորական  
գործադրությունների և հուզմունքների շարժումը, կառավարու-  
թյունը սկսեց պայքար մղել պլոյետարական միություն-  
ների դեմ։



Նկ. 3. Գործադուլավոր տեկստիլ բանվորների ցուցը

Յապոնիան միակ յերկիրն և Ասիայում, վորը վոչ միայն  
կախում չունի յերբողացիներից, այլ և ինքը փորձում է յեն-  
թարկել իրեն հարևան յերկրները — Չինաստանը, Կորեյան:  
Յապոնական պրոլետարիատը ստիպված է, իր դասակար-  
գային շահերի և իրավունքների պաշտպանության համար,  
պայքարել վոչ թե ուսարյերկրյա կապիտալիստների դեմ,  
ինչպես Չինաստանում, այլ սեփական կապիտալիստների  
դեմ: Կապիտալիստները շատ ուժեղ են ու կազմակերպ-  
ված, իսկ բանվոր դասակարգի ուժերը դեռ ևս ջլատված

Են, ցրված ու անկազմակերպի, Բազմաթիվ ֆաբրիկներում և գործարաններում աշխատում են 5 միլիոնից ավելի արդյունաբերական բանվորներ, իսկ պրոֆմիությունների մեջ կազմակերպված են միայն 300 հազար բանվորներ։ Այդ յերեսութիւ պատճառներն հետևյալն են՝

Առաջինը. պատերազմի ընթացքում Յապոնիայի արդյունաբերությունը չափաղանց աճեց, վորովհետև Յապոնիան գրեթե չեր մասնակցում կորինքներին և կատարում

եր մյուս պատերազմող յերկրների ուսումնական պատվերները, Արդյունաբերության ծաղկման հետ միասին աճեց նաև բանվոր դասակարգը, վորը սկսեց կազմակերպվել պրոֆմիությունների մեջ և վորոշ չափով բարելավել իր կյանքի ու աշխատանքի պայմանները։

Սակայն, պատերազմը վերաբռնուց հետո արդյունաբերության դրությունը վատացավ, մասնավանդ 1920 թ. հետո, Շատ բանվորներ մնացին առանց աշխատանքի։ Պործազրկությունը մինչև այսոր ել զգալիորեն վնասում և յապոնական պրոլետարիատին,

Յերկրորդ. յապոնական արդյունաբերողները կազմակերպել են բազմաթիվ ֆաշխատական, սևարյուրակային ընկերություններ, վորոնք միշտ լրտեսում են բանվորանվորական ժողովներին, բոնությամբ ցրում են պատկանական ժողովները, թակում են և նույնիսկ սպա-

նում հեղափոխական բանվորներին և պրոֆմիությունական դորձիչներին։

Յերրորդ. յապոնական կառավարությունը վերջին տարիներս ամեն կերպ արգելք է հանդիսանում բանվորական հեղափոխական կազմակերպությունների ստեղծմանը, հետապնդում և պրոլետարական քաջ ու համարձակ մարտիկներին, մահապատժի յե յենթարկում կոմունիստներին և ընդառաջում ե, աջակցում բանվորական այն չափավոր համաձայնողական կազմակերպություններին, վորոնց գլուխնենցած յապոնական մենշևիկները, սոցիալ-դավաճանները, սոցիալ-ֆաշիստները։

Սակայն, չնայած այդ բոլոր դժվարություններին, յապոնական բանվորները մղում են քաղաքական ու տնտեսական պայքար — գործադուլներ են սարքում, անդամագրվում են ձախ բանվորա-գյուղացիական կազմակերպությանը, պատգամավորներ են ուղարկում, ընտրողական պայքար մղելով, յապոնական պարլամենտը։

Յապոնական պրոլետարիատը, հեղափոխական պրոֆմիությունների մեջ կազմակերպված, դեռ յերկար ու համառ պայքար պետք է մղե կոմունիստական կուսակցության և կոմինտերնի ղեկավարությամբ։

Ընթերցանության ժամանակ վերադարձան տղաները և բերեն թղթեր, գունավոր մատիտներ, կնոպկաներ և այլ նյութեր ցուցանողեսի համար։

Ընթերցումը ընդհատվեց, Յերեխաները կախ տվին պատից յապոնացիների պատկերները — յելքութական և ազգա- յին տարազով հաղնված յապոնուհիների պատկերներ — կիշին ծանոթագով հաղնված յապոնուհիների պատկերների տակ փակցրին փոքրիկ ծանոթություն՝

Նկ. 4. Յապոնական հայտնի կուսակցության նկատմամատը



«Յապոնացիք, ինչպես և չինացիները, պատկանում  
են դեղին ցեղին, բայց արտաքինով նրանք չինացինե-  
րին չեն նմանում: Նրանց մաղերը ուն են. հին ժա-  
մանակները տղամարդիկ շատ բարդ ու յուրատեսակ  
սանրվածք եյին կրում, իսկ այժմ խուզվում են և  
ածիւլում յեփրոպական ձևով: Կանայք մինչեւ այժմ ել  
շատ բարդ սանրվածք են կրում, վորի համար ահա-  
գին ժամանակ են կորցնում: Յապոնացիների — թե  
տղամարդկանց և թե կանանց — ազգային զգեստն ե  
ռողդածիկ խալաթը գույնզգույն մետաքսից կամ այլ  
կտորից — կիմոնո, վորը տղամարդիկ կապում են  
մեջքից մետաքսյա գոտիով, իսկ կանայք — յերկար ու  
լայն գունավոր ժապավեններով: Վոտքերին կրում են  
հատուկ ձեի կոժիկներ, վորը չունեորները փոխարի-  
նում են բորիկ վոտներին կապած հարդե տապանով:  
Գլուխները ամառը չեն ծածկում, բայց քաղաքի բնա-  
կիչները կրում են յուղաթղթե կամ մետաքսի տա-  
փակ հովանոցներ բամբուկե կոթերով:

\* \* \*

— Յեկեք, յերեխաներ, կարդանք յապոնական զրող  
Խայստիի պատմվածքը, վոր կոչվում է «Խնձորներ», —  
առաջարկեց մի որ Ռնիկը:

— Իսկ նա շատ յերկար չե, — անհանդատությամբ հար-  
ցրեց Հոփիսիկը:

— Վոչ, շատ յերկար չե, — հանգստացրեց նրան Ռն-  
իկը: — Մեծ յեղբայրս տառւմ ե, վոր պատմվածքը շատ  
կարելի յե բաց թողնել, վորպեսզի հնարավոր լինի մի ան-  
գամից կարդալ:

Հոփիսիկը հաշվեց եջերը և հանգստացավ:  
— Դե, կարդա, — ասացին յերեխաները:  
Ռնիկը նստեց սանդուխքի վրա և սկսեց կարդալ:

„Խ Ն Զ Ո Ր Ն Ե Ր“

(Բա Խայստիի)

Ձմեռ ե: Խոկկայդոյի ունեոր բնակչին նա բերում ե  
ձյունով զարդարված նոճիների գեղեցիկ տեսարաններ և  
ճարճատող փայտերի պայծառ կրակը, շպրտվող ձյունի  
հնչյուններ և զիշերային սկատմություններ: Նույն այս  
ձմեռը բերում ե Խոկկայդոյի բանվորին մրրիկ, սովատանջ  
վիճակ և յերկար ամիսների գործազրկություն: Վորքան  
վորանում ե ձմեռը, այնքան ավելի սաստկանում և գոր-  
ծազրկությունը յալունական հյուսիսային Խոկկայդո կղզու  
նավահանգիստաններում: Միակ գրկությունն ե — գնալ ձեկ-  
նորսության Մերձծովյան շրջանը:

Նայեցեք ծովին. դուք կտեսնեք այնաեղ ավրանքա-  
տար նավեր ճերմակ սարքերով, կողմին փոքրիկ կատերով  
և բարձրացնող կրանով: Կայմի վրա գրոշակն ե ծածան-  
կամուց: Կամ դուք կտեսնեք, թե ինչպես յերերվում  
վում քամուց: Կամ դուք կտեսնեք մեջ շխունան գեղին կայմերով և ոժանդակիչ  
և ալիքների մեջ շխունան գեղին կայմերով:

Յուրաքանչյուր տարի, նախատեսնելով գործազրկու-  
թյունը, այդպիսի շխունաները կամ ապրանքատար նա-  
վերը շտապ սարքավորվում են, հավաքում են բանվոր-  
վերը ձկնորսներ և դառնում են ձկնորսական նավեր: Ուտելիքի  
ծախսը նավատերն ե ծածկում, իսկ վորաված ձուկը —  
կետան — այնպես ե բաշխվում, վոր մեկ մասը նավատերն  
առանում, իսկ յերկու մասը — բանվորները: Այդպիսով  
ամեն մի բանվոր ստանում ե առնվազն յերեսուն ձուկ:

Ե՞ս, ի՞նչ կա վոր։ Քանի վոր կետաների մեջ պատահում  
են յերբեմն ահազին ձկներ — մարդու հասակի մեծության,  
յեթև նույնիսկ շատ եժան ծախսեն, հատին կընկնի 2 յենա  
50 սեն (մեր փողով 2 ռ. 50 կ.): Այդպիսով, հաջողգում ե  
յերբեմն աշխատել ամեն մեկին 75 յենա (մոտ 75 ռ.):  
Կարծես, սա ավելի լավ ե, քան թե սառշել կամ մեռնել  
առանց աշխատանքի, քամիների և ձյուների մեջ։ Այդպես  
են մտածում բոլորը։

Դեպքը պատճել է սրանից հինգվեց տարի առաջ՝  
Այն ժամանակ յես յերիտասարդ բանվոր ելի և յեկել ելի  
կենտրոնական Յապոնիայից ձկնարդյունաբերական Ոթարա  
քաղաքը։ Յես ուրախությամբ դարձա կետա վորսացողնե-  
րից մեկը։ Համենայն դեպս, գոնե աշխատանք ճարեցի։  
Գոնե վորևե բարեհաջողություն։

Պայմաններին համաձայն, մեզանից ամեն մեկը ստացավ յերեսուն հինգ ձուկ։ Յեփ յերք վերադարձի ճամբան ընկանք, վերջապես, սկսվեց տարորինակ յերկույթի։ Նավի վրա գտնվող մարդիկ դեղնացին։ Որեցոր թուլանում ելինք, Զեռքերս ու վոտներս սոսկալի ուսեցին։ Մննդի մեջ յերկար ժամանակ բանջարեղեն չլինելու պատճառով սկսվեց

սարսափելի հիվանդությունը—ցինգան, կապիտանը ասում էր՝ «Բանջարեղենը բոլորովին վերջացավ։ Ճանապարհ ընկնելիս վերցրել ելինք, զորքան հնարավոր եր»։

Այժմ արդեն վորեւ նավահանգիստ վերադառնալու հնարավորություն չկար; Բայց յեթե փորձելինք ել վերադառնալ, — բաղաքներն ու զաշտերը ծածկված ելին ձյունով; Հույս չկար թարմ բանջարեղեն ստանալու:

Շատ ծանր ժամանակ եր, Յես անընդհատ մտածում էին, թե ինչ անել, ինչպես վարվել: Հո չի կարելի թողնել, վոր անհիատելի տղըռուկները ծծեն մեր ալյունը:

Յերբ նավի վրա սաստկացավ ցինգան, կապիտանը մի  
ինչ զոր տեղից դուրս բերեց մի տակառ խնձոր, Նա  
սուռմ եր, վոր համաձայն ե խնձորները փոխելու ձկան,  
Ասուռմ եր, վոր մարդանասակ մի ձկան փոխարեն, վորը,  
հաշված ամենացած գներով, արժեքը յերկու և կես ոռոքի,  
կտա մի խնձոր, վորը այնտեղ, ցամաքի վրա, արժե ամե-  
նաշատը տասը կոպեկ:

— ԴԵ, համաձայն եք, — հարցնում եր մեզ կապիտանը. Այժմ մեկ խնձորի փոխարեն կառնեմ մեկ ձուկ, իսկ յեթե մի քիչ ել ուշացնեք, մեկ խնձորին յերեք ձուկ կպահանջեմ. Իսկ առայժմ դեռ համաձայն եմ փոխել խնձորը կետային, մեկը — մեկին. Համաձայն եք:

Ի՞նչ պետք ե անելինք: Յեթե չվերցնելինք — ցինգա,  
մահ և սպառնում: Գիտելինք, վոր դա նավատիրոջ սար-  
քած ոյինն ե: Յերեսուն ութը բանվոր խոր մտատանջու-  
թյան մեջ ելին: Յեկ վերջիվերջո բոլորը տվին կետան և  
վերցրին խնձորները: Յերբ մենք կերանք այդ խնձոր-  
ները, մինչև վերջինը, կճեպից մինչեւ միջուկը, հասկա-  
ցանք, վոր նրանք կյանքի աղբյուր են յեղել: Յերբ յես  
վերադարձա Ոթարա, — վայնչ չուների, ինչպես և մեկ-

նելուց առաջ՝ Սակայն, խճարների շնորհիվ, փրկված երկյանքս: Այս ինչ ոյին ե յեկել իմ գլխին»:

Բայց բանվորները ամեն անզամ չեն թողնում, վոր  
իրենց այդպիս ստոր ձևով խարեն: Նրանք մտնում են  
բաց և գաղտնի բանվորական միությունների մեջ, վորոնք  
դիմադրում են նավատերերի, զործարանատերերի, վաճա-  
ռականների և այլ կապիտալիստների ստոր արարքներին,  
պայքարում են նրանց դեմ: Նույն այդ յապոնական ձրկ-  
նորսը, վորը պատմեց ինձ ձկների ու խնձորների պատ-  
մությունը, վորոշել և արդեն, վոր մյուս անզամ նա  
թույլ չի տա, վոր իրեն խարեն:

— Յես արդեն այս չեմ, ինչ վոր սրանից հինգ տարի  
տուած ելի, — ասում եր նա: — Ծծկեր մանուկն ել յե-  
րեք տարուց յերեք տարեկան և դառնում: Վերջին ժա-  
մանակներս իմ աշքերն ել մի քիչ բացվել են: Զե՞ վոր  
կապիտանը, մեքենավարը և ձկնորսական նավի այլ վար-  
չությունը ընդամենը հինգ-վեց մարդ են, իսկ մենք, բան-  
վորներս, առնվազն յերեսուն: Յեկ յեթե մեզ ասեն, վոր  
վերջացել ե բանջարեղենը, մենք կկարողանանք վերցնել  
նրանցից խնձորները: Այդպիսով թե մեր աշխատած կե-  
տան մեզ կմատ և թե կարեք չենք զգա ցինդայից վախե-  
նալու: Առաջ, յերբ յես գեռ ծանոթ չեմ այդ պարզ  
թվաբանությանը, ինձ թվում եր, վոր անհնարին և այդ-  
պես վարվել, իսկ այժմ յես կկարողանամ կազմակերպել  
բանվորներին վաշխառու կապիտանի դեմ:

Սրանով Ունիկը վերջացրեց պատմվածքը:

— Յես ել բերել եմ ծովափնյա քաղաքի կյանքի փոք-  
րիկ նկարագրությունը, — ասաց Սաշան և հանձնեց յե-  
րեխաներին հետեւյալ հատվածը Հայոցների գործից:

...«Յակոնաման աշխարհի ամենալինը նավահանգիստ-  
ներից մեկն եւ Բայց և այնպես այդ նավահանգիստը կա-  
րելի յէ անցնել մեկ ափից դեպի մյուսը առանց վոտքդ  
թրջելու, — անցնելով տախտակամածից - տախտակամած:  
Այդքան լեցուն ե նա նավերով: Նավերը այստեղ կանգ-  
նած են կողք-կողքի: Նրանց ծխնելույզները ծխում են  
անընդհատ, և հեռվից կարծում ես, թե դա քաղաքի ամե-  
նախտ բնակած թաղն եւ:

Ամբողջ աշխարհի դրոշներն են ծածանվում ծովի վրա.  
գերմանական արձիները այստեղ սկսվի շատ են, քան  
ճայերը, թթքական կիսալուսինը բարձրանում ե ամերիկա-  
կան ապաղերի վրա, խորհրդային կարմիր դրոշը վառվում  
ե. ինչպես արշալույս, իսկ նրա կողքին ծագում ե յապո-  
նական արեւը: Յերեք նավասարի, վորոնց թողել են նավից,  
ձեռք-ձեռքի տված զբունում են նավահանգստում: Մալա-  
յացին սպիտակ մանյակները ականջներին, պատառուտած  
շապիկով, ոև բանվորի ձեռքերի ահազին թաթերով, տա-  
փակ քթով նեգրը, ցանցաշապիկով և ահազին, ասես փղի  
վուներից հանած վարտիքով, բարձրահասակ ու կուցած  
ինդուսը տափակ շըթունքներով. — բոլորը իջնում են նա-  
վահանգստին մոտ թաղերի խավարի մեջ: Սյուեղ նրանց  
ընդգրկում ե խեղճության, աղքատության շնչառությունը:  
Նրանք մտնում են կիսամութ ճաշարանը, վորը կպած է,  
թոշունի բույնի պես, ահազին գործարանի պատին: Կա-  
պույտ գազի շիթը լուսավորում ե կարտված սեղանները  
(նրանցից մեկի վրա ծուռ ու մուռ տառերով փորագրված  
ե «Ինտերնացիոնալի» քայլակը) և մութ ստվերներ և  
ձգում գեմքերին: Ճաշարանի տերը, խորամանկ աշքերով  
չինացին, լայն գործված գոտիյով և վափուկ վոտնաման-  
ներով, փայտի կտորով շուրջ ե տալիս թավայի վրա աղած  
մափ կապտակուն կտորները, վոր անց են կացված բարակ

փայտիկների վլա։ Ամեն մի տեսակ ուտելիք արժե հինգ  
կոպեկ։ Զինացին դուրս ե բերում սեղանի տակից մի շիշ  
սակե — ըլնձի արաղ և լեցնում ե մատնոցի մեծությամբ  
բաժակների մեջ։

Վարագույրը (վոր դուռն ե փոխարինում) բարձրացնելով, ճաշարան են մտնում յապոնացի բանվորները սևոեյտողներով և ձեռնարկության դրոշմը իրենց շապիկների կրնակին։ Սկսվում ե խոժոռ զրույց վատ կապիտանների, չար վերահսկիչների մասին, հարեան գործարանի վիճած գործադուլի մասին, վորից հետո հինգ հայուր բանվոր փողոց են շպրտվել։

Յես դուրս եմ գալիս ճաշարանից և լավտերի կաթնա-  
գույն լույսի տակ տեսնում եմ յապոնական բանվորա-  
գյուղացիական կուսակցության նախընտրական պլակատը—  
փակցը ած գործարանի պատին. պլակատի վրա խորհրդացին  
կարմիր աստղն ե փայլում և նկարված ե բանվորը, մուրճը  
սպառնալիորեն բարձրացրած:

## ՅԱՊՈՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

Արդեն մի քանի շաբաթ եր անցել այն որից, վոր յերեխաները սկսել ելին աշխատել իրենց արևելյան ցուցահանդեսի վրա։ Մի որ Գրիգորը յեկավ տեսնելու, թէ ինչ դրության մեջ ե գործը, և նկատեց, վոր ցուցահանդեսում վոչինչ չկա յապոնական գյուղացիների մասին։

— Յես ձեզ կը բրեմ հողված յապոնական հողագործների մասին։

Յեւ իրոք, մի քանի որից նա ըերեց «Ճինուկներին» իր խոստացած հողվածը,

Գյուղացիները կազմում են Յափոնիայի ազգաբնակչության մեջամասնությունը։ Ապրում են նրանք մոտավորապես նույն պայմաններում, ինչպես և չինական գյուղացիները։

Շատ հին ժամանակներից հողագործները Յապոնիա-  
յում վայելում եին հարգանք ու պատիվ։ Բայց հողը  
պատկանում եր ազնվական-զինվորականներին, իսկ ինըը  
գյուղացին չքավոր եր և ապրում եր շատ վատ պայման-  
ներում։ Անցյալ դարի կեսերին հողերը գրավվեցին խոշոր  
սեփականատերերից և նրանց մի մասը՝ ծախվեց գյուղա-  
ցիներին, բայց արդեն յերեսուն տարուց գյուղացիները  
հողատերերից վերածվեցին վարձակալների, իսկ հողերի  
տեր դարձան հարուստ կալվածատերերը։ Գյուղացիների  
հոծ մեծամասնությունը պետական անտանելի հար-  
կերի ճնշման տակ ստիպված յեղավ գրավ դնելու և ապա  
կորցնելու իր հողամասերը, Յապոնիան, ինչպես մենք  
արդեն գիտենք, վերջին հիսուն տարիների ընթացքում մի  
շարք զարմանալի հաջողություններ ունեցավ ինչպես ար-  
դյունաբերության ասպարիգում, նույնպես և կուլտուրա-  
կան կյանքում առնասարակ։ Այդ բարելավման ու նվա-  
ճումների ծախսերի ծանրության չորս հինգերորդը ընկ-  
նում եր գյուղացիության վրա։ Յերկրի ամբողջ յեկա-  
մուտի ութուն տոկոսը տալիս եր գյուղացին։ Այն բոլո-  
րից, ինչ վոր ստանում ե գյուղացին ամբողջ տարվա իր  
ժանր աշխատանքով, իր և իր տնտեսության համար, նա  
կարող ե ծախսել միայն կեսը, իսկ մյուս կեսը նա պետք  
է տա պետությանը այս կամ այն հարկի կամ տուրքի  
մեռությունը մի քանի շրջաններում այդ հարկերի տե-  
սակների ու անունների թիվը հասնում ե քառասուն չորսի։  
Յապոնական հայտնի կոմունիստ ընկ. կատայաման իր  
գրքի մեջ ապացուցում ե, վոր յապոնական գյուղացին,

թե հողատերը և թե վարձակալը; չի կարողանում ծայրը  
ծայրին հասցնել: Նա հարկադրված է ամեն տարի մի  
կերպ վորեն տեղից միջոցներ ճարել, վորպեսզի կարողանա  
կերակրել իրեն և իր ընտանիքը, վերանորոգել ու տաքա-  
ցնել իր տունը, պարարտացնել հողը, վճարել հարկերը:  
Փօքրիկ հողամասի յեկամուտը, նույնիսկ տարեկան կրկնակի  
բերքի պայմաններում, չի կարող ծածկել բոլոր այդ ծախ-  
սերը: Գյուղացին հարկադրված է լինում ծախսելու և գրավ  
դնելու իր շարժական ու անշարժ կայքը, իր վորդիներին  
ու աղջկներին ուղարկելու քաղաք — աշխատանքի:

Այդպես և պայքարում յապոնական գյուղացին կարիքի դեմ, իր փոքրիկ հողամասը նա մշակում է մեծագույն խնամքով — չե՛ վոր նրանից նա տարեկան յերկու բերք պետք ե ստանա, Բայց հողը դրանից հյուծվում է, հարկավոր ե լինում պահպանել նրա պտղաբերությունը ուժեղ պարարտացումով, վորը վոչ մի յերկրում այնչափ ուշադրություն չի գրավում, վորքան Յապոնիայում:

Յապոնական տանտիրուհին, նույնիսկ քաղաքաբնակը, խոհանոցային բոլոր թափթփուկները, մոխրը, կեղուու սապնու ջուրը հավաքում և հատուկ տակառների մեջ, վորպեսզի հետո այդ բոլորը ծախի գյուղացիներին, վորոնք սովորաբար ամեն յերեկո յերկար շարանով քաղաքից գյուղ են դիմում լիքը դույլերը ձեռներին կամ ուսերի վրա: Յապոնական քաղաքների ու ավանների փողոցներում և բակերում այն ըստորը, ինչ վոր պարաբտանյութի ընույթի կրում, խնամքով հավաքում են, հատուկ ուշադրություն դարձնելով, վորպեսզի այդ նյութերը չկորցնեն իրենց ննդարաբ հատիւթյունները:

Ամենից ավելի յապոնական գյուղացիները ջանք են  
թափում բընձի մշակության վրա, Բընձից հետո ամենից  
ավելի տարածված հացաբույսերն են զանազան տեսակի  
90

գարին և ցորենը. Գարին Յապոնիայում ուսում էն մարդկի. չքավորները խառնում են այդ ավելի եժան բույսը բրնձի հետ. Բացի դրանից Յապոնիայում գործածվում ե կորեկը, զանազան տեսակի բակլաներ և կարտոֆիլ, իսկ արդյունաբերական բույսերից — ինդիգո (կապույտ ներկ պատրաստելու համար), ծխախոտ, բամբակ և կանեփ։ Անասնապահությամբ և անասնաբուծությամբ յապոնական գյուղացիները գրեթե բոլորովին չեն զբաղվում, միայն կառավարությունը կազմակերպում է ձիաբուծարաններ և որինակելի կաթնատնտեսական ֆերմաներ։ Յերկիրը շատ հարուստ ե թեյի պլանտացիաներով, թարգարժեք կամֆարային անտառներով Ֆորմոզա կղզու վրա, վորոնք տարեկան մինչև վեց միլիոն յեկամուտ են տալիս, և բամբուկով։ Յապոնիան ուսումնասիրած մեկը առում է, վարդակար և գնահատել բամբուկի անտեսական նշանակությունը յերկրի համար։ Անհնարին և թվարկել բամբուկի գործադրության բոլոր ձևերը, սկսած ջըմուգային խողովակներից մինչև հովանոցների կոթը, մինչև նրա ջահեծիւքի գործածությունը սննդի համար, մինչև նրա տերևների մեջ նախաճաշ փաթաթելը։ Յապոնացին այնքան ընտելացել ե բամբուկին և այնքան հմուտ կերպով ոգտագործում ե այն, վոր կարելի յեւ սեկ առանց չափազանցության, թե յեթե բամբուկը վերացվի — միաժամանակ կվերացվեն յապոնացու տրամադրության տակ յեղած իրերի

Թթի ծառը, վոր անհրաժեշտ ե մետաքսի վորդի ճամար, նույնպես չափազանց տարածված ե Յապոնիայում: Եթե բամապահությունը յապոնացիների հնագույն զբաղմունքն է, այդ գործում նրանք հասել են կատարելագործության բարձր աստիճանին և կարող են համարվել մասնագետներ առանց մրցակցության: Յապոնացիները զբաղնագետներ

վում են շերամապահությամբ իրենց պատմության հենց  
սկզբից. այդ արվեստը նրանք յուրացըել են, յերկի, չի-  
նացիներից, բայց հետագայում նրանցից առաջ են անցել,  
վորովհետև չինացիք պահպանել են մետաքսի մշակման հին  
ձեերը, իսկ յաղոնացիները բաց են արել շերամապահա-  
կան լաբորատորիաներ, դպրոցներ, ցուցիչ կայաններ և  
նույնիսկ շերամապահական ինստիտուտ։ Այդ բոլորը խոշոր  
չափերով նպաստել ե մետաքսագործական արդյունաբե-  
րության բարելավմանը և զարգացմանը։ Մեկ ու կես մի-  
լիոն ընտանիք զբաղված են շերամապահությամբ, իսկ  
թթի ծառերով բռնված հողերի տարածությունը հասնում  
է գրեթե կես միլիոն հեկտարի։

Զկնորսությունը, բնականաբար, շատ ե զարգացած այդ ծովափնյա յերկրում, վորի ափերին լողում են ահա- գին քանակությամբ ամենաբազմազան ու թանգարժեք ձկներ, Սա ևս յապոնացիների հնագույն զբաղմունքներից մեկն ե. ձկնորսության հետքեր կարելի յե գտնել Յապո- նիայի նախապատճական բնակիչների մոտ: 1919 թվի տվյալներով Յապոնիայի ձկնորսական բնակչության թիվը հասնում եր վեց ու քառորդ միլիոն մարդու՝ ընտանիքնե- րով, վորոնցից իրապես ձկնորսությամբ պարապում եյին մոտ մեկ ու կես միլիոն մարդ, բայց ըստ եյության ձրկ- նորսությամբ զբաղվում ե Յապոնիայի ամբողջ ծովափնյա բնակչությունը: Ձկնորսության ամբողջ արդյունքի ար- ժեքը Յապոնիայում կարելի յե հաշվել մեկ ու կես միլի- արդ յենա (յենան հավասար ե 93 կոպեկի), վորը կազմում ե պետական յեկամտի նյանամու մ:

Այսպիսով, ուրեմն, մենք տեսանք, վոր յապոնական գյուղացու-հողագործի ու ձկնորսի զբությունը շատ ծանր է, վոր նա ստիպված է ծախելու իր հողը և քաղաք ձըգտելու, վորպեսզի այնտեղ աշխատանք ճարի ֆաբրիկնե-

ըում և գործարաններում, Մյուս՝ կողմից, արդեն գործարանում աշխատող բանվորը յերքեմն, արդյունաբերության դաշտարձան և ձեռնարկության փակման շնորհիվ ստիպված է նորից գյուղ գերազանցալ և փնտրել այնտեղ վորեե ապաստարան ու սնունդ։ Ստացվում ե շատ կենդանի և ամուր կապ բանվորների և գյուղացիների՝ միջև, քանի վորքաղքը և գյուղը մշտապես փոխանակվում են իրենց



Նկ. 5. Յաղոնակոն գեղջկուճիները քաղաքից տանում են  
թափթափուկնելով դույլերը:

բնակչությամբ։ Այդ կապի շնորհիվ յապոնական գյուղացիները լավ կազմակերպված են և ընդունակ են հասարակական յելույթների։ Յապոնիայում վաղուց ի վեր գյություն ունեն գյուղացիական միություններ, առանձնապես շատ են հողագուրկ վարձակալ-գյուղացիների միությունները։ Նրանք առանձնապես վատ են ապրում և այդպատճառով ել յերբեք հանդիսատ չեն մնում — նրանք հողա

վում են և խոռվություններ սարքում, առաջարկելով վոչ  
միայն տնտեսական, այլև քաղաքական պահանջներ: 1920 թ.  
տեղի յեն ունեցել 408 խոշոր գյուղացիական հուզմունք-  
ներ, 1921 թ. — 1255, իսկ 1922 թ. ավելի շատ — 1500:  
Ամենից ամելի գյուղացիները դժոհ ելին բարձր վար-  
ձագներից և վարձակալության ծանր պայմաններից, բայց  
մնում են խոռվություններ նաև քաղաքական պատճառ-  
ներով: Հեղափոխական խոռվությունները լինում ելին այն-  
տեղ, որ կային շատ գործադրություն բանվորներ կամ զորա-  
ցրված զինվորներ: Պայքարելով իրենց իրավունքների հա-  
սար, յապոնական գյուղացիները արտաքերում են մեծ  
զգասառություն և զիսցիպինա, վորոնց ջնորհիվ շատ ան-  
զամ հաղթանակող են դուրս գալիս կալվածատերերի դեմ  
մղած պայքարում: Յապոնական կոմունիստ կատայաման  
պատճում և այդպիսի բազմաթիվ գեղքերից մեկի մասին:  
1918 թ. խոշոր հողատերերից մեկը մերժում է գյուղա-  
ցիների խնդիրը — պակասեցնել վարձագինը անբերրիու-  
թյան պատճառով: Գյուղացիները թողնում են հողը և  
դնում են աշխատանքի ածխահանգերը: Համառ կալվածա-  
տերոջ հողերը մնում են անմշակ: Հարկան գյուղացիներից  
վոչ մեկը չի ցանկանում վարձով վերցնել այն հողամա-  
սերը, վոր թողել են իրենց ընկերները: Կալվածատերը  
փորձում է բերել հեռավոր ցրջաններից վարձու դաշտային  
բանվորներ, բայց դրանից ևս բան դուրս չի գալիս, վո-  
րովհետև յապոնական գյուղացիները, ինչպես և յապոնա-  
կան բանվորները, համերաշխ են և իրար ողնում են պայ-  
քարի ժամանակ: Այդպես շարունակվում է յերեք տարի,  
մինչև վոր կալվածատերը բավարարում է գյուղացիների  
պահանջները:

Գյուղացիական միությունները այնպես են կազմա-  
կերպված, վոր նրանց վորոշումները բոլոր անդամները

պահպանում են անխախտությունների հետ վատ վար-  
ված, նրանց պահանջները չբավարարած կալվածատերը  
մնում է գյուղում մենակ — բոլորը նրանից յերես են  
դարձնում, նրան բոյկոտի յեն յենթարկում: Եւոյնիսի  
յեթե հրդեհ պատահի նրա կալվածում — զյուղից վոչ վոք  
նրան ոգնության չի հասնի: Ցեթե մեկը շարունակի հա-  
րաբերությունների մեջ լինել բոյկոտի յենթակա կալվա-  
ծատիրոջ հետ, — նա ինքը ևս բոյկոտի կենթարկվի ամ-  
բողջ շրջանում: Զքավոր գյուղացիության այդպիսի համե-  
րաշխությունը շատ հաճախ նպաստել է նրա հաղթանակին  
հողատերերի հանդեպ, թեև սրանք ևս սկսել են կազմա-  
կերպել իրենց միությունները: Բայց կալվածատերերի  
միությունները թույլ են և պակաս համերաշխ: Յերբ  
գյուղացիությունը սկսեց ներկայացնել վոչ միայն տնտե-  
սական, այլև քաղաքական պահանջներ, յապոնական կա-  
ռավարությունը շտապեց կալվածատերերին ոգնության:  
Մինչև 1922 թ. կառավարությունը զբաղված եր բանվո-  
րական շարժումը ձնշելով, բայց յերբ նա պարզ տեսավ  
և համոզվեց, վոր գյուղացիության մեջ ևս արմատանում  
և հեղափոխական վոգին, — սկսեց գյուղում ևս զործադրել  
զանազան վոատիկանական միջոցներ:

Այսպես, որինակ, Գիֆույում գյուղացիական խրառում-  
ների ժամանակ արգելված եր խփել վոչ միայն յեկեղե-  
ցական, այլև հրդեհաշեջային զանգակները, վորովհետև  
գյուղացիական միությունները սովորաբար զանգահարու-  
թյամբ են հավաքում իրենց անդամներին. արգելված ելին  
վոչ միայն ժողովները, այլև յերկու-յերեք գյուղացու հան-  
գիպումը, իրարու տուն հաճախելը և այլն: Այդպիսի մի-  
ջոցներով վոատիկանական իշխանությունը ձգտում եր ար-  
մատախիլ անել գյուղացիական հեղափոխականությունը:  
Սակայն, այդ միջոցները իրական չելին և չեն, վորովհետև

գյուղացիական շարժումը իր արտաքին ձևերով քիչ եր  
նման բանվորական յելույթներին, վորոնց համար փողոց  
դուրս գալը և ցույցերը անխուսափելի յեն: Գյուղացիները  
ուղղակի չեն աշխատում կամ գնում են ուրիշ տեղ աշխա-  
տելու... Յերբ կառավարությունը սկսեց հետապնդել գյու-  
ղացիական շարժումը, առանձին մանր գյուղացիական  
միությունները սկսեցին միանալ իրար հետ և կազմել  
ավելի խոշոր միություններ, վոր ոգտագետ և հեղափոխա-  
կան շարժման համար: Վերջին տարիներս բանվորական  
միությունները ևս միջոցներ են ձեռք առնում գյուղա-  
ցիականների հետ միանալու: Երբ այդ իրագործվի — հո-  
ղագուրկ գյուղացիությունը և պրոլետարիատը կկազմեն  
մեկ ընտանիք, Յապոնիայի աշխատավորության մեկ մար-  
տական կազմակերպությունը:

Այդպիսի միավորման նշաններ արդեն կան. 1928թ.  
յապոնական պարլամենտի ընտրությունների ժամանակ  
բանվորները, դաշնակցած հեղափոխական գյուղացիության  
հետ, կարողացան, չնայած բոլոր դժվարություններին և  
բոլոր հետապնդումներին, հավաքել իրենց բանվորագյոււ-  
ղացիական կուսակցության ողափին 192 հազար ձայն և  
իրենց յերկու ներկայացուցիչներին ընտրել պարլամենտի  
անդամ. Այնքան կարեռ չե, վոր բանվորներն ու գյուղացի-  
ները յերկու պատղամավորներ են ուղարկել բուրժուական  
պարլամենտ, վորքան կարեռ ե այն, վոր աշխատավորական  
մասսաները հեղափոխական սրայքար են սկսել իրենց իմպե-  
րիալիստական կառավարության դեմ: Այդ պայքարի մեջ  
բանվորագյուղացիական կուսակցությանը ողնում եր պրոֆ-  
միությունների ձախ թիկը — Խիոնիկայը, վոր միացրել ե ար-  
դեն մի քանի տասնյակ հազար անդամներ: Մեծ աջակ-  
ցություն ցույց տվեց նաև յերիտասարդության լիգան,  
վորը բողոքում եր Զինաստանի կողոպուտի գեմ՝ յապո-

Նական իմպերիալիստների կողմից վերջապես, ինչպես ասում ե «կոմինտերն» ժուռնալը, «1928 թ. ընտրողական կամպանիայի մեջ ամենակարևոր յերկույթն եր յապոնական կոմունիստների յելույթը, վորոնք կարողացան վերականգնել կոմունիստական կուսակցությունը վոստիկանական վայրագությունների և ֆաշիստական տերրորի պայմաններում։ Յազգոնական կոմունիստական կուսակցության լոգունգները արձագանք ելին գտնում պրոլետարական լայն մասսաների մեջ։ Յերիտասարդ կոմունիստական կուսակցությունը միանգամից դարձավ յապոնական պրոլետարիատի ակտիվ հեղափոխական ուժերը զորահավաքող կենտրոն»։

Յապոնական հին կենցաղի մեջ ուժեղ թափով ներս և խուժում յեփրոպական տեխնիկան և կուլտուրան:

Ամբողջ Յապոնիան կտրտված է յերկաթուղիներով. մասցել են շատ քիչ խուլ գյուղեր, ընկած յերկաթուղուց 50—60 կիլոմետր հեռավորության վրա: Բայց այդ խուլ գյուղերում ևս կան արգեն նորմուծություններ՝ հաղորդակցությունը գյուղերի միջն կատարվում է ավտոբուսներով, գյուղական խճուղիներով թռչում են հեծանիվները: Նույնիսկ հասարակ գյուղացիական սայլերի վրա կարող եք տեսնել հին ասրազով հագնված պառավ (լայն փարտիկ կիմոնոյի վրա), հին սովորության համաձայն, սև ներկած ատամներով, սակայն լրագիր կարդալիս: Յապոնական ամայի Ալպերի լեռնցիները, փորոնց մյուս բնակիչները փայրենիներ են հաշվում, ձեռքերին ժամացույց են կրում:

Թէ վոր չափով ժամանակակից յեղբողական կուլտուրան մուտք ե գործել Յապոնիայի նույնիսկ ամենահեռավոր անկյունները, կարելի յե դատել գերմանական զբող հառաջական պատմածից իր ձանապարհորդության մասին դեպի հարավի այդ անմարդաբնակ լեռները։ Մի քանի

յեվրոպացի ճանապարհորդներ յերեկոյան դեմ մոտեցել են  
ամայի լեռների առաջ ձգված վերջին գյուղին, «Արդեն  
մթնել եր: Յապոնական տները լուսավորված են բոլոր  
չորս պատերով, ասես գետնին դրած լապտերներ լինեն:  
Մի ճաղատ պառավ, ոև ատամներով և վարժիկը հազին, փոր  
մեր դեմ եր գալիս, մեզ տեսնելուն պես ճշալով մի կողմ  
ե վախչում: Մենք անցնում ենք գյուղով, զիշերելու ոթե-  
վան փնտրելով: Գյուղի հիսուն կամ վաթուն տները բա-  
ժանված են յերեք զուգահեռ փողոցների: Մենք անցնում  
ենք յերեք խանութի, պոստատան, դպրոցի, հյուրանոցի և  
ռեստորանի մոտով: Փողոցի մեջտեղում գտնվող լուսա-  
վորված բուղկան գրավում ե մեր ուշադրությունը: Մո-  
տենում ենք նրան: Բուղկայի մեջ գրված ե փողոցային  
ելեկտրական մի հսկա ժամացույց,

Այդպիսով, նույնիսկ այդ լեռնային վայրենի, յետ ընկած գյուղում, այդ դրեթե անմարդաբնակ լեռներում, կաև պոստ-հեռագրային բաժանմունք, և դպրոց, և ելեկտրականություն, և փողոցային ժամացույց։ Նույնիսկ ճանապարհի մի քանի սյուների վրա գծված ե այդ տեղերի քարտեզը։ Դա նոր կուլտուրայի հետքերն են, վորը մուտքե գործել Յապոնիա վերջին տասնամյակների ընթացքում,

\* \* \*

— Ահա հայրիկո ինձ տվեց մի բացիկ յապոնական տեսարանով, — ասաց Սաշան, մեկնելով ուսուցչուհուն հետևյալ նկարը.

— Ո, դա շատ լավ է, — ուրախացան «Հինուկները», —  
մենք մինչև այժմ չունեինք բոլորովին յապոնական բնու-  
թյան տեսարաններ»:

— Այդ գեպըում, յերեխաներ, նկարների տակ զբեք արեի  
ծագելու նկարագրությունը Յապոնիայում։ Այդ տողերը

պատկանում են ֆրանսիական զբող Ֆարբերին, վորը սիրում  
եր ընությունը և կարողանում եր լավ նկարագրել այս:

Արեւելյան լեռնաշղթայի ալիքավոր գազաթը ավելի  
ու ավելի սեխն եր տալիս լուսավորվող յերկնքի վրա:  
Արշալույսը, հանկարծակի ու տիրող, հաստատում եր  
իր իշխանությունը: Յերեացին ամպերը — նախ կապ-  
տավուն, իսկ հետո հանկարծ ասես արնակոլոր, կար-  
ծես ողային մի սուր ճեղքեց նրանց: Յեկ հանկարծ  
բոլոր զույները — և աշ-կարմիր, և մոխրագույն, և  
կապույտ — լուծվեցին զուտ փառկու մեջ, Ծովը փայ-  
լեց, խաղալով վարդագույն պղնձի և կապույտ պող-  
պատի պապղուկներով: Յեկ, հանկարծակի հանդես  
դալով ափերի ու ծովի վրա, ծագող արեր փայլեց  
Յապոնիայի վրա և, թվում եր, թե ամբողջ Յապո-  
նիան ցնցվեց ու բախությունից:

«ԴԺԱԽՖ»

(Յայնիական գրող Կանելովի պատմվածք)

— Մենք, յերեխաներ, կարդացինք ձեզ հետ պատմվածքը յապոնական ձկնորսի մասին. իսկ այժմ կարդանք կանելոյի «Դժոխք» վերնագրով պատմվածքը յապոնական գյուղացիների մասին, — ասաց ուսուցչուհին:

Սկսած հունիսի կեսից վոչ մի կաթիլ անձրև չեր թափ-  
վել. Որեցոր շարունակվում եր պարզ, առթ յեղանակը:  
Սովորաբար Յապոնիայում հունիսի կեսերից սկսվում ե-  
անձրեների շրջանը, վորը շարունակվում ե գրեթե մի  
ամիս: Գյուղացիները ապրում են այն հույսով, վոր

գուցե վաղը անձրև գա... Բայց որերն անցնում եյին, իսկ գյուղացիների հույսը չեր արդարանում։ Բննձի ծիլերը սկսեցին թառամել։ Հողագործները հարկադրված եյին գետից ջուր բերել արտերի համար։

Գետը գտնվում եր ցածում—նասոս հարմարեցնելու հնարավորություն չկար։ Հարկադրված եյին իրենք կը ել ջուրը։ Կանայք, ծերունիները, յերեխաները—բոլորը աշխատում եյին։ Գյուղում յեղած բոլոր զույլերը գետափն եյին տարված։ Բայց դրանով գործին ոգնել անհնարին եր։ Յերեք որ հագիվ եր անցել, յերբ բոլորը ուժասպառ յեղան։ Հուսահատ հայացքով նայում եյին գյուղացիները բրնձի մեռնող ցանքսերին—անհրաժեշտ եր թեկուզ մի մասը փրկել կորստից։ Մերկ տղամարդիկ ու կանայք հավաքվում եյին գետի մոտ, լեցնում եյին դույլերը, բարձում ձիյերի ու յեղների վրա և տանում արտերը։ Հրավառ արեի տակ մարդիկ ու անասունները շնչասպառ, քրտնաթոր բարձրանում եյին լեռը։

Բոլորի ջղերը լարված եյին։ Գետը չորանում եր։ Յեզ ահա այն ժամանակ ճահճուտներից ջուր առնելու համար սկսվեց մահվան ու կյանքի կոփ։ Բայց այդ կոփը յերկու որից ավելի չտեսեց—կորակ պառակտումների պատճուր—ջուրը բոլորովին վերջացավ։ Գյուղացիները վերջնականապես վհատվեցին։

Հետեւյալ որը հրաման դուրս յեկավ, վորով արգելվում եր Ջրհորի ջուրը ծախսել արտերի վրա—դա սպառնում եր մարդկանց կյանքին։ Գյուղում 150-ից ավելի մարդ եր ապրում։ Ութ Ջրհորից յերկուսը պատկանում եյին կաշվածատեր Սակատային և գյուղացիները չեյին կարող նրանցից ոգտավել, յերկուսը կեղտուաված եյին և նրանց ջուրը խմելու անպետք եր։ Ամբողջ գյուղը պետք ե ապրեր միայն չորս Ջրհորով։

Ծանր ե կորուստի մատնել բրնձի ցանքսերը, բայց ավելի թանգ ե սեփական կյանքը։ Այն ել կա, վոր Ջրհորի ջուրը արտի համար համազոր ե տաք քարի վրա ընկած կաթիլին։ Արտերի ամբողջ տարածությունն ե 37<sup>1/2</sup> ցիյուկաթիլին։ (ցողը գլեթե ամբողջությունն ե, Սակածովին հարուստ Սակատայի սեփականությունն ե, Սակածովին հարուստ Սակատայի սեփականությունն ե, Սակածովին հարուստ Սակատայի սեփականությունն ե, Ելի 120 ցիյուրուտայի ընտանիքը ունի, բացի դրանից, ելի համար տաքի ընտանիքը ունի, արտեր։ Նա իր ձեռքն ե տոել համար բրնձի և հացի արտեր։ Նա իր ձեռքն ե տոել համար պատկանում, աղբյուրը։ Առաջ այդ աղբյուրը գյուղին եր պատկանում, բայց Սակատան իր ձեռքն առավ այն, տալով գյուղին բրնձի փոխարեն իր կառուցած դպրոցը, վորի վրա ծախսել եր 13 հազար յեն։

Գյուղացիները ամեն գիշեր անկողին եյին մտնում, համասորեն կրկնելով—«գուցե վաղը անձրև գա...», բայց լեռների վրա ամպի մի կտոր անդամ չկար, և վորոտում եր միայն «Դժոխքը»-ը, տաք աղբյուրը, ժայթքելով յղետնից։

«Գուցե անձրև լինի»—ապարդյուն հույսերով նայում եյին մարդիկ գիշերային յերկնքին։ Արտերը ճաքում եյին մարդիկ գիշերային յերկնքին։ «Զնոր»—եյին, լայն բաց արած ծարավոտ բերանները, բրնձի ծիլերը արգեն, ասես, ասես տնքում եյին նրանք, բրնձի ծիլերը արգեն, ասես, մեռած լինելին։ Գյուղացիների հուսահատությունը հասավ իր սահմանին։ Անհրաժեշտ եր անհապաղ մի վորեև բան անել։

— Իմ կարծիքով, մեզ այժմ մնում ե միայն դիմել Սակատային, — ասաց յերիտասարդ Սուկեձին գյուղացիներին, կատային, — ասաց յերիտասարդ եյին հավաքված գյուղի պատվորնք խորհրդակցության եյին հավաքված գյուղի պատվորը մարդկանցից մեկի մոտ,

— Ճիշտ ե, ճիշտ ե—ճայն տվին մյուս յերիտասարդ տղամարդիկ, աչքերը փայլեցնելով։  
— Իսկ ի՞նչ պիտի խնդրենք—հարցը ծերուկ կամբեյը, կնճոռտելով ճախատը և կիտելով աչքերին կախված ալեւը հոնքերը։

— Նախ և առաջ — պակասեցնել հողի վարձի համար տրվող բրնձի քանակը, Յեվ ապա, յեթե վոչինչ չբանի, բայց անել ամբարներից մեկը և բրինձը նվիրաբերել գյուղին:

— Մի լավ մտածիր, թե ինչ ես ասում: Միթե կարդի ենք մենք դիմել կալվածատիրոջը այդպիսի անհեթեթ ինդրով. — Ընդհատեց նրան կամբեյը հանդիմանական շեշտով:

— Ի՞նչ անհեթեթ բան կա այստեղ. — գոռաց Սուկեծին: — Միթե չունի նա բրնձով լիքը հինգ ամբար: Յերբ ամբողջ յերկրում յերաշտ և բրնձի գինը որեցոր բարձրանում ե, Սակատան հանդիստ պառկած ե և հարստանում ե: Յեթե նա իր ամբարներից մեկը դատարկի յել մեզ համար — վոչինչ չի կորցնի:

— Դա ճիշտ ե, բայց լավ գործ չե դա, Սուկեծի-սան:

— Ի՞նչ մի մտածիր, վորքան ենք տանջվել մենք այդ Սակատայի համար: Ո՞վ գողացավ գյուղից աղբյուրի իրավունքները. Սակատան: Ի՞նչու նա այդքան հարստացավ: Վորովինետև ճնշում ե մեզ, շահագործում:

Բայց ծերուկները շարունակում եյին առարկել:

— Ի՞նչ ել վոր ասես, բայց Սակատան մեր գյուղի բարերարն ե: Ո՞վ կառուցեց մեզ համար այդպիսի հիանալի դպրոց. Սակատա-սանը, Վորտեղից են կամուրջներն ու ճանապարհները. ամեն ինչ նրա շնորհիվ ե: Յեվ արդարացի չե նրան թշնամի կոչելու:

— Այդ այնքան ել ճիշտ չե, կամբեյ-սան, — առարկեց Խելկիցին, աշխատելով վորքան կարելի յե հանդիստ խոսել: — Դուք ասում եք — դպրոց շինեց, բայց չե վոր այդ դպրոցի փոխարեն նա վեցըրեց աղբյուրը, վորը գյուղին եր պատկանում: Կարգի բերելով և սարքավորելով աղբյուրը, նա ստանում ե նրանից 50—100 հազար: Յերբ

մենք ասում ենք, վոր Սակատան ճարպիկորեն խաբել ե ձեզ — գյուղական վարչության անդամներիդ, դուք վոչինչ չեք կարող առարկել: Այլ բան ե, յեթե նա մեր գյուղում չեք կուրորտ սարքեր, Բայց նա շատ լավ հասկանում եր, վոր կուրորտը մեր գյուղում լինի, նա ստիպված պիտի յեթե կուրորտը մեր գյուղում լինի, նա ստիպված պիտի յեթե լիներ թույլ տալու գյուղացիներին ձըխաբար ջուրը իրենց տանել, իսկ նա ուզում եր մենակ ողտվել ամեն ինչից: Իսկ ճանապարհներն ու կամուրջները նա իր փողերով չեք կառուցում. այդ բոլորը շինված ե գավառի ու նահանգի միջոցներով: Ինըը նշանակել ե գյուղական վարչության միջոցներով: Ինչը նշանակել ե գյուղական վարչության անդամներին և վարում ե գյուղի գործերը, ինչպես ինքն անդամներին և վարում ե գյուղի գործերը, ինչպես գառանալի չե, վոր նա կարող ե մի ինչ վոր կառուցի: Զարմանալի չե, վոր նա կարող ե մի արագ հայացք զցեց մուրջ կառուցել. — և Խելկիցին մի արագ հայացք զցեց ծերունիների կողմը, բայց նրանցից վոչ մեկը չհամարձակծերունիները շայի կողմը, Յեթե վեց առարկել նրան: — Բայց դա չե կարեռը: Յեթե յերաշտը շարունակվի և չհաջողվի բրինձը հավաքել, ինչ յերաշտը շարունակվի և հարցնե, վոր պահանենք անելու: Դա ամենակարևոր հարցնե, վոր պահանենք անելու: Յեթե ուտելու բան չլինի — ջում ե անհապաղ լուծում: Յեթե ուտելու բան չլինի — ջում ե անհապաղ անելու: Սակատան շահում ե բորսայում: Ի՞նչ եք մտաղիք անելու: Սակատան շահում ե բորսայում: Պիտի կարծե նրան բաց անել իր ամբարներից մեկը. Պիտի նով նա չի աղքատանա:

Յերկար վիճարանություններից հետո գյուղացիները վորոշեցին գնալ Սակատայի մոտ: Բայց նա քաղաք եր գնացել: Պետք եր սպասել մի քանի որ: Վերջապես լուր բերին — Սակատան վերադարձել ե յերեկոյան, յեթե գործ ունեք — յեկեք: Ընտրված յոթը պատգամավորները գնացին Սակատայի մոտ:

\* \* \*

Տաճարի բակում հավաքվել եյին բոլորը — մինչև վերջին մարդը: Գյուղացիները սարսափելի հուղված եյին:

Պատճառներ շատ կային: Սոսում ելին, վոր շուտով կսկսվեն անձրևները, լուրեր ելին պտտում, թե Սակատան ծեծել ե պատգամավորներին փայտով և նույնիսկ թքել ե նրանց յերեսին: Գյուղացիների առաջ այժմ դրված եր խկապես կարեոր հարց: Սակատայի ընտանիքը, վորին աստծուց ավելի սուրբ ելին հաշվում, վորի առաջ խոնարհվում ելին, միանգամից ընկավ գյուղացիների աչքերում: Այժմ, իրար հավասար, կանգնած ելին դեմ առ դեմ միեւնույն հողի վրա յերկու թշնամիներ — գյուղը և Սակատան:

— Ի՞նչ բան ե վոր Սակատան: Լավ կլիներ այդ գարշելին բոլորովին գյուղից դուրս քշել:

— Յեթե նա փայտով ե խոսում, մենք ել նրան կպատասխաննք փայտերով: Փորձենք կովել — տեսնենք — ով կհաղթի: Բոլոր այդ կալվածատերերը գազաներ են, վոր գյուղացու արյունն են խմում: — Ճարությամբ հայնոյում ելին յերիտասարդները:

Բարձրանալով տաճարի առաջ գտնված քարի վրա, յերիտասարդ Տոմոճին խոսեց Սակատայի մոտ յեղած պատգամավորների անունից: Խարույկի բոցերից նրա դեմքը գունատ եր թվում, ինչպես սկսել: Նա շատ եր հուզված, վորպեսզի կարողանար ամեն ինչ կարգով պատմել գյուղացիներին: Իր ամբողջ հասակով կանգնելով քարի վրա, մի քանի ժամանակ նա լուր մնաց: Անցավ հինգշեց ըոպե: Յեկ հանկարծ նա սկսեց պատմել չարացած ու կրօտ, թեթև կակազելով, և դա սաստկացնում եր նրա ճառի տաքությունը: Նրա գործածած խոսքերը այնքան ել հասկանալի չելին գյուղացիներին:

— Յեկ Սակատան, և մենք ապրելու հավասար իրավունք... նա շահագործում ե մեր արտադրության արդյունքը...

Բայց հենց այդ անհասկանալի խոսքերը այժմ ահազին տպագորություն ելին թողնում հոգված գյուղացիների վրա: Թող չհասկանան նրանք այդ խոսքերը, — նրանք անմիջականորեն իրենց սրտերով զգում ելին պատմողի ապրումը: Տոմոճին կանչում եր.

— Յեթե վրա հասնի սովը և ամբողջ գյուղը դատապարտի սովամահ լինելու, — Սակատայի պարտըն ե բաց անել գյուղի առաջ իր բոլոր հինգ ամբարները — մինչև վերջինը: Բայց նա չխոստացավ նույնիսկ մեկը բաց անել: Այդ այն պատճառով ե, վոր նա մեզ, գյուղացիներիս, Այս պատճառով: — Այստեղ ցասումի բացառվարից ել վատ ե հաշվում: — Այստեղ ցասումի բացառվարից լովեցին և սպառնալիքներ Սակատայի կանչություններ լովեցին և սպառնալիքներ Սակատայի հասցելին: Տոմոճիյի ճառը ավելի կրակու եր դայնով պատնա կանչում եր, ավելի ու ավելի բարձր ճայնով պատմելով բանակցությունների մանրամասնությունները:

— Մեզ, գյուղի ներկայացուցիչներին, նույնիսկ սենյակ մտնել չթողին: Ըստունում ելին, ասես շուն լինենք: Վերջ մտնել չթողին: Ըստունում ելին, ասես շուն լինենք... Մենք այդ իվերջո նա թքեց մեզ վրա և դուրս քշեց... Մենք այդ վոչ մի դեպքում այդպես չենք թողնի: Վաղը մենք նորից կոչ կանանք Սակատայի մոտ — արդեն վոչ թե խնդրելու, այլ պահանջելու: Յեկ յեթե զրանից վոշինչ դուրս չգա, մեզ մտնում ե կովել նրա դեմ, ինչպես թշնամու դեմ:

Բոլորը ծափանարում ելին Տոմոճիյին: Խնդրում ենք, խնդրում — բղավում ելին մի քանիսը: Աղմուկ, հայոյանք, բացականչություններ լեցըին տաճարի բակը: Յեկ հանկարծ ուժեղ հուզմունք անցավ ամբոխի միջով: «Մորիգասկա լեռան վրա անձնեաբեր ամպեր են յերեացել» — ելեկտրական հոսանքի պես սլացավ ների վրա և հայացքները ուղղում մթագնած յերկնքին: Նրանք ուրախությունից ցնցվեցին:

Մորիկասկայի գագաթի ու ամպերը արագ աճում ելին  
լայնանալով դեպի արևմուտք... Ամբոխի մեջ մեկը բարձր  
հեկեկաց ուրախությունից և հուզմունքից: Յեվ միանգա-  
մից խփեցին աղոթքի թմբուկները: Պարուճիները պատվե-  
ցին սրբազն պարի մեջ: Գյուղացիները ծափ տվին վո-  
գորված: Յեվ առանց կոկորդները խնայելու, ամբողջ  
ուժով վոռնում ելին.

— Վա-ա... վա... Ա-ա...

\* \*

— Յեվս մի շիշ... — կամաց հրամայեց Սակատան,  
Նրա խոսքերը հանդարտ ելին, բայց աչքերը վասվում  
ելին ցասումով, Յերբ յերիտասարդ գեղեցիկ կինը դուրս  
յեկավ սենյակից, թողնելով իր յետեկից թանգարժեք բուր-  
մունքի շիթը, Սակատան ձգվեց ամբողջ մարմնով: Նրա  
հարթ, փայտայլած գեմքի վրա յերեաց մի թթու ծամա-  
ծություն, վորը բոլորովին չեր համակերպվում նրան  
շրջապատող գեղեցկությանը:

Սակատայի տունը բլուրի վրա յեր, գյուղից կես կի-  
լոմետր դեպի արևելք: Այն սենյակից, ուր նա այժմ  
խմում եր բբնձի արադի (սակեյի) յերեկոյան բաժակը,  
ընդհանուր տեսարան եր բացվում ներքեսում ընկած գյուղի  
վրա: Դա ամենագեղեցիկ սենյակներից մեկն եր այդ  
տան մեջ, վորը կառուցված եր միայն յերեք տարի առաջ  
Տոկիոյից հատկապես հրավիրված վարպետների ձեռքով:  
Սակատան ուզում եր հրավիրել խահանգապետին իր մոտ  
և փարթամ ընդունելություն եր պատրաստում: Տունը  
կառուցված եր ամբողջովին թանգարժեք խինոքի ծառից:  
Գյուղացիները անվանում ելին այն Շիխնոքիյե պալատ»:  
Յերբ նա արդեն պատրաստ եր, տղետ գյուղացիները գա-  
լիս ելին ստրկական վողջույններով՝ թարմ շենքի բուր-

մունքը հոտոտելու: Սակատան կարծում եր, վոր նոր  
տունը, զարդարած վուկեզոծ զարդերով՝ հավիտենական  
հարգանքի աղբյուր կծառայե նրա համար տղետ գյու-  
ղացիների կողմից:

Նահանգի բոլոր կարեռագույն չիսովայիները Սակատայի  
հյուրասիրությունը վայելելուց հետո, կառավարությունը  
շինեց նրա համար սքանչելի ճանապարհ կայարանից մինչև  
«Դժոխւք» կոչված տաք աղբյուրը: Խճռողին այնքան լավ եր  
շինված, վոր նրանով աղատ գնում ելին ավտոմոբիլները:

Այժմ Սակատան մենակ նստած եր իր փարթամ սենյա-  
կում: Պատից կախ եր արված հայտնի նկարիչ կողիոյի  
նկարը: Սենյակի մեջ գտնված այլ իրերը մեծ փող ելին  
արժում, բայց չափազանց անճաշակ ելին, Այստեղ կարե-  
ւելի յեր տեսնել թե հին յապոնական իրեր և թե ամերի-  
կական ճաշակով առողյա առարկաները: Իրապես սքանչելի  
յեր միայն տան պատուհաններից բացվող տեսարանը:  
Թթու քմծիծաղով Սակատան ուղղեց իր փայլուն աշ-  
քերը գիշերային յերկնքին: Յերկնքի ծայրը լուսավորված  
եր վառվող խարույկների վարդագույն շողերով: Հզոր թա-  
փով ցնցելով գիշերային հեղձուձիչ ողը, լսվում եր թըմ-  
բուկների տնքոցը — «զոն... դո... զոն...»: Թմբուկների վո-  
րոտը ախորժ արձագանք եր գտնում նրա սրտում: Նա  
վերիշում եր ամբողջ իր կյանքը, սկսած այն որից, յերբ  
ստացավ միլիոնավոր ժառանգություն: Այն ժամանակ նա  
քսանյերկու տարեկան եր, իսկ այն որից անցել ե արդեն  
գրեթե յերեսուն տարի: Այդ տարիների ընթացքում նա  
թույլ եր տալիս իրեն ամեն մի փարթամություն և ամեն  
մի հաճույք, և այդ բոլորը նրան արգեն ձանձրացըել եր:  
Այժմ նրա կյանքը անցնում եր չոր ու միապաղադ:  
Յեվ այդ կյանքի մեջ հանկարծ ներս խուժեց ստրուկ-  
ների անսպասելի բունտը: Տասնյակ հանգիստ տարիներից

հետո այդ հարկածից յեռ յեկավ նրա արյունը: Նա ամբողջովին վառվում եր ցասումից: Նա նորից վերհիշեց գյուղացիների առավոտյան այցը: Նա հարցրեց նրանց գոռողությամբ.

— Ի՞նչումն ե բանը:

— Խնդիր ունենք, — թեթև վողջույնով պատասխանեց Խելկիցին:

— Ի՞նչ խնդիր ե դա:

— Ի՞նչպես գիտեք, յերաշտը շարունակվում է: Գետը բոլորովին ցամաքել է: Բրինձը գրեթե ամբողջովին կորավ, մեր աշխատանքը ապարդյուն անցավ: Այդ պատճառով ել... — Խելկիցին գլուխը բարձրացրեց և շեշտակի նայեց Սակատայի կարմիր յերեսին:

— Դե, և ի՞նչ:

— Մենք ուզում ենք, վորակեսզի դուք իջեցնեք կապալի զինը և բացի դրանից; յեթե բրինձ չըսնի, մենք ուզում ենք, վոր դուք նվիրեք գյուղին բրինձ ձեր ամբարներից...

— Ի՞նչ, Բրինձ ամբարներից: Այդ ով ե նվիրելու:

Սակատան խորը վիրավորված զգաց իրեն: Այդ պահանջը համազոր եր նրան, վոր ցեխ չալրտեն իր յերեսին: Յերբ են այդքան փոխվել այդ ստրուկները: Ի՞նչ ե նշանակում նրանց այդ տեսքը, խոսելու այդ յեղանակը: Ի՞նչով ե տարբերվում այդ իրար հետ հավասար մարդկանց միջև յեղող վեճերից ու բանակցություններից: Գյուղը մոռացել է Սակատայի տան սրբության մասին: Պետք ե հիշեցնել:

— Յեթե յես չինեյի, կարող եր, միթե, գոյություն ունենալ ձեր գյուղը: Ո՞վ շինեց ոպրոցը: Ո՞վ ճանապարհներ անցկացրեց: Յեվ միթե իմ գըպանից չեյին գնում ուսման գրեթե բոլոր ծախսերը: Յես — վերին պալատի

նախկին անդամ եմ, իսկ դուք — հասարակ գեղջուկներ: Միթե դուք չեք հասկանում, վոր մեր միջև յեղած տարածությունը այնքան է, վորքան յերկրի ու յերկնիքի միջև: Սա ի՞նչ անթույլատելի վարք է: Ո՞վ ե իրազործելու ձեր այդ լիտի պահանջները: — Նրա ներսում ամեն ինչ յեռ եր այդ լիտի պահանջները: — Նրա ներսում ամբարը ձեր առաջ. — նորից գալիս: — Ո՞վ ե բանալու ամբարը ձեր առաջ. — նորից բղավեց նա ցասումից դողացող ձայնով:

«Բղավիր, վորքան ուզես, հիմար: Դա մեզ ձեռնտույթ» — չարությամբ մտածեց Խելկիցին, զսպելով շրթունքը: — Դե, իհարկե, պարոն, — ասաց նա բարձր, — մենք ուզում ենք, վորպեսզի դուք բաց անեք գյուղի համար ձեր ումբարներից մեկը...:

— Նվիրել թե չնվիրել իմ ապրանքը — դա իմ գործն է:

— Ուրեմն, դուք ուզում եք ասել, վոր ձեր գործը չե,

յեթե գյուղում բոլորը կոտորվեն սովից:

— Սատկելու յեն — թաղ սատկեն: Դա ինձ չի վերաբերվում. — Կորցնելով ինքն իրեն, բղավեց Սակատան:

— Իհարկե, ձեր կամքն ե — նվիրել բրինձը կամ չնվիրել, — պատասխանեց Խելկիցին, — բայց այդ բրինձը դուք

ունեք միայն մեր շնորհիվ:

— Ճիշտ ե. — Վաշ բարձր, բայց ազգեցիկ տոնով ոգունության հասավ Սուկեծին, վորը մինչ այդ խոսակցությանը չեր մասնակցում:

— Հիմարներ. խելազարվել եք, ինչ ե: Արդեն չեք ել տարբերում, թե ուր ե ձերը և ուր — ստարներինը, —

բղավում եր Սակատան, գործածելով կոպիտ խոսքեր, վորոնցից նա միշտ խուսափում եր, ինչպես ամեն մի լավ

դաստիարակված յապոնացի:

— Վաշ, լավ ենք տարբերում... Զե վոր բրինձը մեր քրտինքից ե բուսել.

— Յեկ նրան պահանջելը — մեր իրավունքն ե — ավելացրեց Տոմոձին, մի քիչ առաջ անցնելով և ատելությամբ նայելով Սակատային:

Այդ խոսքերից պայթեց Սակատայի մինչ այդ զսոլված գայրույթը: Նա բոլորովին կորցրեց ինքն իրեն:

— Դուք ավազակներ եք, բանդիտներ: Չասե՞ք — ուստական բոյշեկիներից եք վարակվել:

— Իսկ բոյշեկիները ինչով են վատ. — ավելի և բարձր գոռաց Սուկեծին, բոլորովին գունաթափ:

Մի ժամանակ ինչ վոր ժուռնալի մեջ, իր յեղբոր ամանը, Սուկեծին կարդացել եր մի քանի եջ, վորոնց մեջ շատ ելին գովաբանում Խորհրդային Խուսաստանը: Նա արդեն բոլորովին մոռացել եր, թէ ինչ եր գրված այնտեղ, բայց և այնպես կանչեց.

— Խուսաստանում բոլորը աշխատում են: Այնտեղ վոչ մի կալվածատեր չկա...

— Դուքս այստեղից, դուքս. — ինելազարի նման բղավում եր Սակատան, ձեռքերը շարժելով: — Զեզ հետ խոսելն ել զզվելի յե... Անսառններ... — Փրփուրը թուավ նրա ըերանից և ընկավ Մագոսուկեյի յերեսին, վորը կանգնած եր յետեռում և ամբողջ մարմառվ դողում եր:

— Զի սազում ձեզ, այդպիսի պատվավոր պարոնի, բղավել խելազարի նման. — սառնարյունորեն նկատեց Խեյկիցին: — Վաղը մի անգամ ել կզանք, պարոն: Մինչև վաղը մի լավ մտածեցեք:

Խեյկիցիի այդ հանդարտ նկատողությունը սոսկալի հարված եր Սակատայի համար: Նա զգաց, վոր զետինը շարժվում ե վոտքերի տակ:

\* \* \*

Բայց Սակատան չապրեց մինչև վաղը: Նա վորոշեց, գյուղացիական շորեր հազած և յերեսը ծածկած, գյուղը

մտնել և իր վրեժը հանել գյուղացիներից, մանավանդ հանդուգն Խեյկիցիից, վիրավորանք հասցնելով գյուղի այդ ներկայացուցչի կնոջը: Գյուղացիները սոսկալի հուզվեցին. Նրանք չճանաչեցին Սակատային այդ ծպտված խուլիդանի մեջ և զայրույթի մեջ վորոշեցին նրան սպանել: Մեկը գոռաց վրդոված՝

— Գցել նրան «Դժոխք»-ը, «Դժոխք»-ը, «Դժոխք»-ը!

— Ճիշտ ե: Ուղիղ ե. «Դժոխք»-ը դրան:

— Վա-ա-ա... — պայթեց ամբոխը կատաղի վոռնոցով: Խեյկիցին նույնպես գոռում եր: Այդ աղաղակը ակամապութկում եր նրա կրծքից: Նա ուզում եր կասեցնել ամբութկում: Մի բոպեյով ուզում եր վրկել թշվառին — բոխի ցասումը: Մի բոպեյով ուզում եր վրկել թշվառին — բայց վոչ վոք չլսեց նրա աղաղակինուր թշնամուն: Բայց վոչ վոք հրեցին նրան և ազաղակը: Տասնյակ ձեռքեր մի կողմ հրեցին նրան և ազաղակը: Տասնյակ թափվեցին զոհի վրա, վոր ընկած եր գետնին: Հությամբ թափվեցին զոհի վրա, զցեցին մարդուն իրենց ինչպես մի թեթև խաղալիք, զցեցին մարդուն իրենց ինչպես և, լեցնելով ոդը անընդհատ վայրենի աղաղակներով, վազեցին դեպի «Դժոխքը»: Վազում ելին ծեղակներով: Վազեցին դեպի կանայք, Վազում ելին յերերունիները: Վազում ելին կանայք, Վազում ելին յերեխաները նրանց յետերից: Յեզ հենց այն բոպեյով, յերբ խելագարված ամբոխը հասավ դեպի «Դժոխքը» տանող լեռագարված ամբոխը կանայքին:

— Անձրև:

— Անձրև, — վախեցած կրկնեց մեկը:

— Անձրև, — լսվեցին բեկվող, դողոն ձայներ: Հետեյալ բոպեյով մարդիկ, լսելով թափվող անձրևի աղմուկը, բոլորովին ցնորվեցին ուրախությունից: Նրանք բարձրանում ելին վոտքերի մատների վրա, գեմ տալով յերեսները սառը կաթիւներին: Վոռնում ելին: Լալիս: Հեկեկում:

— Անձրև... Անձրև յեկավ...

Նրանք չեյին մտածում, թե ինչ են անում այժմ, թե  
ինչ չար վիճակ ե սպասում նրանց վաղը... Նրանք, ասես,  
զառանցանքի մեջ լինելին, յերազի մեջ... Յեվ ասես խե-  
լազարների մի ամբոխ, ցատկելով ու պար գալով, նրանք  
վազեցին դեպի ահարկու «Դժոխքը»...

### ԴՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՅԱՊՈՒՏԱՅՈՒՄ

— Շարքերի. — Ինչում են դպրոցական հրապարակում  
տղաների զիլ ձայները:

Խփում ե դպրոցական զանգը: Գարնանային թարմ  
առավոտի ժամի ութն ե: Յեվ այնքան ծանր ե փոքրիկ  
տղաներին թողնել իրենց խաղերը: Նրանք բոլորը մուգ-  
կապույտ կիմոնո յեն հագած, վորոնք կապված են վոլո-  
րուն մանվածային գոտիներով: Ավելի ունկորները բաց-  
կապույտ գուլպաներով են — հատուկ բաժանմունքով մեծ  
մատի (բժամատի) համար, վորպեսզի նա կարողանա անց-  
նել մեր սանդալների նման վայսե գոտնամանների (գե-  
թաների) կաշվի ողակով: Նրանց գլուխներին սրածայր գըլ-  
խարկներ են գրված: Բայց մեծամասնությունը բորբիկ ե  
և գլխաբաց: Դրանք ամուր փոքրիկներ են, լայնաթիկունք,  
կլոր, վարդագույն, փոսիկներով թշերով: Նրանք գրավում  
են իրենց տեղերը, կազմելով յերկու կարգ:

— Ուշադրություն:

Մեծ տղաները յուրաքանչյուր դասարանում հաշվում  
են իրենց ընկերներին, նշանակելով բացականներին:

— Դեպի աջ. — լսվում ե հրամանը. — Առաջ, մարշ,  
արագ քայլերով:

Ասես փոքրիկ զինվորներ, բոլոր այդ յերեխանները, վո-  
րոնցից մի քանիսը հազիվ հինգ տարեկաննից մեծ լինեն,  
շարժվում են դեպի դասարանները: Դռների մոտ նրանք

կանգ են առնում և իրենց վայսե գեթաները փոխում են  
հարդյա զորիների-տուֆլիների: Ապա նրանք մտնում են  
դասարան և լուռ կանգնում են, մինչև վոր նրանց յետեկից  
յեկող ուսուցիչը գրավում ե իր տեղը ամբիոնի առաջ: Դասա-  
րանի ավագը, վորի տեղը յետին նստարանների վրա յե-  
րանի պատճեն է հետեւ կարգ ու կանոնին, հրաման ե տալիս —  
վորպեսզի հետեւ կարգ ու կանոնին, հրաման ե տալիս —

— Վողջույն:

Ամբողջ դասարանը վողջունում ե, իսկ ուսուցիչը պա-  
տասխանում ե վողջույնին: Դրանից հետո սկսվում ե դասը:  
Եերեխանները նստում են յերկտեղ նստարանների վրա: Առա-  
ջին տարին տղաներն ու աղջիկները միասին են սովորում,  
վիճակի տղաներն ու աղջիկները միասին են սովորում,  
բայց հետո նրանց բաժանում են տարբեր դասարանների:  
Տարրական դպրոցում նրանք սովորում են կարգավոր, գրել,  
թվաբանություն, յերգեցողություն և մարմարզություն:  
Ավելի ուշ նրանք սկսում են սովորել պատմություն:

Դպրոցներում առաջին իսկ դասերից փոքրիկ դպրո-  
ցականներին ներշնչում են, թե պետք ե սիրել թա-  
գավորին և ամեն բանում հասպանդիվել նրան: Յապո-  
նիայում դեռ մինչև այժմ իշխում ե թագավորը — մի-  
կադոն, այն ինչ գրեթե ամբողջ աշխարհում ժողովուքո-  
ւած է տապալել են թագավորներին և քանդել են գահերը:  
Ները տապալել են թագավորներին հաստատված ե, ինչպես  
նույնիսկ հարևան Չինաստանում հաստատված ե, ինչպես  
դուք գիտեք, հանրապետություն: Ճիշտ ե, այդ բոլոր յեր-  
երում իշխանությունը գտնվում ե կապիտալիստների,  
կրներում իշխանությունը գտնվում ե կապիտալիստների,  
բուրժուազիայի ձեռքում, վորոնք շահագործում են ու  
տանջում բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին,  
ապրում են նրանց աշխատանքի ու քրտինքի գնով, բայց  
և այնպես միապետություն, թագավորներ այնական չկան  
և բանվոր դասակարգին ու աշխատավորությանը մնում ե

մի քայլ ևս անել — տապալել կապիտալիստների տիրապետությունը, վերցնել իշխանությունը իր ձեռքը և հետեւ լով Խորհրդային Միության որինակին, կառուցել սոցիալդմ: Իսկ Յապոնիայում թագավորը — միկադոն դեռ բավականին ուժեղ է:

Թագավորի ծննդյան որը դպրոցներում հանդիսավոր ծեսեր են կատարվում, ներբողներ յերգում, յերկար կյանք են մաղթում և այլն:

Յերեխաներին այնպիսի անհեթեթ մտքեր են ներշնչում թագավորի վեհության և նշանակության մասին, վոր նրանց գիմում ամենավայրենի հարցեր են ծագում: Այսպես, որինակ, յապոնական դպրոցականներից մեկը ո՞վ այդպիսի հանդեսից հետո հարցնում եր մի ուրիշին՝ «Ի՞նչ եակ ե թագավորը, արդյոք շնչում ե նա, ինչպես բոլոր հասարակ մահկանացուները. հիվանդանում ե նա յերեիցե, նա, արդյոք, վորեե բան ուտոնւմ ե և խմում ե, թե՛ նա ոդի նման ե»:

Բայց յապոնական յերեխաներին պատվաստում են վոչ միայն սեր դեպի թագավորը: Փօխանակ ներշնչելու նրանց հարգանք դեպի բոլոր աշխատավորները, — նրանց մեջ դաստիարակում են ատելության զգացմունք դեպի այլ ազգությունները: Այսպես, ժողովրդական դպրոցներում հաճախ այսպիսի տեսարանների յենք պատահում:

\*

«Ժամանակ առ ժամանակ, ձմեռը, — պատմում ե Պերիս, — յերբ ձյունը թափված եր գետնին հաստ շերտով, ուսուցչին դիմում եր դասարանին՝

Այդ խաղերի ժամանակ հաճախ դպրոցական հրապարակի վրա պատկերացվում եր փոքրիկ չափերով չինական պատերազմը: Յուրաքանչյուր խումբը աշխատում եր

մյուսի վզին փաթաթել չինացիների դերը, վորովհետև վոչ վոք չեր ուզում, ինարկե, ներկայացնել այդ արհամարեկելի ազգությունը: Այդ ժամանակ յերկու խմբերն ել շնում եյին ձյունից մի ահազին դունդ, իբենց չափ, և ապա յերկորդ, ավելի փոքր գունդը, վորը դնում եյին առայերկորդ, ավելի փոքր գունդը, վորա թանաքով նշանակում ջինի վրա: Այդ վերին գնդի վրա թանաքով նշանակում եյին քիթը, աչքերը, բերանը և այդ բոլորը անվանում եյին հայութ, աչքերը, յերանը և այդ բոլորը անվանում եյին կայուն-ջանդ — չինական այն հայտնի փոխթագաղին լի-Խուուն-Ջանդ — չինական այն հայտնի փոխթագաղին առաջ վորի անունով, վորը մոտ յերեսուն տարի առաջ Յապոնի վորի անունով, վորը մոտ յերեսուն տարի կնքել: Նրա վրա նիւայի համար անախորժ պայմանագիր եր կնքել: Նրա վրա նիւայի համար անախորժ պայմանագիր եր կնքել: Այդ վոր ձյուն, ցեխ, ինչ վոր ձեռքերին գար, և ապա ձգում եյին ձյուն, ցեխ, ինչ վոր ձեռքերին գար, և ապա ձգում եյին, վոր հալչի, կեղտոտ, մոռացության տրված, հրապարակի մի անկյունում:

Փոքրիկ յապոնացիներին սովորեցնում են զինվորական կարգապահություն, դաստիարակում են նրանց մեջ հավատարմություն դեպի թագավորը և աղգային գոռողություն, — տարմություն յերկրի միապետական կարգերի հետևանքն ե, այդ բոլորը յերկրի միապետական կարգերի հետևանքն ե, ուրիշ ժողովուրդների վրա իշխելու ձգտման արդյունք: Բայց մյուս կողմից, յապոնական դպրոցականներին փոքր հաստ կից ընտելացնում են հասարակական կյանքի, վորպեսզի պատրաստն նրանց աշխատելու իրենց կապիտալիստական պետական հիմնարկներում: Յապոնիային ծանոթ յերկրի պետական վոր հուետորական արվեստը զարմարդիկ պատմում են, վոր հուետորական արվեստը զարմարդիկ պատմում են տալիս նույնիսկ նախադպրոցական հասակի յերեխաներին ժողովներ հավաքել ճառեր արտասանելու համար: Հաճախ կարելի յե տեսնել, թե արտասանելու տարեկան տղաներ ճառեր են արտասանչպես 8—10 տարեկան տղաներ ճառեր են արտասանում փոքրիկ ամբիոններից, ըստ վորում ճառախոսի առաջ անպայման գրված ե լինում ջրամանը՝ ջրով լի և բաժակ:

Փոքրիկները քննում են իրենց ընթացիկ կյանքի բոլոր հարցերը, ընտրելով իրենց ժողովներում նախագահ-և քարտուղար: Այդպիսով, մանուկ հասակից յապոնացիները ընտելանում են հասարակական կյանքին, այլ և, ի միջ այլոց, ճառեր արտասանելուն, վորը շատ են սիրում նաև հասակ առնելուց հետո:

Մեր դեպի լրազիրը նույնպես պատվաստվում է յապոնացուն մանուկ հասակից, և ուսման յերրորդ տարվա ընթերցանության գրքի մեջ կարելի յետ տեսնել լրադիրը ներքողող հետեւյալ — վոտանավորը.

Մայրաքաղաքի անցքերը, զյուղի գործերը,  
հեռու յերկրներում պատահած գեղքերը  
մի հայացքեց հասկացող լրագիր:

Ո՛, այդ հարմարությունը — լրագիրը  
Մեծ հրդեհ և պատահել թե գողություն,  
կամ թե յեկել և անեղ համաճարակը, —  
ամեն ինչի ուշադրություն և դարձնում լրագիրը:

Ո՛, սիրալիր լրագիր:  
Մարդկանց անհայտ բարիքն և արտացոլում,  
ստվերի մեջ թաղնված չարիքն և արտացոլում  
հայելու նման, լրագիրը,  
և, բուսավոր լրագիր:

## Ա Ս Փ Ո Փ Ո Ւ Մ

Մեր ծանոթ դպրոցի 4-ըդ խմբակի աշակերտները վերջացնում եյին իրենց ցուցահանդեսի սարքավորումը, իսկ կոստյան և կոլյան ճեպընթաց գնացքում ոլանում եյին դեպի տուն, կըկին ալացան նրանց առաջից գերմանական քարուր ու կոկիլ քաղաքներն ու գյուղերը, տացավ աղմաքություն, անհանդիստ կեհաստանը և ահա մտան նրանք արդեն ԽՍՀՄ-յան սահմանները:

Նրանց հիշողության մեջ մնաց ծերուկ գերմանական բանվոր-կոմունիստի հրաժեշտի ճառը Բեռլինում, նրանց մեկնելու ժամանակ: Այդ ճառը ուղղված եր հավաքված յերկաթուղային բանվորներին, վորոնք իրենց աշխատանքի վայրերն եյին գնում, բայց մեր տղաները այդ ժամանակ գտնվում եյին կայարանում և լսում եյին այդ ճառը:

\*

Ուր ել վոր մենք յեղանք — Լոնդոնում, Պարիզում, Բեռլինում, Նյու-Յորկում կամ Շանհայում — ամեն տեղ մենք տեսանք, վոր ազգաբնակչությունը շատ իստ կերպով բաժանված և հարուստ դասակարգերի, վորոնք ապրում են փաթամության և առատության մեջ, և չքավորների, վատապարված են զազրելի, կեղտոտ ու աղքատ թաղամասերում: Անողոք բաժանումը աղքատների ու հարուստների, բաժանում, վոր վոչ միայն չի վերանում, այլ քանի գնում ավելի ուժեղանում են և խորանում, — ահա առաջին յեզրակացությունը, վորին հանդում ենք մենք մի

շարք կապիտալիստական յերկրներ ուսումնասիրելուց հետո: Ընդհանուր սպառազինումներ, բոլորի յերկյուղը բոլորից, նոր համաշխարհային ավելի ևս սոսկալի պատերազմի նախապատրաստություն — ահա մեր յեզրակացությունը: Յեվ, վերջապես, յերրորդը — յերկրագնդի վրա ամեն ինչ սերտ կապված ե իրար հետ, յուրաքանչյուր խոշոր քաղաքական և տնտեսական անցք արձագանք ե գտնում աշխարհի ամենատարբեր անկյուններում:

Ուրանից արդեն պետք ե պարզ լինի, թե վորպիսի ահապին նշանակություն ունի աշխարհի բոլոր մասերի համար բանվորական պետության գոյությունը Յեվրոպայի Արևելքում: Ամբողջ աշխարհի պրոլետարիատը տեսնում ե, վոր հնարավոր ե տապալել կապիտալիստների իշխանությունը և կյանքը կառուցել նոր ձևով: Վերցնենք առայժմ միայն մի որինակ. Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում ավելանում ե բանվորական որբ: Այնտեղ հեղափոխական փոթորիկների ճնշման տակ մտցված 8-ժամյա բանվորական որը փոխարինվում ե 9 և 10-ժամյա որով: Այդ կատարվում ե հարուստ և առաջավոր յերկրներում, իսկ աղքաս ու յետամաց յերկրներում — Զինաստանում, Հնդկաստանում և այլ ասիական ու աֆրիկական յերկրներում բանվորներին ստիպում են աշխատել որական 16 և նույնիսկ 18 ժամ: Իսկ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ կիրառվում ե 7-ժամյա բանվորական որը:

Համաշխարհային պրոլետարիատը տեսնում ե այդպիսով, վոր կապիտալիստական իրավակարգը խլում ե նրանցից նույնիսկ նվաճված իրավունքները, մինչդեռ խորհրդային կարգերը բարձրացնում են նրանց դեպի վեր — աստիճան առ աստիճան: Բազմաթիվ բանվորական պատգամավորությունները, վորոնք աշխարհի բոլոր ծայրերից այցի յեն գալիս ԽՍՀՄ, տեսնում են, վոր այստեղ աշխատավոր-

ները առաջին տեղն են գրավում: Ընտրողական իրավունք, մասնակցություն պետական վարչության մեջ, գյուղատնտեսության կոլեկտիվացում, արդյունաբերությանզարդացում, տուրքերի նպատակահարմար բաշխում, նպաստներ գործադրություններին և անաշխատունակներին, բնակարանային գործադրություններին գործ, ժողովրդական լուսավորություն — և կուրորտային գործ, ժողովրդական լուսավորություն — ամեն ինչ յենթարկվում ե բանվորների և աջմատավոր գյուղացիների շահերին: Լինելով ԽՍՀՄ-յան մեջ կամ լսելով իրենց ընկերներից Խորհրդային յերկրում կատարած լով իրենց ընկերներից Խորհրդային յերկրում, Արեմուտքի և ճանապարհորդության նկարագրությունը, Արեմուտքի և Արևելքի բանվորներն ու գյուղացիները տեսնում են այն Արևելքի տարբերությունը, վոր կա իրենց յերկրի, որը անշափելի տարբերությունը, և Խորհրդային Միության միջև, ուր իշխանությունը աշխատավորներին ե պատթան միջև, ուր իշխանությունը աշխատավորներին ե պատթան միջև: Արևելքի և Արևելքի կապիտալիստները ևս իրենց կանում: Արևելքի և Արևելքի կապիտալիստները ևս իրենց կանում: Վերջապես, Խորհրդային Միության միջազգային հակայական նշանակությունը կայանում ե նրանում. վոր նրա յական համարակակարգը հնարավոր ե դարձնում կոմունիստական համարակակարգը հնարավոր և գյուղատնտեսունակի բացահայտ գոյությունը նրա սահմանին ամբողջ աշխարհի կոմունիստաներին ընդհանուր խմբում ե ամբողջ աշխարհի կոմունիստաներին ընդհանուր նպատակի և ընդհանուր պայքարի համար, այլ և Պրոֆեսիոնալ Միությունների կարմիր ինտերնացիոնալի և գյուղական հեղափոխական միությունների ինտերնացիոնալի գործադրական հեղափոխական միությունները: Ամբողջ աշխարհի բանվորները, գյուղական գործադրությունը, հեղափոխականները ունեն այստեղ իրենց կենդանացիները, հեղափոխականները

119

շարք կապիտալիստական յերկրներ ուստի մնասիրելուց հետո:  
Ընդհանուր սպառազինումներ, բոլորի յերկյուղը բոլորից,  
նոր համաշխարհային ավելի ևս սոսկալի պատերազմի նա-  
խապատրաստություն — ահա մեր յեզրակացությունը։ Յեզ,  
վերջապես, յերրորդը — յերկրագնդի վրա ամեն ինչ սերտ  
կապված ե իրար հետ, յուրաքանչյուր խոշոր քաղաքական  
և տնտեսական անցք արձագանք ե գտնում աշխարհի ամե-  
նատարբեր անկյուններում։

Սրանից արդեն պետք ե պարզ լինի, թե վորպիսի ահա-  
փին նշանակություն ունի աշխարհի բոլոր մասերի համար  
բանվորական պետության գոյությունը Յեվրոպայի Արևել-  
քում։ Ամբողջ աշխարհի պրոլետարիատը տեսնում ե, վոր  
հնարավոր ե տապալել կապիտալիստների իշխանությունը և  
կյանքը կառուցել նոր ձևով։ Վերցնենք առայժմ միայն մի  
որինակ։ Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում ավելա-  
նում ե բանվորական որը։ Այնտեղ հեղափոխական փոթորիկ-  
ների ճնշման տակ մտցված 8-ժամյա բանվորական որը  
փոխարինվում ե 9 և 10-ժամյա որով։ Այդ կատարվում ե  
հարուստ և առաջավոր յերկրներում, իսկ աղքատ ու յե-  
տամաց յերկրներում — Զինաստանում, Հնդկաստանում և  
այլ ասիական ու աֆրիկական յերկրներում բանվորներին  
ստիպում են աշխատել որական 16 և նույնիսկ 18 ժամ։  
Իսկ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների  
Միության մեջ կիրառվում ե 7-ժամյա բանվորական որը։

Համաշխարհային պրոլետարիատը տեսնում ե այդպի-  
սով, վոր կապիտալիստական իրավակարգը խլում ե նրան-  
ցից նույնիսկ նվաճված իրավունքները, մինչդեռ խորհր-  
դային կարգերը բարձրացնում են նրանց դեպի վեր —  
աստիճան առ աստիճան։ Բազմաթիվ բանվորական պատգա-  
մավորությունները, վորոնք աշխարհի բոլոր ծայրերից այցի-  
յեն գալիս ԽՍՀՄ, տեսնում են, վոր այստեղ աշխատավոր-

ները առաջին տեղն են գրավում։ Ընարողական իրավունք,  
մասնակցություն պետական վարչության մեջ, գյուղա-  
տնտեսության կողեկտիվացում, արդյունաբերությանզար  
գացում, տուրքերի նպատակահարմար բաշխում, նպաստներ  
գործազուրկներին և անաշխատունակներին, բնակարանային  
գուրություններին գործ, ժողովրդական լուսավորություն —  
և կուրորտային գործ, ժողովրդական աշխատավոր  
ամեն ինչ յենթարկվում ե բանվորների և աշխատավոր  
գյուղացիների շահերին։ Լինելով ԽՍՀՄ-յան մեջ կամ լսե-  
լով իրենց ընկերներից Խորհրդային յերկրում կատարած  
ճանապարհորդության նկարագրությունը, Արևմուտքի և  
Արևելքի բանվորներն ու գյուղացիները տեսնում են այն  
անշափելի տարբերությունը, վոր կա իրենց յերկրի, որը  
կառավարում են կապիտալիստները, և Խորհրդային Միու-  
թյան միջև, ուր իշխանությունը աշխատավորներին ե պատ-  
կանում։ Արևմուտքի և Արևելքի կապիտալիստները ես իրենց  
կանում։ Կողմից աեսնում են հանձինս ԽՍՀՄ-յան մշտական սպառ-  
կողմից աեսնում են հանձինս իրենց հարատություններին ու  
նաև իրենց զորությանը և իրենց հարատություններին ու  
պատրաստ են միացնելու իրենց ուժերը վերջին ու վճռա-  
կան կովի համար, — կոիվ աշխատանքի ու կապիտալի  
միջն։

Վերջապես, Խորհրդային Միության միջազգային հսկա-  
յական նշանակությունը կայանում ե նրանում։ Վոր նրա  
հասարակակարգը հսկարավոր և դարձնում կոմունիստական  
ինտերնացիոնալի բացահայտ գոյությունը նրա սահման-  
ներում, կոմունիստական ինտերնացիոնալի, վորը համա-  
խմբում ե ամբողջ աշխարհի կոմունիստներին ընդհանուր  
նպատակի և ընդհանուր պայքարի համար, այլ և Պրոֆե-  
սիոնալ Միությունների կարմիր ինտերնացիոնալի և գյու-  
ղացիական հեղափոխական միությունների ինտերնացիո-  
նալի գոյությունը։ Ամբողջ աշխարհի բանվորները, գյու-  
ղացիները, հեղափոխականները ունեն այստեղ իրենց կեն-

տրոնական կազմակերպությունը, աշխատավորների, անձայրածիր բանակի մարտական շտաբը:

— Այո, յերեխաներ — ասաց ուսուցչուհին: — ՄԵՆՔ  
պետք ե սովորենք լավ կազմակերպել տնտեսական և ար-  
դյունաբերական կյանքի զանազան ճյուղերը, բարձր զար-  
գացման հասցնել կրթությունն ու կուլտուրան, ոգտագոր-  
ծել մեր յերկրի բնական հարստությունները և խնայող  
լինել նրանց նկատմամբ, վարպեսզի ամենակարճ ժամկե-  
տում հասնենք ՅԵՎՐՈՊԱՅԻՆ ու Ամերիկային և նրանցից  
առաջ անցնենք:

Զեմ կասկածում, վոր մենք դեռ ականատես կլինենք  
կապիտալիստական կարգերի անկմանը հին ու նոր աշխարհի  
բոլոր բուրժուական պետություններում և աշխատավոր-  
ների համաշխարհային յեղբայրության — սոցիալիզմի վերջ-  
նական հաղթանակին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Չինա աստվածութեան պատրաստում	4
Դպրոցականները պատրաստում ևն Չինաստանին նվիրված յերեկոյթ	7
Գյուղացիները	7
Չինական քաղաքը	21
Չինական Չիկադոն	27
Կուլի № 204	33
Յերեխաների վողբը	39
Փչացած որը	52
Յապոնիա:	60
«Չինուկներ» ընդլայնում ևն իրենց գործնելյությունը	63
Յերկրաշարժը Յապոնիայում	67
Յապոնական քաղաքը	76
Բանվոր դասակարգի դրությունը	83
«Խնձորներ»	88
Յապոնական զյուղացիները	99
«Դժոխքը» (յապոնական զբողի պատմվածքը)	112
Դպրոցականները Յապոնիայում	117
Ամփոփում	

## ԼՈՒՅԱ ՏԵՍԱՆ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Հայա Ակադեմիա, Գերմանիա, Ֆրանսիա

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԵԲՔԱՅԻ ՄԵՐ

ՀՀ Ազգային գրադարան



70 ԿՈՊ. 36233

Цена 70 коп.  
У. 14.



---

В. ПЕТРОВА  
ПО ЧУЖИМ СТРАНАМ  
КИТАЙ и ЯПОНИЯ

(перевод с русского)

---

На армянском языке

---

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10.